

կրկնվող զինված հարձակումներն ու ճնշումը, որ գործադրել են պարսկական բռնակալները 4—5-րդ և հետագա դարերում Հայաստանի ու նրա առանձին գավառների (Տարոն, Սյունիք) վրա՝ վերջիններս գրավելու, ժողովրդին հպատակ ու հարկատու դարձնելու, գավանափոխ անելու, լեզուն փոխելու նպատակով, մյուս կողմից՝ պաշտպանական ու ազատագրական այն համառ ու տեական հերոսամարտերը, որ մղել է հաջ ժողովուրդը իր հայրենանվեր ու աննկուն թագավորների ու գորավարների առաջնորդությամբ պարսից բռնակալների դեմ, հանուն իր անկախության և ազգային ինքնուրույնության ու ազատության:

Ըստ այդ ավանդությունների.

Սահակ Պարթևը կործանել է տալիս Ռշտունյաց գավառի գյուղերից մեկում գտնվող պարսկական ատրուշանը, որը հիմնել էին Հազկերտ արքայի ուղարկած մոգերը: Ատրուշանի մոխրից գոյացած բլուրի վրա հետագայում հիմնվում է Մոխրաբերդ անունով հայկական գյուղը (№ 521):

Պարսից Շապուհ Վարազ արքան շխարհամալով հաղթել հայոց Տիրան թագավորին, հաշտություն կնքելու պատրվակով Դալարիս գյուղում շղթայում և շիկացած ածուխով կուրացնել է տալիս նրա աչքերը: Դրանից հետո Դալարիսը կոչում են Ածուղ անունով (№ 530):

Շապուհ արքան հաշտություն կնքելու պատրվակով իր մոտ է հրավիրում հայոց Արշակ թագավորին Վասակ Սպարապետի հետ, և տեսնելով, որ երկուսն էլ անհողորդ են իրենց համոզմունքների մեջ, առաջինին շղթայակապ է անել տալիս և բանտարկում է Անհուշ բերդում, իսկ երկրորդին էլ մորթաղերձ անել տալով և մորթի մեջ խոտ լցնելով, ուղարկում է բանտարկված Արշակ թագավորի մոտ (№ № 747, 748):

Երբ Շապուհ արքան մեծ զորքով հարձակվում է Հայաստանի վրա, նրա դեմ դուրս է գալիս Վասակ Սպարապետի որդի Մուշեղ Մամիկոնյանը և մեծ ջարդ է տալիս պարսից զորքերին: Շապուհ արքան ձին նստած փախուստի է դիմում և մի կերպ ազատում է գլուխը: Մուշեղի զորքերը գրավում են պարսից արքայի բուրբ գանձերը, գերում նրա կանանց: Հոր վրեժն առնելու համար Մուշեղը ձերբակալում և մորթաղերձ է անում 600 հոգի պարսից ավագանուց, բայց և միաժամանակ մեծահոգաբար հետ է վերադարձնում Շապուհի կանանց: Ազդված Մուշեղի այդ քայլից, Շապուհ արքան իր զինու գավաթի վրա նկարել է

տալիս Մուշեղին սպիտակ ձիու վրա և ամեն անգամ, ուրախության ժամին, ձեռքն առնելով դավաթը, ասում է «ճերմակաձին գինի արբեցե՛»¹։

Երբ պարսիկները մեծ զորքով լցվում են Հայաստան, Մուշեղն իր փոքրաթիվ մարդկանցով, մի քանի գյուղերի նախիրների անասունների պոզերին բոցավառ ջահեր ամրացնելով, գիշերով հարձակվում է թըշնամու վրա և խուճապի է մատնում նրան։ Դրանից հետո Տարոնի գավառը Մուշեղի անունով կոչվում է Մուշ (№ 395)։

Խոյից դեպի հարավ, Սարմաստի սահմանի մոտ գտնվող բլուրների մասին ասում են, թե Վարդան Մամիկոնյանը այս բլուրների վրա կանգնած հրամաններ է արձակել Տղմուտ գետի ափին պարսից բանակների դեմ կովող իր զորքերին։ Բլուրները Կարմիր են կոչվում, որովհետև ներկված են Վարդանի քաջերի արյունով (№ 80)։

Այդ բլուրներից մեկի վրա կա մի մատուռ, որ կրում է Վարդան զորավար անունը։ Տեղացիների ասելով մատուռը կառուցվել է այն վայրում, ուր պարսիկների դեմ կովելիս ընկել է Վարդան Մամիկոնյանը (№ 658)։

Հին Նախիջևանի Աստապատ գյուղը այն վայրն է, ուր բերվել, պատանքվել (աստ է պատ) և թաղվել են Ավարայրի դաշտում ընկած Վարդան զորավարի ու նրա զինվորների դիակները (№ 435)։

Կոտու շրջանի Թեղուտ գյուղի հանդամասում գտնվող Նահատակի խաչքարի մասին ասում են, թե այն կառուցված է Վարդան Մամիկոնյանի հիշատակին, որովհետև նա ժամանակին իջևանել է այստեղ, երբ իր զորքով օգնության է գնացել աղվաններին՝ պարսիկների դեմ նրանց մղած պատերազմում (№ 843)։

Վարդան Մամիկոնյանը ժողովելով իր զորքը, գնում է Մասիս սարի փեշը Կանգ-Թեմուրի դեմ պատերազմելու։ Երեք օր կովելուց հետո, նա կոտորում է Թեմուրի զորքը։ Բայց հանկարծ ամպում է և աղեղի կամարը կապվում է երկնքում։ Հրեշտակը հրամայում է Վարդանին վերջ տալ արյունահեղությանը։ Վարդանը սուրբ տեղն է դնում... Հետո նա պատահում է մի մեծ քարի, որը փակում է նրա ճանապարհը։ Սուրբ դուրս քաշելով Վարդանը խփում է քարին, քարափը բաժանվում է նրկու մասի և ճանապարհը բացվում է նրա առաջ...²։

¹ Փ. Բուզանդ, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 282—284։

² Տե՛ս «Մշակ», 1881, № 52։

Շահ-Աբասն իր ծագյալ շրջադասություններից մեկի ժամանակ հանդիպում է մի հայ գեղջկուհու և խնդրում է նրան ի սեր շահի մի հավ վաճառել իրեն: Գեղջկուհին շիմանալով, թե ով է իր հեա խոսողը, հայտնում է, որ շահի սերը չի կարող իրեն կաշառել, քանի որ նեղությունից, զրկանքից և հայրենի երկրից տեղահանվելուց բացի, իրենք նրանից ոչ մի լավ բան չեն տեսել (№ 760Բ):

Շահ-Աբասը մի անգամ տեսնելով դաշտային աշխատանքից տուն դարձող երկայնամորուս հայ քահանային, ստիպում է նրան հավատափոխ լինել: Քահանան հրաժարվում է կատարել շահի կամքը: Գաղաղած Շահ-Աբասը ձեռքին եղած կացնի հարվածով գետին է տապալում նրան և կարգադրում է անմիջապես թլփուտել¹:

Երբ Շահ-Աբասը գալիս է Տաթև, մարդ է ուղարկում, որ գնան Մեծ անապատից իր համար կույս բերեն: Շահի համար ընտրված կույսը մանապարհին ինքն իրեն նետում է ձորը և տեղն ու տեղը քար է դառնում (№ 147):

Շահ-Աբասի կողմից տեղահան եղած և գերեվարված հայերը, երբ հասնում են Թավրիզի մոտերը, հրաժարվում են այլևս առաջ շարժվել և ասում են. «Օգու՛մ չենք»: Մնալով այդ վայրում նրանք իրենց համար գյուղ են հիմնում, որը և կոչվում է Օղումձի անունով (№ 502), և այլն:

Պարսից բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած դարավոր պատերազմների մասին պատմող ավանդությունների զգալի մասը պատմական համապատասխան ատաղձ ունեցող հուշապատումներ են: Նրանց մեջ հանդես եկող Շապուհ Վարազի կամ Շապուհ թագավորի նախատիպը ոչ այլ ոք է, բայց եթե 4-րդ դարի պարսից Սասանյան հարստության ներկայացուցիչ Շապուհ 2-րդը, որը հայ մատենագրության մեջ հիշատակվում է իբրև Շապուհ Երկայնակյաց և հայտնի է Հայաստանի նկատմամբ իր ունեցած աշխարհակալական ոտնձգություններով:

Փալստոս Բուզանդն իր Պատմության մեջ բավական մանրամասն նկարագրել է այն հալածանքն ու արյունահեղությունը, ավերն ու ավարը, որ կատարվել է մեր երկրում նրա օրոք: Բերենք միայն մի քանի դրվագ այդ նկարագրություններից. «Յայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ ժողովեաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրև գաւազ առ ափն ծովու և փիղս բազումս, զի ոչ գոյր նոցա թիւ... Եւ հրաման տայր թագաւորն զօրացն ընդ երիս տեղիս խաղալ, մտանել, արշաւել

¹ Առա՛վել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 124:

յաշխարհն Հայոց: ...Ապա լցան, սփռեցան, ծաւալեցան ընդ ամենայն երկիրն Հայոց, աւար առնուլ, քանդել, աւերել զերկիրն ամենայն Հայոց աշխարհին: ...Այրացաւեր առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սուսերի իւրեանց, զկայանս և զմանկտի հանէին ընդ ցից սալլից ...Եւ զարանց բազմութիւնս տային ի կոխումն փղաց ...գերութիւն վարէին և զբազում ամուրս քանդէին և զբերդս աւերէին զամուրս...»¹:

Հայոց Տիրան թագաւորի աշքերը կուրացնելու, Արշակ թագաւորին զավադրաբար բանտարկել տալու վիպական պատումների մեջ անդրադարձում են գտել ոչ միայն Շապուհ 2-րդի, այլև սրա նախորդ ու հետնորդ պարսից մի քանի բռնակալների (Շապուհ 1-ին, Խոսրով, Հագ-կերտ, Պերոզ) աշխարհակալական նկրտումներն ու գործած շարիքները, որոնք հար և նման են եղել Շապուհ 2-րդի արարքներին:

Պատմական անձնավորութիւնն է հայկական ավանդութիւնների մեջ հանդես եկող Մուշեղը: Դա ոչ այլ ոք է, քան Մամիկոնյան համանուն նշանավոր գորավարը, Վասակ Սպարապետի հարազատ որդին: Նրա կատարած քաջագործութիւնների նկարագրութիւնների մեջ արձագանք են գտել համապատասխան իրական-պատմական դեպքեր ու դեմքեր, կապված պարսից նվաճողների դեմ 4-րդ դարում հայերի մղած հայտնի ազատագրական պատերազմների և Մամիկոնյանների ապրած վայրերի հետ: Անցնելով տարիների ու դարերի բովով և մշակվելով ժողովրդի ստեղծագործական երեակայութեան մեջ, բուն պատմական դեպքերն ու դեմքերն այստեղ միախառնվել են վիպական մոտիվների հետ, հանդես եկել ժամանակագրական ու այլ կարգի խախտումներով և շփոթութիւններով: Բնորոշ է այս տեսակետից նախիրի անասունների պողերին ամբացված բոցավառ ջահերով թշնամու դեմ Մուշեղի կատարած զիշերային գրոհի ավանդութիւնը, որը Հովհան Մամիկոնյանի Պատմութեան մեջ պատմված է Մուշեղի թոռան՝ պտպի պես քաջ ու հնարամիտ Սմբատ զորավարի մասին, և որոշ փոփոխութիւններով, ժողովրդի կողմից վերագրվել է Մուշեղին²:

¹ Փ. Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913, էջ 212, 219, 228 և այլն:

² Ըստ Հովհան Մամիկոնյանի՝ Պարսից Վախթանգ զորավարը 20.000 զորքով գալիս է Հայաստան: Նա առաջարկում է Սմբատին հնազանդվել և հարկ վճարել իրեն: Սմբատը փոքրաթիվ զորքով կովի է դուրս գալիս Վախթանգի դեմ: Պարսիկները շրջապատում են հայերին: Սմբատը ուզում է զիշերով մարտի դուրս գալ նրանց դեմ: Քահանաները խորհուրդ չեն տալիս: Սակայն Սմբատը, շտեղծ նրանց, բոցավառ ջահը ձեռքին հարձակվում է թշնամու վրա: Լույսը կուրացնում է պարսից զինվորների աշքերը:

Ե՛վ Մուշեղի, և՛ Սմբատի պատմությունների մեջ պարսից զորքերին խուճապահար անողը գիշերվա լույսն է, երկու դեպքում էլ պարսիկների ջախջախման վայրերը կոչում են կատարված դեպքի տեղի անունով (Մուշեղի պատմության մեջ՝ Ցխաու—ցխալ, սպանվել, սպառվել, ոչընչանալ, Սմբատի պատմության մեջ՝ Թիլ—հողաբլուր, հողակույտ)։ Տարբերությունն այն է, որ առաջին դեպքում Մուշեղը բոցավառ պողերով նախիրն է բաց թողնում պարսիկների վրա, երկրորդ դեպքում՝ Սմբատը ինքն է ջահը ձեռքին հարձակվում թշնամու վրա։

Պատմական դեմք է հայկական ավանդությունների մեջ հանդես եկող Վարդան Զորավարը։ Դա Մամիկոնյան քաջարի տոհմի ամենակարևորուն ներկայացուցիչներից մեկն է, նույն ինքը Վարդան Մամիկոնյանը, որին, իբրև իր սիրեցյալ հերոսի, հայ ժողովուրդը մկրտել է Կարմիր Վարդան խոսուն անունով։ Վարդան Մամիկոնյանին նվիրված ավանդությունների մեջ կես իրական, կես վիպական գույներով պատկերված են մահու և կենաց այն հերոսամարտերը, որ մղել է հայ ժողովուրդը 5-րդ և 6-րդ դարերում հանուն իր անկախության ու ազատության, Հայաստանը վավթելու և նրա ժողովրդին կողոպտելու, ստրկացնելու և դավանափոխ անելու փորձեր անող պարսից նվաճողների դեմ։

Այդ հերոսամարտերից առաջինը 451 թվականին պարսից լծի դեմ հայ ժողովրդի բարձրացրած զինված մեծ ապստամբությունն է և նույն այդ թվականին Պարսկաստանի սահմանամերձ Արտաղ գավառի Ավարայր գյուղի դաշտում, Տղմուտ գետի մոտ հայ-պարսկական զորքերի միջև տեղի ունեցած այն արյունահեղ պատերազմը, որը նրա զխավոր հերոս Վարդան Մամիկոնյանի անունով հայտնի է իբրև Վարդանանց պատերազմ։

Ճիշտ է, այդ պատերազմի ժամանակ, չնայած իր ցույց տված ուժեղ դիմադրությանը, հայ ժողովուրդը ի վիճակի չեղավ պարտության մատնելու թշնամու գերակշիռ ուժերին և մարտի դաշտում հերոսի մահով ընկան թե՛ ինքը Վարդան Մամիկոնյանը և թե՛ նրա շատ զինակիցներն ու

նրանք կարծում են, թե այդ լույսը մարդու մազերից է ճառագում։ Խուճապահար փախուստի են մասնավում։ Միության մեջ իրար շփոթելով, պարսիկներն սկսում են կոտորել իրենց առաջապահ զինվորներին։ Տեսնելով այդ, Սմբատը քաջալերում է իր մարտիկներին և նրանց գլուխն անցած շարժում թշնամուն։ Ավանդությունն ասում է, «նու այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղափ արեան ելանէին, որ և Թիլ կոչեցաւ անուն տեղոյն այնօրիկ»։

Ե՛վ Մուշեղի, և՛ Սմբատի պատմությունների մեջ պարսից զորքերին խուճապահար անողը գիշերվա լույսն է. երկու դեպքում էլ պարսիկների ջախջախման վայրերը կոչում են կատարված գեպրի տեղի անունով (Մուշեղի պատմության մեջ՝ Ցխաու—ցխալ, սպանվել, սպառվել, ոչընչանալ. Սմբատի պատմության մեջ՝ Թիլ—հողաբլուր, հողակույտ): Տարբերությունն այն է, որ առաջին դեպքում Մուշեղը բոցավառ պողերով նախիրն է բաց թողնում պարսիկների վրա, երկրորդ դեպքում՝ Սմբատը ինքն է ջահը ձեռքին հարձակվում թշնամու վրա:

Պատմական գեմք է հայկական ավանդությունների մեջ հանդես եկող Վարդան Զորավարը: Դա Մամիկոնյան քաջարի տոհմի ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկն է, նույն ինքը Վարդան Մամիկոնյանը, որին, իբրև իր սիրեցյալ հերոսի, հայ ժողովուրդը մկրտել է Կարմիր Վարդան խոստեն անունով: Վարդան Մամիկոնյանին նվիրված ավանդությունների մեջ կես իրական, կես վիպական գույներով պատկերված են մահու և կենաց այն հերոսամարտերը, որ մղել է հայ ժողովուրդը 5-րդ և 6-րդ դարերում հանուն իր անկախության ու ազատության, Հայաստանը դավթելու և նրա ժողովրդին կողոպտելու, ստրկացնելու և դավանափոխ անելու փորձեր անող պարսից նվաճողների դեմ:

Այդ հերոսամարտերից առաջինը 451 թվականին պարսից լծի դեմ հայ ժողովրդի բարձրացրած զինված մեծ ապստամբությունն է և նույն այդ թվականին Պարսկաստանի սահմանամերձ Արտազ գավառի Ավարայր գյուղի դաշտում, Տղմուտ գետի մոտ հայ-պարսկական զորքերի միջև տեղի ունեցած այն արյունահեղ պատերազմը, որը նրա զխավոր հերոս Վարդան Մամիկոնյանի անունով հայտնի է իբրև Վարդանանց պատերազմ:

Ճիշտ է, այդ պատերազմի ժամանակ, չնայած իր ցույց տված ուժեղ զիմադրությանը, հայ ժողովուրդը ի վիճակի չեղավ պարտության մատնելու թշնամու գերակշիռ ուժերին և մարտի դաշտում հերոսի մահով ընկան թե՛ ինքը Վարդան Մամիկոնյանը և թե՛ նրա շատ զինակիցներն ու

նրանք կարծում են, թե այդ լույսը մարդու մազերից է ճառագում: Խուճապահար փախուստի են մատնվում: Մթության մեջ իրար չընկելով, պարսիկներն սկսում են կոտորել իրենց առաջապահ զինվորներին: Տեսնելով այդ, Սմբատը քաջալերում է իր մարտիկներին և նրանց գլուխն անցած ջարդում թշնամուն: Ավանդությունն ասում է. «Եւ այնչափ կոտորեցին զնոսա, մինչև հեղեղատք արեան ելանէին, որ և Թիլ կոչեցաւ անունս ակեղոյն այնօրիկ»:

գինվորները, բայց հայերի ապստամբությունը՝ քաղաքական ու բարոյական մեծ դաս հանդիսացավ պարսից բռնակալների համար:

Երկրորդ հերոսամարտը 571 թ. հայտնի ապստամբությունն էր, տեղի ունեցած պարսից խոսրով Անուշիրվան թագավորի ժամանակ: Մի ապստամբություն, որի կազմակերպիչն ու ղեկավարը դարձյալ Մամիկոնյան տոհմից էր, նույնպես Վարդան անունով: Առաջինի համեմատությամբ այս երկրորդ ապստամբության առանձնահատկությունն այն է, որ այն ավարտվեց հայերի փախույն հաղթանակով: Երկրորդ կամ կրտսեր Վարդան Մամիկոնյանը 10.000-անոց իր բանակով գրավեց Դվինը և փախուստի մատնեց պարսից մարդպանին: Ապստամբությունից հետո Հայաստանի մեծ մասը անշատվեց Պարսկաստանից և ձեռք բերեց անկախություն:

Իբրև հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցող պատերազմներ, հիշյալ հերոսամարտերը, ինչպես նշվեց վերևում, մեծ տպավորություն են գործել թե ժամանակակիցների, և թե հաջորդ սերունդների վրա, առատ նյութ տվել բազմաթիվ ժողովրդական ավանդությունների ու գրույցների համար:

Վերջիններիս մեջ 451 և 571 թվերի պատմական դեպքերը հաճախ խառնվել են իրար՝ այդ դեպքերի ունեցած մի շարք ընդհանրությունների պատճառով: Խառնվել ու միաձուլվել են իրար նաև հիշյալ դեպքերի դրվագավոր գործող անձինք՝ երկու Վարդաններն՝ իրենց անվան ու կատարած գերի նմանության պատճառով: Առաջին կամ Կարմիր Վարդանին փառաբանող դրամատիկ բնույթի պատումները հյուսվել են կրտսեր կամ երկրորդ Վարդանի հաղթական ապստամբությունը վեր հանող ժողովրդական պատումներին, լավատեսական ու հերոսական շունչ հաղորդելով առաջիններին:

Գալով ժողովրդական այն ավանդությանը, որտեղ Վարդանը պարսիկների փոխարեն կռվում է Լենկ-Թեմուրի հետ և հաղթում նրան, ապա դա էլ տիպիկ վիպական մի անաբրոնիզմ լինելով հանդերձ, միաժամանակ ունի և իր բանական ու տրամաբանական պատճառներն ու բացատրությունը:

Լենկ-Թեմուրի բարբարոս արշավանքների ժամանակ ապրելով ծանր ու տազնապալի վիճակ և իրականության մեջ դժվարանալով դիմագրավել վտանգավոր ու կատաղի թշնամուն, ժողովուրդն իր ավանդությունների մեջ նրա դեմ դուրս է բերել ազատագրական մարտերի մեջ փորձ-

ված իր հին, սիրելի ու հերոսական վարդան Զորավարին, նրա միջոցով չափաչափել ասլով կենդ-Քեմուրին:

Պատմական դեմք է հայկական ավանդույթունների մեջ հանդես եկող Շահ-Աբաս թագավորը: Դա Պարսկաստանի համանուն հայտնի բրնակալ արքան է, որը ապրել ու գործել է 17-րդ դարում և որը Պարսկաստանի ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերի համար հայ ժողովրդի հաշվին իր վարած կործանարար քաղաքականությունը (հայերի բռնի տեղահանությունը դեպի Պարսկաստան, նրանց անխնա հարստահարությունը, հավատափոխ անելու փորձերը և այլն) պակաս բացասական դեր չի խաղացել Հայաստանի ճակատագրի մեջ, քան իր հեռավոր ու մոտավոր տիրահոլակ մյուս նախորդները (Շապուհ, Հազկերտ և այլն):

Ահա թե ինչ է պատմում դեպքերին ահանատես հայ պատմիչ Առաքել Դավրիժեցին 1604 թվին Շահ-Աբասի կազմակերպած՝ Արարատյան դաշտի և Հայաստանի մյուս վայրերի շուրջ 350.000 հայություն բռնի տեղահանության վերաբերյալ. «Եւ զօրապետացն՝ չեա ընդունելոյ դաշտայիսի զաշխարհակործան և զսաստիկ հրաման ի թագաւորէն, ...իբրև զչոլիրս բազմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ՝ բռնութեամբ վարեալ՝ ածեալ, բերեալ հասուցին ի դաւանն Արարատու, և զլայնանիսս դաշտ նորա լցին ծագէ ի ծագ ...Եւ այնուհետև ...կարի սաստիկ տաղնապաւ նեղէին զժողովուրդն, զսմանս մահու հարուածով զանելով, և զոմանց զունչս զգլուխն կտրեալ ի ձող ցցէին... զի փութանակի անցցեն զգեան... Իսկ ողորմելի ժողովրդեանն հայէին յառաջ զանհուն գեան տեսանէին իբրև գծով՝ որ խեղդէր, և յետուսս զսուրն Պարսից՝ որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գտանիւր. և առ հասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յաշաց հեղեալ առնէին երկրորդ Երասխ... Եւ անմարդարնակ արար միահաղոյն զամենալի և զյուռթի աշխարհս Հայոց: Վասն զի ի քշելն զերկիրս՝ ոչ թէ զմի կամ զերկու դաւառս վարեաց ի Պարսկաստուն, այլ զբազումս: Եւ սկսեալ ի սահմանացն նախշուանու և անցեալ ընդ Եղեգնաձոր, առ եզերք Գեղամայ, և Լօռուոյ, և զՀամզաշիման դաւառն, զԱպարան, զՇարապխանէն, զՇիրակուան, զԶարիշատ, և մասնինչ ի գեղօրէիցն Կարսա, և զձօրն Կաղզվանու բնաւին, և բովանդակ զերկիրն Ալաշկերտու, և զգեղօրայսն Մակուայ, և զերկիրն Աղբակու, և զՍամաստու, և զԽոյա, և զՈրմի, և որ ինչ պանդուխտք և դարիպականք մնացեալք էին ի քաղաքն և ի գեղօրայսն Քարվիզու, զդաշտն Արարատու բովանդակ, և զԵրեան քաղաք, զերկիրն Ղրիբուլաղա, զԾաղկունաց ձոր, զՓառնու ձորն, զՈւրծաձորն: Եւ յառաջ քան զայս՝ զգաւառն Կարնոյ, և

զՔասենու, և զԽնուսայ, և զՄանազկերտու, և զԱրծկէոյ, և զԱրճշոյ, և զԲերկրու, և զՎանա, աւարով և զերութեամբ բերեալ էին յԵրևան և ընդ սոսա քշեցին և տարան»¹:

Խնդրո առարկա հայկական ավանդութիւնների մեջ, որոնք հիմնականում պատմվել են Պարսկաստանի հայաբնակ շրջաններում, ինչպես նաև Հայաստանի այն գավառներում ու վայրերում, որոնք մոտ ու հարևան են եղել Պարսկաստանին, ճշմարտացի անդրադարձում են գտել այն ծանր հետեանքները, որ ունեցել է Շահ-Աբասի վերոհիշյալ քաղաքականութիւնը հայ ժողովրդի ֆիզիկական, հոգեկան և նյութա-տնտեսական կյանքի համար:

21. Ուլիանոս թագավորի, Վասիլ գորավարի, Օհան Օձնեցու, Պետրոս կաթողիկոսի և այլոց ավանդութիւնները:—Այս ավանդութիւնների մեջ բանահիշուսական համապատասխան անդրադարձում են գտել մի կողմից այն հայահալած քաղաքականութիւնը և տեսակ-տեսակ դավերն ու խարդավանքները, որ պարսից բռնակալներին գուզընթաց, կիրառել են Հայաստանի նկատմամբ բյուզանդական կամ Արեւելա-հոռմեական նենգ ու տմարդի կայսրերն ու նրանց կամակատար պաշտոնյաները 5—7-րդ և հետագա դարերում, մյուս կողմից մահու և կենաց այն անձնագոհ ու հերոսական պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը իր հայրենանվեր թագավորների և քաջարի գորավարների զխավորութեամբ այդ կայսրերի ու վերջիններիս կամակատար պաշտոնյաների դեմ, հանուն իր քաղաքական, իրավական, տնտեսական, կուլտուրական և կրոնական ազատութեան ու անկախութեան:

Նշենք մի քանի օրինակ.

Հունաց Ուլիանոս թագավորը նեղվելով իր թշնամի պարսից (զզլբաշ) թագավորից, դիմում է հայոց թագավորին՝ օգնութիւն խնդրելով նրանից: Սա ուղարկում է իր զորքերը Սարգիս անունով գորավարի զխավորութեամբ, որոնք մեծ քաջութիւններ գործելով, հալածում են զզլբաշներին: Հունաց թագավորը վախենալով, որ Սարգիսը մի օր էլ իրեն կարող է նեղել, ուզում է դավադրաբար սպանել տալ նրան: Մի հեղինակի այդ մասին զգուշացնում է Սարգսին, որը ձիու գավակն տանելով իր ազատարարին, նրա հետ Հունաստանից գալիս է Հայաստան (№ 8099):

Հունաց Վասիլ գորավարը մեծ զորքով հարձակվելով Հայաստանի վրա գրավում է այն: Թհան Օձնեցին սրտովելու համար Վասիլին՝ մի սաս-

¹ Առաւել Գալիփեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1884, էջ 28—32 և այլն:

տիկ ցավ է գցում նրա մարմնի մեջ: Վասիլին հայանում են, որ իրեն կարող է բուժել միայն Օձնեցին: Գոռոզ Վասիլը ստիպված է լինում դիմելու նրա օգնությանը: Օձնեցին մի գրված թուղթ է տալիս նրան և պատվիրում է, որ նա ջրով կուլ տա այդ թուղթը: Վասիլը կատարում է Օձնեցու պատվերը և բուժվում է ցավից: Ի հատուցումն իր ապաքինման, Վասիլը կարգադրում է գորքերին հեռանալ Հայաստանից, իսկ ինքն էլ առանձնանալով հայկական մի վանքում (Ս. Նշան), սկսում է ճգնել (№ 281):

Հույները անասելի նեղություններ են պատճառում Պոլսում ապրող հայերին: Մի այրի հայ կին հիվանդ երեխայի համար հաց է խնդրում հույն հարևաններից: Սրանք մի կտոր հաց տալու համար առաջարկում են նրան կենակցել իրենց հետ: Կինը գանգատվում է Օձնեցուն: Սա հրաշագործությամբ հաց է հանում դատարկ պահարանից և բավարարում է հիվանդ երեխայի մոր խնդիրքը (№ 773Բ):

Տրապիզոնում նստող հոռոմոց թագավորի մոտ գովաբանում են մի հայ երիտասարդի իբրև հիանալի լողորդի: Թագավորն առաջարկում է հայ երիտասարդին իր աղջկանը, պայմանով, որ նա լողալով հասնի մինչև Պոլիս: Երիտասարդը կատարում է հոռոմոց թագավորի պայմանը, սակայն վերջինս դժուար է իր խոստումը և նենգորեն խեղդել է տալիս նրան ծովում (№ 762):

Հոռոմները դավադրաբար սպանում են հայոց Գագիկ թագավորին: Ռուբեն անունով մի երիտասարդ ուխտում է վրիժառու լինել հոռոմներից իրենց թագավորի սպանության համար: Երբ նա հասակ է առնում և գալիս է Կիլիկիայի կողմերը, այստեղ հանդիպում է մի հույն եպիսկոպոսի: Հավատարիմ իր ուխտին, նա ճաշի ժամանակ, հարմար առիթ որսալով, խեղդամահ է անում հույն եպիսկոպոսին և կամաց-կամաց տիրելով Կիլիկիային, այստեղ հիմնում է իր իշխանությունը, որը նրա անունով կոչվում է Ռուբինյանց իշխանություն (№ 864):

Հայ քաջ զորավար Սմբատ Բագրատունին, հույների դեմ կովելիս, մասնությամբ շղթայակապ է արվում և բերվում է Բյուզանդիա: Պոլսի պալատական ծերակույտը վճռում է նրան մերկանդամ նետել ի կեր կրկեսի գազաններին: Սակայն իր ամբակուռ բազուկներով Սմբատը սպանում է արջին, խեղում է ցուլին և խեղդամահ է անում կատաղի առյուծին: Կրկեսի բյուրավոր հանդիսականների պահանջով հայ դյուցազունին ներում է շնորհվում¹:

¹ Սերեոս, Պատմութիւն, Երևան, 1939, էջ 55 և հաջ.:

Տրայիզոն քաղաքում ջրի օրհնության օրը հույները հայոց Պետրոս հայրապետին իր ժողովրդի հետ կանգնեցնում են ջրի հոսանքի վերևում, իսկ իրենք կանգնում են ներքևում, որպեսզի Պետրոսի օրհնությունը խափանվի: Նրանք առաջուց սովորեցրել էին մի սպիտակ աղավնու, որ սա հույների օրհնության ժամանակ գա, իջնի ջրի մեջ և հետո նորից վերանա՝ իբրև սուրբ հոգի: Սակայն Պետրոս հայրապետի ջերմհոանդ աղոթքով դեռի ջուրը դեպի վեր է բարձրանում, իսկ երբ հույների վարժեցրած աղավնին գալիս է ջրին խառնվելու, հանկարծ հայոց լեռներից մի արծիվ է հայտնվում և վերցնելով աղավնուն, թռչում է: Այս հրաշքները տեսնելով հույները ամոթով են մնում և ակամա սկսում են գովել հայոց հավատը: Այդ օրվանից Պետրոս հայրապետին կոչում են Պետրոս Գետադարձ (№ 816), և այլն:

Բյուզանդական բռնակալների դեմ հայ ժողովրդի մղած ազատադրական պայքարի շուրջը հյուսված ավանդությունները պատմական և վիպատոասպելական մոտիվների յուրահատուկ խառնուրդ-համաձուլվածքներ են:

Պատմական որոշակի հիմքեր ունի այն պատմությունը, ըստ որի հունաց Ուլիանոս թագավորը փորձում է դավադրաբար շարքից հանել իրեն օգնության հասած հայոց քաջարի Սարգիս գորավարին, վերջինից Հունաստանին սպասվող հնարավոր վտանգը կանխելու համար: Դա մեր կարծիքով, յուրահատուկ վիպական արձագանքն է Բյուզանդական Հուստինիանոս կայսեր կողմից 529 թվականին արձակված այն հատուկ հրովարտակի, որով նա միտում էր վերացնել հայ նախարարների սեփական դորք ունենալու ժառանգական իրավունքը, դրանով իսկ նպատակ ունենալով ոչնչացնելու նրանց սազմական ինքնուրույնությունը: Ինչ վերաբերում է Հուստինիանոս անվան Ուլիանոսով փոխարինվելու փաստին, ապա այդ շփոթության պատճառը հավանորեն այն վատ համբավն է, որ ունեցել են հիշյալ երկու պատմական դեմքերը հայ ժողովրդի մտաշխարհում¹, մասամբ էլ թերևս նրանց անուններում առկա հնչյունական որոշ ընդհանրությունները (Հուստինիանոս — Ուլիանոս):

¹ Ուլիանոսը 4-րդ դարի հռոմեացի այն պատմական դեմքն է, որը հեթանոսությունը վերականգնելու փորձերի համար ըրիստոնեական եկեղեցու կողմից արժանացել է «Ուրացող» մականվանը և որի հիշողությունը իբրև վատահամբավ մի անձնավորության մինչև անցյալ դարի վերջերը պահպանվել էր հայ ժողովրդի մեջ (հատկապես ձարձր Հայքի բնակիչների մոտ) «Չար Ուլիանոս» ձևով:

Պատմական հիմքի վրա է խարսխված հունաց Վասիլ զորավարի մեծ զորքով Հայաստանի վրա հարձակվելու և Օհան Օձնեցու կողմից հրաշագործություններ ևրան խեղճացնելու ու ծունկի բերելու պատմությունը: Դա ամենայն հավանականություններ աչլափոխված արձագանքն է հունաց համանուն կայսեր (Վասիլ Բ) հայերի նկատմամբ կիրառած ռազմական ագրեսիայի, որի հետևանքով 1022, 1045 թթ. նրան հաջողվում է մեկը մյուսի ետևից զավթելու Հայաստանի մի շարք գավառները (Վասպուրական, Տայք, Վանանդ, Շիրակ):

Պատմական հիմքեր ունի հոռոմների կողմից զավաղաբար Հայոց Գագիկ թագավորին սպանելու և Ռուբեն անունով մի հայ երիտասարդի՝ Գագիկի վրեժն առնելու նպատակով Կիլիկիայում գտնվող հույն եպիսկոպոսին խեղդամահ անելու պատմությունը: Դա անկասկած մի հիշողություն է Գագիկ Բ. թագավորի մերձավորներից Կիլիկիայի հայոց Ռուբեն Գ. թագավորի բյուզանդացիների դեմ մղած պայքարի, որի հետևանքով նրան հաջողվում է բյուզանդացիներին դուրս մղել Լեոնային Կիլիկիայի մի մասից և 1080 թ. այնտեղ հռչակել անկախ իշխանություն:

Պատմական համապատասխան ատաղձ ունի հույների դեմ Սմբատ Բագրատունու վարած կռիվի և շղթայակապ վիճակում Բյուզանդիա բերվելու պատմությունը: Դա ոչ այլ ինչ է, բայց եթե բանահյուսական հիշողությունը համանուն հայ նշանավոր զորավարի ու քաղաքական գործչի կողմից բյուզանդական հայակործան քաղաքականության դեմ գլխավորած հայանի զինված ապստամբության: Մի ապստամբություն, որը տեղի է ունեցել 6-րդ դարի վերջերին, երբ Մորիկ կայսեր կարգադրությամբ նա իր հեծյալ գնդով ուղարկվում է Թրակիա՝ Բալկանյան թերակղզում ավարների դեմ կռվելու համար և երբ մասնության ու դավաճանության հետևանքով, ապստամբության մյուս յոթ ղեկավարների հետ, նրան ևս ձերբակալում և շղթայակապ վիճակում բերում են Բյուզանդիա:

Պատմական որոշակի ատաղձից զուրկ չէ նաև Գետադարձ կոչված Պետրոս կաթողիկոսի մասին արված պատմությունը: Վերջինիս մեջ աչլափոխված ձևով արձագանք են գտել կրոնական այն հալածանքները, որ կիրառվել է բյուզանդական կայսրերի կողմից հայերի նկատմամբ (հայ եկեղեցու մասնատումը Դվինի Մայր կաթողիկոսարանի և հայ քաղկեդոնական կաթողիկոսական աթոռների միջև և այլն):

Քննության առարկա ավանդությունների մեջ վերաբրտադրված իրական-պատմական դեպքերի ու դեմքերի վերահիշյալ հիշողությունները,

ինչպես ուրիշ դեպքերում, այնպես էլ այստեղ, սերտորեն կապված ու զուգորդված են ավանդախոսների ստեղծագործական երևակայության ծնունդ դանազան արտասովոր ու հնարածին պատմությունների հետ: Այդ պատմությունների մեջ հայազգի գործիչներն ու հերոսները հանդես են գալիս իբրև գերբնական շնորհքի և ուժի տեր անձնավորություններ: Իրենց այդ հատկություններով նրանք հակադրվում և հաճախ հաղթում են թվով անհամեմատ ավելի շատ ու առավել զորեղ թշնամիներին: Ստեղծելով արտասովոր ու հնարածին այդ պատմությունները, հայ ավանդախոսները նպատակ են ունեցել հոգեպես ու բարոյապես գոտեպնդել իրենց ունկնդիրներին, թուլացնել ու չեզոքացնել այն ծանր ու ճնշիչ տպավորությունը, որ կարող էին թողնել նրանց վրա բյուզանդական խարդախ ու նենդ բռնակալների կողմից Հայաստանում կատարված արյունահեղությունների ու ավերի ճշմարտացի պատմությունները: Այսպես.

Մեծ զորքով Հայաստան մտած հունաց Վասիլ զորավարին իր հրաշագործ ուժով շարաշար պատժում է հայոց Օհան Օձնեցի կաթողիկոսը: Նա նախ մի սոսկալի ցավ է գցում Վասիլի մարմինը և ապա մի գրած թուղթ տալով նրան առաջարկում է ջրով խմել: Վասիլը կատարում է Օձնեցու առաջարկը և անմիջապես առողջանում է: Ի հատուցումն իր բուժման Վասիլը Հայաստանից դուրս է բերում իր զորքերը:

Մի ուրիշ անգամ նույն Օձնեցի կաթողիկոսը հրաշագործությամբ հաց է դնում դատարկ պահարանը և այն տալիս է այլի հայ կնոջը հիվանդ երեխային տանելու համար, որին անգթորեն մերժել էին հաց տալ նրա հույն հարևանները:

Քաջարի հայ զորավար Սմբատ Բագրատունին մերկ բազուկներով հրաշքով ոչնչացնում է կրկեսում գտնվող արջին, ցուլին և առյուծին, որոնց ի կեր էին նետել նրան Հունական ծերակույտի որոշմամբ:

Պետրոս կաթողիկոսի հրաշագործությամբ գետը փոխում է իր ընթացքը, իսկ Հայաստանի լեռներից եկած արծիվն էլ կուլ է տալիս հայերի դեմ սարքված դավադրության համար հույների կողմից բաց թողնված վարժեցված աղավնուն և այլն:

22. Բաղդատի խալիֆի, Սասունցի Դավթի, Աշոտ Երկաթի և այլոց ավանդությունները:—Այս ավանդությունները խոստեն վավերականներ են ռազմական այն գործողությունների, որ իրականացրել է արաբական խալիֆաթը 7—10-րդ դարերում Արևելյան և Արևմտյան Հայաստանը նվաճելու և այն իրեն հպատակ ու հարկատու երկիր դարձնելու նպատ-

տակով, և պաշտպանական ու աղատագրական այն կոիվների և դինված ապստամբությունների, որ մղել ու իրականացրել է հայ ժողովուրդը իր անվանի գորավարների և շարքային քաջորդիների գլխավորութեամբ՝ խալիֆաթի բազմամբոխ բանակների և նրա կողմից պարբերաբար Հայաստան գործուղվող բազմաթիվ ոստիկանների ու հարկահավաքների դեմ:

Ըստ այդ ավանդությունների.

Վանա լճի ափին, Խլաթի հին քաղաքատեղի մոտ գտնվող գերեզմանները կոչվում են Սասունցի Դավթի թշնամիների գերեզմաններ: Այդտեղ թաղված են արաբների դեմ Դավթի մղած կովի ժամանակ սպանված զինվորների զիակները (№ 738):

Հալեպ քաղաքի մոտ բարձր բլրի վրա գտնվող բերդը կոչվում է Սասունցի Դավթի բերդ: Այն շինել է ինքը Դավիթը՝ ամեն օր Քուռկիկ Զալալին նստած առավոտյան Սասունից մի ակնթարթում գալով այստեղ և երեկոյան նորից հետ վերադառնալով: Բերդի պարսպից գոթանի շղթայով կախված հսկայական գուրզը՝ Դավթի գուրզն է (№ 583):

Սասնա գավառում գտնվող Ճախրահյան գյուղն իր անունը ստացել է այն ժամանակ, երբ Սասունցի Դավիթը Կոզբազնի ձեռքից աղատելով իբրև հարկ գանձված սասունցի կանանց ու աղջիկներին, այստեղ նրանց համար պատրաստել է տալիս բազմաթիվ ճախարակներ, որպեսզի նրանք ճախարակագործութեամբ զբաղվեն (№ 546):

Տաթևի վանքի հարավային կողմում, Որոտան գետի ափին գտնվող հսկայական ժայռի մասին պատմում են, թե Շահանդուխտ անունով մի հայուհի հարս գնալիս այստեղ ենթարկվել է իամայելացի հրոսակների հարձակմանը: Թշնամու ձեռքը չընկնելու համար նա ժայռի կատարից իրեն ձիով նետել է ձորը և անվնաս իջել է Որոտանի ափը: Այդ դեպքից հետո ժայռը նրա անունով կոչվել է Շահանդուխտի քերձ (№ 17):

Արաբները Հայաստան գալով կողոպտում են Զանգեզուրում գտնվող Շաղատի վանքը և նրա սրբություններն ու հարստությունը թաղում մի գաղտնի տեղում և վրան հող լցնելով դարձնում են մի մեծ բլուր: Ժամանակ անց, երբ որսորդները այս կողմերում հետապնդելիս են լինում մի եղնիկի, եղնիկի ոտը խրվում է հիշյալ բլուրի մեջ, և նա բռնվում է որսորդների կողմից: Սրանք կասկածելով քանդում են բլուրը, գտնում Շաղատի վանքի թաքցված գանձերը և տեղափոխում են Տաթև-

վի վանքը: Դրանից հետո Շաղատի վանքի ավերակների մոտ գտնվող բլուրը կոչվում է Եղնիկի բլուր (№ 78):

Շամշադինի Չինար գյուղի բերդում ժամանակին արաբների կողմից պաշարված է լինում Աշոտ Երկաթն իր զինվորներով և գյուղի բնակիչներով: Պաշարվածների միջից մի աղջիկ իր երկար հյուսերի մեջ ահագին քարեր ղնելով բերդի պարիսպներից դրանք նետում է թշնամու վրա: Արաբները խուճապի մատնվելով փախուստի են դիմում: Դրանից հետո բերդի անունը դնում են Աղջկա քար (№ 165):

Երբ արաբները հարձակվում են Շամշադինի շրջանի վրա, Աշոտ Երկաթն իր փոքրաթիվ զորքով ամրանալով այստեղ գտնվող Տավուշ բերդում, ուժեղ դիմադրություն է ցույց տալիս թշնամուն: Չկարողանալով ուժով գրավել բերդը, արաբները կտրում են նրա ջուրը, որպեսզի դրանով ստիպեն բերդականներին անձնատուր լինելու: Թշնամու ձեռքը շնչնելու համար Աշոտ Երկաթը վերցնելով իր քաջերին, մութ գիշերով թաքուն դուրս է գալիս բերդից և տեղափոխվում է Սևանի կողմերը (№ 564):

Օհան Օձնեցին Բաղդատի խալիֆին (Հեշմ ամիրային) ցույց է տալիս իր սրբությունն ու հրաշագործ շնորհքը: Աղղվելով դրանից խալիֆը բնդառաջում է Օձնեցու խնդիրքին և նրան պահանջված քանակով օգնական զորք է տալիս: Խալիֆի տված զորքով Օձնեցին վճռում է Հայաստանից՝ այստեղ գտնվող բյուզանդական վերակացուին ու զինվորներին (№ 773Գ և Դ) և այլն:

Հիշյալ ավանդությունների մեջ վերարտադրված գլխավոր դեպքերն ու դեմքերը հիմնականում հավաստվում ու հաստատվում են այդ դեպքերին ու դեմքերին ականատես ու ժամանակակից հայ և արաբացի պատմիչների գրավոր վկայություններով:

Խոսելով արաբական խալիֆաթի տիրապետության շրջանում Հայաստանում կատարված դադանությունների և կեղեքումների մասին, Տ-րդ դարի հայ պատմիչ Ղևոնդը գրում է. «Ձսոյն ժամանակս ի հրամանատարութեան Եգիպտի և չիշխանութեանն Աբդլայի միւսոյ, յոչժ ծանրացաւ անուր լծոյ հարկապահանջութեան ի վերայ աշխարհիս Հայոց... համօրէն զբոլոր երկիրս Հայոց արկանէր ընդ անհանդուրժելի վտարանդիւք. զի վախճանեաց զգիւտ արծաթոյ ի յերկրէս, և ամենայն ոք տալով զպաճարանս ընչից իւրեանց՝ ոչ գտանէին զգինս փրկանաց անձին իւրեանց, և շար կտտանօք, գելարանօք և կախաղանօք և դառն տանջանօք կեղէին զկեանս մարդկան: Յորմէ փախստեայ եղեալ բա-

դումք յայրս և ի փապարս երկրի՝ զօղեալ թագչէին. և ոմանք ձիւնա-
հեղձ և գետավէժ լինէին վասն անտանելի աղետիցն. զի ոչ էր զիւս զոր
հայցէինն, գտանել պահանջումն սակի արժաթոցն, այլ ըստ գլխոյ
արանց. որովք թափուր մնացեալք յամենայն ստացուածոց՝ կապէին
կապանօք անանկութեան երկիրս Հայոց, և առհասարակ ճաշակէին ի
հնոցէ աղքատութեան»¹:

Մի ուրիշ հայ պատմիչ՝ Հովհաննէս կաթողիկոսը, խոսելով արաբ
արշունարբու ոստիկան Բուղայի ձեռքով Սասունի ավերման և Բագրա-
տունի Գավթի ու Խութեցի Հովնանի գերության մասին, ի միջի այլոց
գրում է. «Իբրև գկայծակն փայլակնահար զաշխարհն արարեալ... սս-
պատակ զգօրս իւր սփռէ ընդ ծործորս ի լերինն Տաւրոսի և երեսս Գա-
ւառին (Սասնոյ): Եւ նախ զքնակեալսն ի խոխոմն լերինն՝ զորս քմբրո-
նէինն՝ տապաստ երկրի տային անողորմ սրով. իսկ զԳաւառին հեծե-
լագունդն զգոհհիկս զոմանս սրոյ ճարակ տային, և զայլս ձերբակալս
արարեալ առ բռնաւորն հասուցանէին տոռամբք զնոսա քարշեալ, իսկ
զանձնագեղս, և զերեսաւորս և զգունեանս արտաքոյ այլոցն տրոհեալ
վասն անօրէն յօրէնս իւրեանց զարձուցանելոյ ըստ ամիրապետին հրա-
մանի և զայլս ևս մնացականս առ ի նոցանէ հրամայէր սրով վատնել»²:

Նույն բանը Բուղան կատարում է նաև Հայաստանի մյուս գավառ-
ներում:

Ահա և ղեպքերին ժամանակակից ու մասնակից արաբ պատմիչ
Ահմեդ Բալաձորիի (9-րդ դար) վկայությունները արաբ ոստիկանների
Հայաստանում զորժած ավերի ու ավարի և հայ ժողովրդի նրանց դեմ
կազմակերպված զինված ընդվզումների վերաբերյալ. «Երբ փոխարքա-
յի կողմից այս երկիրն (Հայաստան) էր գալիս որևէ ոստիկան, նրան
պատրիկները (նախարարները) աշխատում էին անտեսել: Եթե նրանք
նկատում էին, որ ոստիկանն անկաշառ է ու խիստ և իր արամադրու-
թյան տակ ունի ռազմական ուժ և հանդերձանք, նրանք մուծում էին
հարկերն ու հայտնում իրենց հնազանդությունը, հակառակ ղեպքում
նրանք աշխատում էին զրպարտել նրան և արհամարհանքով վերաբեր-
վել նրան»:

¹ Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ
135—13:

² Հովն. կաթողիկոս, Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 119:

Մի այլ տեղ կարդում ենք. «...Մուտավաքիլը՝ հավատացյալների տերը (847—861 թթ.) իր խալիֆայության երկրորդ տարին նշանակեց Հայաստանի կառավարիչ Յուսուֆ իրն Մուհամեդ Յուսուֆ ալ-Մերվզիին (մերվեցի), որը գալով իլաթ՝ ձերբակալեց նրա պատրիկ Բագարատին, Աշոտի որդուն, և ուղարկեց նրան Սուրրա-մինրայ (= Սամառա, ամիրապետի նիստը):

Դրանով նա դժգոհություն առաջացրեց պատրիկների, ազատների և ապստամբների (խոսվարարների) շրջանում: (Այդ դեռ քիչ էր), նրա դավառական կառավարիչներից մեկը՝ ալ-Ալյա իբն Ահմադ անունով գնաց մի վանք Սասունում, որ հայտնի էր Աքթահ վանք անունով, որը Հայաստանի քրիստոնյաները մեծապես հարգում էին և որին բերում էին շատ նվերներ, դրավեց այն ամենը, ինչ որ այնտեղ կար և վիրավորանքներ հասցրեց նրա բնակիչներին (միաբաններին): Դրանով նա պատրիկների մեջ առաջ բերեց ծայր աստիճան զայրույթ և գրգռություն, և նրանք սկսեցին թղթակցել իրար հետ և հրահրել իրար ապստամբելու և անկախանալու: Հենց նրանք էլ դրդեցին խուժեցիներին, — դրանք (գյուղացի) մշակներ են, որոնք հայտնի են Արթան անունով, — ապստամբելու Յուսուֆի դեմ և գրգռեցին նրանց նրա դեմ այն բանի համար, որ նա (Յուսուֆը) ուղարկեց նրանց պատրիկին (Սամառա):

Ինչպես պատրիկները, այնպես էլ բոլոր խոսվարարները խուժեցիներին օգնելու համար ձիավոր և հետևակ մարդիկ ուղարկեցին, և նրանք հարձակվեցին նրա (Յուսուֆի) վրա Տարոնում այն ժամանակ, երբ նա իր մարդկանց ցրել էր գյուղերում, սպանեցին նրան և գրավեցին այն ամենը, ինչ որ կար նրա ճամբարում»¹:

Քննության առարկա ավանդությունների մեջ պատմական հիմքերունի Սասունցի Դավթի թշնամիների դերեզմանների հիշատակությունը, որոնք գտնվում են իլաթի հին քաղաքատեղի մոտ: Այդ հիշատակությունը ամենայն հավանականությամբ արձագանք է Յուսուֆ ոստիկանի կողմից իլաթ քաղաքում Բագարատ Բագրատունու ձերբակալության առնչությամբ արաբների դեմ հայերի զինված ապստամբության և վերջինիս ժամանակ թշնամու կրած զոհերի:

¹ Баладзори, «Книга завоевания стран», текст и перевод с арабского проф. П. К. Жузе, Баку, 1927, էջ 21—22: Օգտվում ենք «Սասնա ծաեր»-ի Ա. հատորի ներածության մեջ բերված հայերին թարգմանությունից, Երևան, 1936, էջ 17—19:

Պատմական հիմքեր ունի Հալեբ քաղաքում Սասունցի Դավթի կողմից կառուցվող և նրա անունը կրող բերդի հիշատակությունը: Կասկածից վեր է, որ այդ հիշատակությունը արձագանք է տնտեսական, քաղաքական ու ռազմական այն հարաբերությունների, որ ունեցել են ժամանակին Սասունի բնակիչները եգիպտոսի (= Մսրա) հետ՝ էյուբյան կամ էալյան հարստության շրջանում (1169—1250 թթ.), որի իշխանության մեջ է եղել նաև Հալեբ քաղաքը¹:

Պատմական հիշողություն է Դավթի կողմից սասունցի կանանց ու աղջիկներին Կողբադնի ձևոց փրկելու փաստը, որոնց վերջինս իբրև հարկ գանձել էր Սասունից: Այդ հիշատակությունը համընկնում է արաբ պատմիչ Բալաձորիի հաղորդած այն տեղեկությանը, ըստ որի արաբները իրենց նվաճած երկրներից, այդ թվում նաև Սասունից, բացի նյութական բարիքներից, իբրև հարկ պահանջել են նաև որոշ թվով «սևահեր, սևահոն, երկար արտեանունքներով և բարձրահասակ» աղջիկներ ու պատանիներ²:

Պատմական հիշողություն է սյունեցի Շահանդուխտի՝ թշնամիների ձեռքը շնչնկելու համար հսկայական ժայռից ձորը նետվելու պատմությունը: Ստեփանոս Յրբեկյանի վիպությունը հար և նման մի դեպք ժամանակին նույն վայրում կատարվել է գահերեց իշխան Վարազ Տրդատի դուստր դեղանի Շահանդուխտի հետ, որը Բաղայ երկիրը հարսնանալու գնալիս ենթարկվել է իսմայելացի հրոսակների հարձակմանը և իր պատիվը փրկելու համար ձիու վրա նստած ժայռից դեպի անդունդն է նետվել³:

Պատմական հիշողություններ են Շամշադինի շրջանում գտնվող Աղջկա քար և Տավուշ բերդերից Աշոտ Երկաթի արաբական զորքերի դեմ մղած կռիվների պատմությունները: Այդ պատմությունները հիշեցնում են ավյալ վայրերում և հատկապես Սևանի ավազանում 914—922 թթ. անվանի հայ զորավարի և նրա համեմատաբար փոքրաթիվ զորքերի արաբ Բեշիր զորավարի մեծ բանակի դեմ մղած անհավասար մարտերը:

Պատմական հիշողություն է նաև Բաղդատի խալիֆից (Հեշմ ամիրայից) Օհան Օձնեցու խնդիրքով օգնական զորք ստանալու պատմու-

¹ Տե՛ս Մ. Աբեղյան, Երկիր, Ա. հատոր, Երևան, 1966, էջ 347, 348, 365, 368:

² Баладзори, նույն տեղում, էջ 18: Օգտվում ենք «Սասնա ծոեր»-ի Ա. հատորի ներածության մեջ բերված հայերեն թարգմանությունից, էջ 17:

³ Ստ. Յրբեկյան, Պատմութիւն, նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 163—164:

թյունը: Այդ փաստի մեջ անդրադարձում է գտել Թեոդորոս Ռշտունու կողմից արար խալիֆ Մուվիայի հետ 652 թ. կնքված հատուկ պայմանագիրը, որի համաձայն, եթե որևէ թշնամի պետություն (նկատի էր առնված հատկապես Բյուզանդիան) հարձակվեր Հայաստանի վրա, խալիֆաթը պարտավորվում էր զորքով անմիջապես օգնության հասնելու նրան:

Պատմական հիշողություններից բացի, քննության առարկա ավանդությունները բավական հարուստ են նաև վիպական և առասպելական մոտիվներով: Այդպիսիք են՝ Սասունցի Դավթի Քուսկիկ Ջալալու միջոցով Սասունից մի ակնթարթում Հալեբ հասնելն ու այնտեղից հետ վերադառնալը, արաբների կողմից կողոպտված և գաղտնի տեղում թաքցված Շաղատի վանքի գանձերի պատահական հայտնաբերումը եղնիկին հետապնդող որսորդների միջոցով, Շամշադինի շրջանի Չինար գյուղացի հայ քաջուհու կողմից իր մազերի հյուսերի մեջ դրված ահագին քարերը բերդի պարիսպներից թշնամու վրա նետելը, Բաղդատի խալիֆի ներկայությամբ Օհան Օձնեցու կատարած հրաշագործությունները և այլն:

Ինքնաբերաբար համեմելով իրենց հաղորդած պատմական տեղեկություններն ու հուշապատումները նման կարգի վիպական և հրաշապատում մոտիվներով, ժողովրդական ավանդախոսները դրանով իսկ ավելի հետաքրքիր են դարձրել այդ տեղեկություններն ու վերհուշները, առավել ուժեղացրել են դրանց թողած ազդեցությունն ու տպավորությունը ունկնդիր հասարակության վրա:

23. Լենկ-Թեմուրի, վանահայր Օհանի և այլոց ավանդությունները:—

Այս ավանդությունների մեջ համապատասխան անդրադարձում են գտել արևելյան ամենակատարի ու դաժան բռնակալներից մեկի՝ Լենկ-Թեմուրի և նրա հրոսակների կողմից 1386—1394 թթ. Արևելյան և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում, քաղաքներում ու գյուղերում կատարված անօրինակ ավերածությունները, կողոպուտը, գերեվարությունն ու սպանությունները և այն անհավասար պայքարը, որ մղել են Հայաստանի բնակիչները նրանց դեմ՝ իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու, նյութական ու հոգևոր հարստությունները փրկելու, իրենց անկախությունը պաշտպանելու համար:

Երբ Լենկ-Թեմուրը գալով Սյունյաց աշխարհը ավերում է այն և իբրև գերի բռնում, տանում է նրա բնակիչներից շատերին, Հին-Նախիջևանի Առինջ գյուղի մոտ գտնվող փոքրիկ վանքի վանահայրը կապում

թյունը: Այդ փաստի մեջ անդրադարձում է գտել Թեոդորոս Ռշտունու կողմից արար խալիֆ Մուավիայի հետ 652 թ. կնքված հատուկ պայմանագիրը, որի համաձայն, եթե որևէ թշնամի պետություն (նկատի էր առնված հատկապես Բյուզանդիան) հարձակվեր Հայաստանի վրա, խալիֆաթը պարտավորվում էր զորքով անմիջապես օգնության հասնելու նրան:

Պատմական հիշողություններից բացի, քննության առարկա ավանդությունները բավական հարուստ են նաև վիպական և առասպելական մոտիվներով: Այդպիսիք են՝ Սասունցի Դավթի Քուռկիկ Ջալալու միջոցով Սասունից մի ակնթալիթում Հալեբ հասնելն ու այնտեղից հետ վերադառնալը, արաբների կողմից կողոպտված և գաղտնի տեղում թաքցված Շաղատի վանքի գանձերի պատահական հայտնաբերումը եղնիկին հետապնդող որսորդների միջոցով, Շամշադինի շրջանի Չինար գյուղացի հայ քաջուհու կողմից իր մազերի հյուսերի մեջ դրված ահագին քարերը բերդի պարիսպներից թշնամու վրա նետելը, Բաղդատի խալիֆի ներկայությամբ Օհան Օձնեցու կատարած հրաշագործությունները և այլն:

Ինքնաբերաբար համեմելով իրենց հաղորդած պատմական տեղեկություններն ու հուշապատումները նման կարգի վիպական և հրաշապատում մոտիվներով, ժողովրդական ավանդախոսները դրանով իսկ ավելի հետաքրքիր են դարձրել այդ տեղեկություններն ու վերհուշները, առավել ուժեղացրել են դրանց թողած ազդեցությունն ու տպավորությունը ունկնդիր հասարակության վրա:

23. Լենկ-Թեմուրի, վանահայր Օհանի և այլոց ավանդությունները:—

Այս ավանդությունների մեջ համապատասխան անդրադարձում են գտել արևելյան ամենակատաղի ու դաժան բռնակալներից մեկի՝ Լենկ-Թեմուրի և նրա հրոսակների կողմից 1386—1394 թթ. Արևելյան և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում, քաղաքներում ու գյուղերում կատարված անօրինակ ավերածությունները, կողոպուտը, գերեվարությունն ու սպանությունները և այն անհավասար պայքարը, որ մղել են Հայաստանի բնակիչները նրանց դեմ՝ իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու, նյութական ու հոգևոր հարստությունները փրկելու, իրենց անկախությունը պաշտպանելու համար:

Երբ Լենկ-Թեմուրը գալով Սյունյաց աշխարհը ավերում է այն և իբրև գերի բռնում, տանում է նրա բնակիչներից շատերին, Հին-Նախիջևանի Առինջ գյուղի մոտ գտնվող փոքրիկ վանքի վանահայրը կապում

է ուսից Սուրբ Նշանը և նետվում է գետը: Այդ նշանի զորութեամբ նա մնում է ջրի երեսին և առանց սուզվելու սկսում է անարգել քայլել գետի վրայով: Տեսնելով կատարված հրաշքը, Թեմուրի զինվորները այդ մասին հայտնում են իրենց տիրոջը: Սուրբ Նշանին սիրաշահած լինելու համար Լենկ-Թեմուրը վանահոր խնդիրքով վանքով մեկ գերիներ է քաշխում նրան: Մտնելով վանք գերիներն անմիջապես աղավնի դարձած դուրս են թռչում նրա լուսամուտից, և վանքը նորից մնում է դատարկ: Ահաբեկված Սուրբ Նշանի կատարած այս երկրորդ հրաշքից, Լենկ-Թեմուրը վերցնում է իր հրոսակներին և հեռանում է Սյունյաց աշխարհից: Այդ օրվանից վանքը սկսում է կոչվել Մարդաղավնյաց կամ Հաղարափրկիչ վանք (№ 617):

Իմանալով Տաթևի վանքի մեծ զանգի դերը, որով թշնամու ներխուժման ժամանակ ահազանգ էին տալիս շրջակա բնակչությանը ոտքի ելնելու նրա դեմ, Լենկ-Թեմուրը կաշառում է տեղական իշխաններից մեկին, նրա միջոցով խարույկ է վառել տալիս այդ զանգի տակ և կրտրում է նրա ձայնը: Դրանից հետո միայն գիշերով մտնում է Սյունյաց աշխարհը, գրավում է այն և սկսում է իր ավերն ու կոտորածը: Իզուր են մարդիկ փորձում Տաթևի զանգի միջոցով օգնության կանչել ժողովրդից: Այդ օրվանից էլ ահա գավառի անունը մնում է Զանգը դուր, որ հետո դառնում է Զանգեզուր (№ 386):

Նուր ստանալով Լենկ-Թեմուրի դալստյան մասին, Գարդման լեռան լանջին ապրող ժողովուրդը թաքնվում է մոտակա Խորանաշարի վանքերում: Լենկ-Թեմուրը հրամայում է վանքերից հանել բոլոր թաքնվածներին, կապկապել նրանց, պառկեցնել գյուղի կալատեղում և պաշտած ձիերով անցնել նրանց վրայով: Երբ բոլոր մարդիկ տրորվում, ոչնչանում են, Լենկ-Թեմուրը կարգադրում է հողով ծածկել կալատեղը և իր հրոսակների գլուխն անցած շարունակում է ճանապարհը: Այդ օրվանից կալի անունը դնում են Անաստվածի կալ կամ՝ Իգիտ դրման (№ 838):

Լենկ-Թեմուրի կարգադրությամբ Գանձակի գավառի գյուղերից մեկի հրապարակում կախաղան են հանում քրիստոնյաներին: Նրանց միջից հանկարծ դուրս է գալիս Վարդան անունով մի քաջ որսորդ և սպանում է դահճին: Լենկ-Թեմուրը իր մոտ է կանչում Վարդանին և հարցնում է, թե ինչու նա սպանեց դահճին: «Մարդը իրավունք չունի ձեռք բարձրացնելու իր նմանի վրա,—ասում է Վարդանը: Նրա համարձակ պատասխանը դուր է գալիս Լենկ-Թեմուրին և նա ոչ միայն ներում է

շնորհում հայ որսորդին, այլև մի գյուղ է նվիրում նրան, որը Վարդանի անունով կոչվում է Վարդանաշեն (№ 455):

Երբ Լենկ-Թեմուրը գալիս հասնում է Նոր-Քայազետի գավառը, Այրիվանք գյուղի բնակիչները հավաքվում են իրենց գյուղի վանքում, ներսից փակում են դռները և ապավինում են վանահայր Օհանին: Սա մեծ ջերմեռանդությամբ սկսում է աղոթել աստծուն, որ նա փրկի իր ժողովրդին: Աստու հրամանով վանքում հավաքված մարդիկ աղավնի են դառնում և թռչելով ազատվում են Թեմուրի սրից: Այդ օրվանից Այրիվանք գյուղի վանքը կոչվում է Օհանավանք կամ Հովանավանք (№ 638):

Լսած լինելով Գեղարգա վանքի հրաշագործությունների համբավը, Լենկ-Թեմուրը որոշում է անձամբ փորձել այն: Անթիվ զորքով հարձակվում է ամայի ձորի վրա և հոխորտանքով ու ծաղրաբանությամբ հրամայում է բերել իր մոտ Գեղարդի Սուրբ նշանը: Հենց որ բարձրացնում են նիզակները Սուրբ նշանին հարվածելու, անմիջապես բյուրավոր աներևույթ զրահավորված զինվորներ գուլնգուլն համազգեստներով ամեն կողմից հարձակվում են թշնամու վրա: Իրարանցումն ընկնում է Թեմուրի զորքի մեջ. ոմանք փախուստի են դիմում, ուրիշների ձեռքերն են գոսանում, շատերը կուրանում են: Տեսնելով այդ, սարսափահար Լենկ-Թեմուրը թողություն է խնդրում Սուրբ նշանից և մեծամեծ պարգևներ խոստանալով նրան, ետ է վերադառնում (№ 609Բ):

Լենկ-Թեմուրն իր հրոսակներով հարձակվում է Աշտարակի վրա: Աշտարակցիք միանալով օշականցիների հետ, երկար դիմադրում են կատաղի թշնամուն: Վերջում սակայն, այլևս չկարողանալով դիմանալ նրա ճնշումին, թողնում են իրենց գյուղը և քաշվում են դեպի Կարպի: Այստեղ նոր ուժեր հավաքելով աշտարակցիք նորից գուրս են գալիս Լենկ-Թեմուրի դեմ և այնքան են նեղում նրան, որ Թեմուրը ծանր վիրավորվելով, լնգլնգալով փախուստի է դիմում: Դրանից հետո է, որ նրա անունը մնում է Լենկ (կաղ) Թեմուր (№ 757Բ):

Թիֆլիս քաղաքից մինչև Երուսաղեմ, Երուսաղեմից մինչև Մոկաց երկիրը ավերելով, կողոպտելով, սպանելով ու գերեվարելով Լենկ-Թեմուրը գալիս հասնում է Արճեշի Մեծոփա վանքը և ուզում է ավերել ու կողոպտել նաև այս վանքը: Նա կանչում է իր մոտ վանահորը՝ վանքի գանձերը պահանջելու համար: Երբ Լենկ-Թեմուրին ներկայանում է Մեծոփա վանքի վանահայրը, նրա աչքին նա երևում է բյուրավոր զորքերով շրջապատված... Կարծելով, որ այստեղ խառն է աստծու մատը,

Թեմուրը սարսափահար է լինում, փոխում է իր մտադրությունը և թողնելով ուրիշ վանքերից կողոպտված 65 բեռ գրչյա մատյանները, հավաքում է իր զորքերին ու հեռանում է (№ 674, 675Բ)։

Եփրատի քանդված կամուրջը շինելու համար Լենկ-Թեմուրը որոշում է քանդել Տարոնի Աշտիշատ գյուղի Սուրբ Սահակ եկեղեցին։ Դրա համար նա իր զինվորներին կողք-կողքի շարել է տալիս Սուրբ Սահակից մինչև Եփրատի կամուրջը (որ երկու ժամ հեռավորության վրա է գտնվում նրանից) և կարգադրում է նրանց ձեռքից-ձեռք տալով փոխադրել քանդված եկեղեցու բոլոր քարերը (№ 678)։

Սեբաստիայի հայոց գերեզմանատան մոտ կա մի տարածություն, որը կրում է Սև հողեր անունը։ Ասում են, թե Լենկ-Թեմուրը կարգադրել է իր հրոսակներին այստեղ ողջ-ողջ թաղել հազարավոր սեբաստացիների (№ 729)։

Մի ուրիշ ավանդության համաձայն, երբ Թեմուրին լուր են բերում, թե Սեբաստայում կատարված նախճիրից կենդանի մնացած հատ ու կենտ մարդիկ խելագարվելով սկսել են ծիծաղել ու պարել քաղաքի ավերակների վրա, Լենկ-Թեմուրը նոր միայն իրեն լիովին բավարարված զգալով, հավաքում է զորքերին և հեռանում է Սեբաստիայից (№ 887), և այլն։

Վերոհիշյալ և բազմաթիվ ուրիշ ավանդությունների մեջ յուրովի արձագանք են գտել սլաոմական այնպիսի անցուդարձեր, ինչպիսիք են՝ Նախճավանի, Գառնիի, Բջնիի, Կարսի, և Սիսիանի Որոտան բերդերի գրավումը, Տաթևի վանքի ու նրա հարուստ մատենադարանի հրկիզումը, Ղարաբաղի, Վասպուրականի, Մուշ-Տարոնի, Սասունի, Կարինի, Երզրնկայի և Հայաստանի այլ գավառների ավերումն ու ավարումը, նրանց բնակիչների կոտորածն ու գերեվարումը Լենկ-Թեմուրի հրոսակների կողմից 1386, 1387, 1388, 1394 թվականներին, Սուրմառի գավառի բնակչության և Սասունի լեռնականների այդ հրոսակներին ցույց տված կատաղի դիմադրությունը 1387 թ., և այլն։

Քննության առարկա ավանդությունների բովանդակության պատմական իսկությունը հիմնականում հաստատվում է մեր ձեռքի տակ եղած համապատասխան փաստացի գրավոր վկայություններով։ Այսպես.

Ավանդություններից մեկի մեջ եղած հիշատակությունն այն մասին, որ Լենկ-Թեմուրը Թիֆլիս քաղաքից մինչև Երուսաղեմ, Երուսաղեմից մինչև Մոկաց երկիրը քանդել է հայկական եկեղեցիները, կողոպտել,

սպանել ու գերեզմարել է բոլոր հայերին (№ 675Բ), համընկնում է այն տեղեկությանը, որ թողել է մեզ գեալքերին ժամանակակից ու ականատես հայ պատմիչ Թովմա Մեծոփեցին, գրելով. «Աւաղ եւ եղուկ ամենայն Հայոցս զի աւերեցան ամենայն երկիրս զի յԱրճշոյ մինչեւ ի տունն Վրաց եւ մինչ ի Կուր գետն Աղուանից շաղախեցին արեամբ անմեղաց երկիր ամենայն, շարշարանօք, սպանմամբ եւ գերութեամբ»¹:

Նույն պատմիչի վկայությամբ հաստատվում է նաև այն ավանդությունների բովանդակությունը, ուր խոսվում է Արեմտյան Հայաստանում և մասնավորապես Վասպուրականում (Արճեշ, Վան և այլն) Լենկ-Թեմուրի կատարած գազանային նախճիրների մասին: Ահա այդ վկայությունը. «Հրաման եղեւ ի շար բռնաւորէն զկանայս եւ մանկունս առնուլ ի գերութիւն, և զհաւատացեալս եւ զանհաւատս ի բերդէն ի վայր ընկենուլ: Իսկ նոքա առ ժամայն կատարեցին զշար հրաման նորա, սկսան առ հասարակ զամենեսեան ի վայր ընկենուլ: Եւ այնքան բարձրացաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալք ոչ մեռանէին, զոր տեսաք աչօք և լուսք ականճօք մերովք...»²:

Իր Պատմության ուրիշ էջերում հիշյալ պատմիչը հավաստում է այն ավանդությունների բովանդակության իսկությունը, որ հիշատակվում է Սյունիքում, Տարոնում և հատկապես Սեբաստիա քաղաքում (= Սվաղ) Լենկ-Թեմուրի հրոսակների կատարած ավերածությունների ու կոտորածների մասին³:

Ինչ վերաբերում է գանձակեցի որսորդ Վարդանի՝ Լենկ-Թեմուրի դահճին սպանելու և Աշտարակի ու Օշականի բնակիչների Լենկ-Թեմուրին վիրավորելու և նրա հրոսակներին իրենց հայրենիքից դուրս քշելու վիսպական պատմություններին (№ № 455, 757Բ), ապա զրանց մեջ այլափոխված ձևով արձագանք են գտել այն ընդվզումները, որոնք ժամանակին տեղի են ունեցել Հայաստանի մի քանի վայրերում Լենկ-Թեմուրի դեմ և որոնց բնորոշ արտահայտություններից են Սուրմառի բնակիչների և Սասունի լեռնականների վերևում հիշված գինված դիմադրությունները:

Նշանակալից են նաև Լենկ-Թեմուրի մասին պատմող ավանդություններում առկա հրաշապատում մոտիվները: Այդպիսի մոտիվներից

¹ Թ. Մեծոփեցի, Պատմութիւն Կանկ-Թեմուրայ և յաշորդաց իւրոց, Փարիզ, 1860, 45 30:

² Նույն տեղում, էջ 30—32:

³ Նույն տեղում:

են՝ Նախիջևանի Առինջ գյուղի վանքում գտնվող Սուրբ Նշանի զորությունից Լենկ-Քեմուրի ահաբեկման (№ 617), Նոր-Բայազետի Այրիվանք գյուղի վանքի վանահայր Օհանի ջերմեռանդ աղոթքով վանքում ապաստանած մարդկանց աղավնու փոխակերպվելու (№ 638), Գեղարդա վանքի Սուրբ Նշանի՝ Լենկ-Քեմուրի և նրա զորքերի մեջ առաջացրած խուճապի (№ 609Բ), Մեծոփա վանքի վանահոր՝ Լենկ-Քեմուրի աչքին բյուրավոր դինավառ զորքերով շրջապատված երևալու (№ 674) պատմությունները և այլն:

Հիշյալ և նման կարգի ուրիշ հրաշապատում մոտիվների ստեղծման հոգեբանական հիմքը այն հակազդեցությունն է, որ ծնունդ է առել Հայաստանի բնակչության լայն զանգվածների շրջանում Լենկ-Քեմուրի և նրա նման այլազգի բազմաթիվ բռնակալների և նրանց հրոսակների սփռած հրի ու սրի, գործած ավերի, ավարի, կոտորածների ու գերեվարության պայմաններում: Այդ մոտիվների մեջ դրսևորված է գերբնական ուժերի և ազգային սրբությունների նկատմամբ այդ զանգվածների ունեցած միամիտ ու պարզունակ հավատը՝ խարսխված նրանց աշխարհայացքի պատմական սահմանափակության վրա: Ապավինելով Սուրբ Նշանի կամ Խաչի հրաշագործ ուժին, որևէ սրբակրոն հոգևորականի ջերմեռանդ աղոթքի զորությունը, ժողովուրդը հոգեպես գոտեպնդել է ինքն իրեն, մխիթարվել այն գաղափարով, որ ինքն ունի մի զենք, որն ավելի զորավոր է քան Լենկ-Քեմուրի սուրը, որով կարելի է ահ ու սարսափ ազդել թշնամուն, շփոթության, ահաբեկման ու փախուստի մատնել նրան¹:

24. Սուլթան Մուրադի, Քոսա Բինբաշու, Գրիգոր Նահատակի, Գավիր-բեկի, Անդրանիկ Զորավարի և այլոց ավանդությունները:— Այս ավանդությունների մեջ արձագանք են գտել թուրքական բռնակալների ու նրանց հրոսակների կողմից Արևելյան և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ գավառներում, քաղաքներում ու գյուղերում դարերի ընթացքում գործված ավերածությունները, կողոպուտն ու կոտորածը և անձնազոհ այն պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը այդ բռնակալների ու նրանց հրոսակների դեմ իր քաջարի գավակների միջոցով:

Ըստ այդ ավանդությունների.

Թուրք հրոսակները հարձակվելով Շիրակի վրա, ուրիշ շատ գյուղերի հետ կողոպտում ու ավերում են նաև Ղարաքիլիսա գյուղը: Սրա

¹ Հմմտ. Ն. Աղրալյան, Գրական-քննադատական երկեր, Բեյրութ, 1959, էջ 192—204:

բնակիչների դիմադրությունը տեսնելով, հրոսակապետ փաշան հրամայում է դուր լցնել բոլոր տղամարդկանց և այլեւ, իսկ գյուղի եկեղեցին էլ դարձնել զորանոց իր զինվորների համար: Գիշերը, երբ եկեղեցում գտնվող թուրք զինվորները քնած են լինում, գյուղի ողջ մնացած տղամարդիկ դրսից փակում են եկեղեցու դռները և կրակ տալով վառում են այն: Վառվող թուրք զինվորների աղաղակից արթնանալով և տեսնելով ծխացող եկեղեցին, փաշան բացականչում է՝ «Ղարա՛ քիլիսա...» (սե եկեղեցի) և խուճապահար փախչում է գյուղից: Դրանից հետո գյուղի անունը մնում է Ղարաքիլիսա (№ 488):

Սուլթան Մուրադի հրամանով նրա թիկնապահ զինվորները Հայաստանի գյուղերից հավաքում են գեղեցիկ մանուկներին և տանում են իրենց տիրոջը: Արզնի գյուղի մոտակայքում երկու հայ մանուկներ, Սուլթանի ձեռքը չընկնելու համար, իրենց ցած են նետում Դժվարադեմ կոչված ժայռերի վրայից և տեղն ու տեղը ինքնասպան են լինում (№ 13):

Ժամանակին Իջևանի շրջանի Ուղունթալա գյուղում ապրել է մի շատ գեղեցիկ հայ աղջիկ: Թուրք բեկը լսելով նրա գեղեցկության մասին, իր ծառաների հետ գալիս է առևանգելու: Աղջկա հայրը նրան թաքցնում է անտառի խորքում գտնվող աղբյուրի մոտ: Բեկի ծառաները գալիս են այստեղ և դիմելով աղջկա հորը, ասում են. «Կրգի վեր» (աղջկանդ տուր): Հայրը գնալով դիմադրում է թուրք բեկի ծառաներին և կոտորում է բոլորին: Լսելով այդ մասին բեկը փախչում է: Դրանից հետո անտառի խորքում գտնվող աղբյուրի անունը դնում են Կրգվեր (№ 278):

Թուրք ավազակները հանդիպելով Վայոց ձորի Արփա գյուղացի Գրիգորին, պահանջում են նրանից, որ նա ցույց տա իրենց գյուղի ճանապարհը: Համագյուղացիներին նրանց սպառնացող վտանգից փրկելու համար Գրիգորը սխալ ճանապարհ է ցույց տալիս թուրքերին: Սրանք գլխի ընկնելով բռնում և տեղն ու տեղը սպանում են Գրիգորին: Ժամառակ անց Արփա գյուղացիք, գյուղից ոչ հեռու, Գրիգորի հիշատակին մի մատուռ են շինում, որը նրա անունով կոչվում է Գրիգոր Նահատակի մատուռ (№ 612):

Մուղանում բանակ դրած թուրք բեկը Սիսիան է ուղարկում իր մարդկանց, այնտեղից հարեմի համար գեղեցիկ հայ աղջիկներ բերելու: Առևանգված աղջիկներից Շաքեն ճանապարհին թաքնվում է ջրվեժի փրփուրների մեջ և ազատվում է թուրքերի ձեռքից: Դրանից հետո ջրվե-

ժը նրա անունով կոչվում է Շաքեի կամ Շաքիի ջրվեժ (№ 246):

Օրդովարի կովի ժամանակ Դավիթ բեկի քաջերի մեջ աչքի է ընկնում Դալի քեշիշը: Նրա շնորհիվ թուրքերը ծանր դրության մեջ են ընկնում: Դավիթ բեկի զինվորները հաղթութունից հետո սկսում են բռնագրավել ունևոր մահմեդականների հարստությունը: Նրանք սխալմամբ տանում են նաև աղքատ Ալու միակ կովը: Իմանալով այդ մասին Դավիթ բեկը կարգադրում է անմիջապես հետ վերադարձնել Ալու կովը, հեռն էլ նվիրել նրան ձի ու ուշխար (№ 832Գ):

Ֆաթալի խանը մեծ զորքով պաշարում է Դավիթ բեկին Հալիձորի բերդում: Դավիթ քաջերը մեկը մյուսի ետևից վանում են թշնամու կատաղի գրոհները: Այդ կռիվների մեջ առանձնապես աչքի են ընկնում Թորոս իշխանի քաջերը: Թշնամին միայն այն ժամանակ է կարողանում գրավել Հալիձորի բերդը, երբ Շուն-Ֆրանգյուլի մատնությամբ իմանում է բերդի ջրի ճանապարհը (№ 832Բ):

Երբ Զավնդուրցի Թորոս իշխանը Մելիք-Ֆրանգյուլի մատնությամբ սպանվում է Ֆաթալի խանի կողմից, նրա դիակի շուրջը մեծ կռիվ է սկսվում: Թորոսի զինվորները վիրավորում են Ֆաթալի խանին և սպանում նրա եղբորը (Աղասի խանին): Գիշերը կովող երկու կողմերն էլ սկսում են հավաքել իրենց վիրավորներին ու սպանվածներին: Պատերազմից հետո, ճակատամարտի վայրում հայ քաջերի թափած արյան կաթիլներից բուանում են անթիվ ու անհամար շուշաններ ու նարգիսներ, որի համար և այդ վայրը կոչվում է Նարգիսների դաշտ (№ 815), և այլն:

Թուրքական հրոսակախմբերը Լեռնային Ղարաբաղ մտնելու համար միշտ անցել են Մարտունու շրջանում գտնվող ձորով: Նրանցից ամեն մեկը մեծ կոտորածներ է արել ձորում, դրա համար էլ այն ստացել է Արյունոտ ձոր (Կանլը դարա) անունը (№ 111):

Էրզրումի շրջանի Կան դյուղում ապրելիս են լինում յոթ եղբայր և մի քույր: Թուրք բեկը մարդ է ուղարկում Կան և պահանջում է յոթ եղբայրների միակ քրոջը: Վերջինիս փոխարեն, ծպավելով նրա զգեստներով, գնում է փոքր եղբայրը՝ շորերի մեջ թաքցրած իր դաշույնը: Գալով բեկի մոտ փոքր եղբայրը գիշերով սպանում է նրան և վերադառնում տուն: Վերցնելով իրենց քրոջը յոթ եղբայրները թողնում են Կան դյուղը և գալիս են Սասունի կողմերը: Այստեղ, Անդոկ սարի մոտ, նրանք մի հյուղ (կապր) են շինում և բնակություն են հաստատում նրա մեջ: Փա-

մանակի ընթացքում ավելանում է հյուղերի թիվը և հիմնվում է Կապրր-նի գյուղը (№ 548):

Մի թուրք մուլլա պատարագի ժամանակ մտնում է Սվազի Լուսավորիչ հայկական եկեղեցին, բարձրանում է նրա բեմը և այնտեղից բարձրաձայն հայտարարում է, որ այսօրվանից եկեղեցին մզկիթի է վերածվում, ուստի ոչ մի քրիստոնյա այլևս իրավունք չունի ոտք դնելու այնտեղ (№ 661):

Թուրքերը բռնությամբ տիրանում են Ակն քաղաքի մոտ գտնվող Սուրբ Հակոբ հայկական վանքին: Նրանք փորձում են վանքի արևելյան դուռը տեղափոխել դեպի հարավ: Սակայն թուրքերի բոլոր ջանքերը դուր են անցնում: Վանքի դուռը անշարժ մնում է իր տեղում (№ 683):

Երբ Սուլթան Մուրադն իր բանակով հարձակվում է Մալաթիա քաղաքի վրա, նրա դեմ շատերի հետ դուրս է գալիս նաև մի երիտասարդ հայ աղջիկ՝ ահագին քարը ձեռքին: Զարմացած Մալաթիայի հայերի քաջության վրա, Սուլթանը հրամայում է խիզախ հայուհու ձեռքի քարը իրեն կոթող կանգնեցնել Մալաթիա քաղաքի մուտքի մոտ (№ 205):

Քոսս բինբաշին հազար ձիավորով բռնում է Սուլուխա կամուրջի ճանապարհը: Անդրանիկն իր երեք զինվորներով հնարամտորեն խուճապի է մատնում թշնամու զորքերին: Լսելով այդ մասին, թուրքական Սուլթանն ասում է. «էսօրվանից Անդրանիկն էլ շատը չէ, փաշա է»: Եվ դրանից հետո Անդրանիկին սկսում են կոչել Անդրանիկ փաշա (№ 767), և այլն:

Վերահիշյալ և նմանօրինակ բազմաթիվ ուրիշ ավանդությունների մեջ մենք գտնում ենք ուղղակի և այլափոխված արձագանքներ պատմական այն իրադարձությունների և վերջիններիս ծանր հետևանքների, որոնք տեղի են ունեցել Արևելյան և Արևմտյան Հայաստանում թուրքական բռնիչխանության տարիներին, սկսած 16-րդ դարի 50-ական թվականներից մինչև 1921 թ.:

Այդ իրադարձություններից առանձնապես հիշարժան են.

1554—1555 թթ. թուրքական բանակի առաջին ներխուժումը Հայաստան. նախ՝ Շիրակի գավառը, ապա Արարատյան դաշտ, Սյունիք, Փերչևիի վկայությամբ օսմանյան բանակը մտնելով նախ Շորագյալ, հովիտը: Դեպքերին ժամանակակից ու ականատես թուրք պատմիչ Փերչևիի վկայությամբ օսմանյան բանակը մտնելով նախ Շորագյալ, «բանդեց, ավերեց, բարեշեն դյուղերը, շինությունները ոչնչացվեցին և հողին հավասարվեցին: Այստեղից բանակը շարժվեց ... Երևան, ամեն

ինչ կրակի տվին, այրեցին և հողին հավասարեցրին. 23-րդ օրն անցան հայտնի Արփաշայ գետը (Վայոց Ձորի) և այդ շրջանում էլ ամեն ինչ կողոպտեցին ու ավերեցին... 25-րդ օրը մտան Ղարաբաղ կոչված երկիրը (խոսքը Սյունիքի մասին է), որն իր լեռներով ու հարուստ այգիներով շատ հայտնի մի գավառ էր աջամի երկրում: ... Լուսավոր ցեղերեկը մութ գիշերի վերածվեց: 27-րդ օրը հասան Նախճավանի դաշտը: Հաղթական բանակի սարսափից քաղաքներն ու գյուղերն, տներն ու բնակավայրերն այն աստիճան ամայացել, ավերվել ու բուերի ու ագռավների բնակավայր էին դարձել, որ տեսնողներին սարսափ էին պատճառում: ... Որսի և ավարի ծարավի զինվորները... գյուղերն ու ավանները, դաշտերն ու շինությունները այն աստիճան քանդեցին ու ավերեցին, որ շինության ու կենդանության հետք անգամ չմնաց»: Նույն պատմիչի վկայությամբ ոչ մի արշավանքում սուլթանի բանակն այսքան հարստություններ ձեռք չէր բերել և շկար մի զինվորական վրան, որ երեքից պակաս գերի ունենար, իսկ հնգից, տասնից ավելի գերի ունեցող վրաններն անթիվ էին¹:

1578—1590 թթ. պարսկա-թուրքական պատերազմների թատերաբեմ են դառնում Արարատյան դաշտը, Ղարաբաղը և մի քանի ուրիշ հայաբնակ վայրեր: Հիշարժան է մասնավորապես թուրքական զորքերի հրամանատար Օսման Յուզղեմիր փաշայի կողմից 1579 թ. կաղամկերպված մի արշավանքը, որի նպատակն էր ասպատակել պարսկական Հայաստանի արևելյան կողմերը: Ահա թե ինչ է պատմում այդ արշավանքի մասին նրա աղանատես և ժամանակակից Հովհաննիսիկ վարդապետը իր հիշատակարանում.

«Արդ զնեղութիւն և զգառնութիւն վշտաշատ ժամանակիս ո՞վ կարէ ընդ գրով արկանել, ով եղբարք, բայց փոքր ի շատէ ողբալով աստացուր:

Ազգն մահմեդականաց՝ որ ըմբռնեալ էին զգաւառս Հայոց աւերելով և գերելով դամենայն շէնս և զանշէնս, տիրեալ բնակէին ընդ ամենայն տեղիս և այնչափ և այնքան խիստ էր լուծ հարկի յոցա, մինչ զի բազումք զրկեալ ի ստացուածոց և ի հայրենի ժառանգութեանց, դեռևս ոչ կարէին գերծանել, այլ և ոչ գոյր փախստեան ճարակ և թագստեան տեղիք, այլ ամենայն մարդ ի տարակուսանս կայր, և երանի տային մեռելոցն և ոչ այս կենդանեացս, քանզի ոչ եթէ սակաւ ժամանակ էր

¹ «Հայ ժողովրդի պատմություն», Ա. մաս, Երևան, 1951, էջ 260:

բռնութիւն սոցա ի վերայ գաւառաց, այլ բազում և յերկար ամօք:... Ոչ ևս մխիթարութիւն գոյ յաղգիս Հայկաժին, այլ դեռ ևս կամք գլխակորեալք ի ներքոյ շար ծառայութեան նոցա, և ի հայրենի գաւառացն արտաքսեալ, ցիր և ցան եղեալ ընդ ոլորսս տիեզերաց, և իշխանագինք և ազատածինք՝ ծառայք լեալ ազգին մահմեդականի: Այլ և եկեղեցիք կոխան եղեն այլազգեաց, զորս քակեալ էին, զքարինս տանէին ի շինութիւն բերդից, և զորս շէն մնացեալ էին՝ ինքեանք պղծագործութեամբ, և երիվարք և ջորիք իւրեանց պահէին և նսսա: Եւ մեք գլուխ ի կոր կամք, և բազում տարակուսանօք լցեալ՝ վասն այսպիսի աղետալի կսկծանացրս, և ոչ ուրեք երևի հնար օգնականութեան»¹:

1724 թվին թուրքերի կողմից Երևանի պաշարումն ու գրավումը՝ որի ընթացքում թշնամու դրսից համալրված 40.000-անոց նոր բանակի ճնշման տակ հերոսի մահով ընկնում են շատ քաջարի երևանցիներ, ավերվում, կողոպտվում է քաղաքը, իսկ կենդանի մնացած բնակչությունից էլ թուրքական աղբյուրների հաղորդմամբ, «զերի են վերցվում ավելի քան 10.000 կին ու երեխաներ»²:

1725—1730 թթ. թուրքական զինված ուժերի պարբերաբար կրրկրնվող գրոհները նախ Ղարաբաղի, ապա Սյունիքի վրա՝ «սուլթանի հրամանով հայերին ոչնչացնելու և երկիրն ավերելու նպատակով»³ և հիշյալ գավառների խիզախ ու հերոսական բնակիչների մղած ազատագրական պայքարը թուրք զավթիչների դեմ, անվանի զորավարներ զարաբաղցի Ավան Յուզբաշու և սյունեցի Գավիթ բեկի ու վերջիններիս քաջարի օգնականների (Պետրոս Գիլանենց, Մխիթար Սպարապետ, Թորոս Իշխան, Տեր-Ավետիս և այլն) գլխավորությամբ:

1915 թ. թուրք ջարդարարների ու ցեղասպանների կողմից կազմակերպված մեծ եղեռնը, որի ընթացքում ավերվեցին ու հրկիզվեցին Արևմտյան Հայաստանի ծաղկուն ու շեն գյուղերն ու քաղաքները, լկվեցին ու բռնաբարվեցին հազարավոր հայ կանայք ու աղջիկներ, գազանաբար տանջամահ արվեցին և սրին ու ջրին կուլ դարձան շուրջ 2 միլիոն հայություն:

Վերը նշված և նմանօրինակ ուրիշ պատմական իրադարձությունների բանահյուսական արձագանքների բնորոշ նմուշներ են.

¹ «Ճոռաբաղ» ամսագիր, 1859, էջ 69—70:

² «Հայ ժողովրդի պատմություն», Ա. մաս, Երևան, 1951, էջ 303:

³ Գերի վերցված թուրք փաշաներից մեկի հարցաքննության ժամանակ արած հայտարարությունից (տես նույն տեղում, էջ 303):

Սուլթան Մուրադի բանակի Մալաթիայի վրա հարձակվելու և նրա համար Հայաստանից հափշտակվող գեղեցիկ մանուկների մասին պատմող ավանդությունները (№ № 13, 205), որոնց բովանդակությունը յուրովի հավաստվում ու հաստատվում է դեպքերին ժամանակակից հայ հեղինակների հետևյալ գրավոր վկայություններով. «Իսկ ի վերջին դարուս և ի նսեմ ժամանակիս մեր, եղև բորկութիւն և պատուհաս ի վերայ աշխարհիս վասն ծովացեալ մեղաց մերոց, քանզի մեծ թագաւորն խոնդքար (խոսքը Սուլթան Մուրադ Գ. թագավորի մասին է—Ա. Ղ.) գորածողով արար հեծելոց եօթն հարիւր հազար և ետ նոցա գլուխ զոմն անուն Օսման փաշա: Եւ եկեալ բաղմութեամբ զօրօք ի Թէոդուպոլիս, որ է Արզրում, և զշարիսն զոր արար ո՞վ կարէ պատմել կամ ընդ գրով արկանել: Կացեալ անդ աւուրս բազում, որ և զայլ մարդիկ ի դուրս ձգէին և զկայանս և զկոյս աղչկունս և զտղայս խայտառակէին. այնպիսի պիղծ գործովք էին անօրէն ազգն Մահմէտի, որ և մինչ զի զգեղեցիկ կանայք և զտղայքն ի հետ բերէին և յօտար երկիր ձգէին...»¹:

Նույն կարգի նմուշներ են նաև Դավիթ բեկին վերաբերող ավանդությունները (№ № 815, 832Բ, 832Գ): Վերջիններիս մեջ ճշմարտացի անդրադարձում են գտել այն քաջագործությունները, որ կատարել է սյունեցի հռչակավոր զորավարն իր գինակիցներով օսմանյան բանակների դեմ մղած ազատագրական կռիվների ընթացքում:

Հավատարիմ իր իրապաշտ ու լայնախոհ հայացքներին, ժողովուրդըն այդ ավանդությունների մեջ վերարտադրել է ոչ միայն Դավիթ բեկի մեկը մյուսից փայլուն հաղթանակները, այլև այն անհաջողություններն ու դժվարին պահերը, որ եղել են նրա կյանքում, երբ՝ կամ թշնամին է նեղել նրան իր գերակշիռ ուժերով, կամ էլ հայրենի դավաճանն է դավել իր նենգ գործերով:

Դավիթ բեկի մասին պատմող հայկական ավանդություններից մեկի պատմական ատաղձն են կաղմում 1722 թվին Ղափանի և Օրդուվարի խաների ու բեկերի դեմ Դավիթի մղած հաղթական կռիվները: Իրական-պատմական դեմքեր են նրա մեջ ոչ միայն Դավիթ բեկը, այլև Դալի-Քեշիշը, որը ոչ այլ ոք է, քան Դավիթի համհարդ հայտնի Տեր Ավետիսը, նրա մղած բազմաթիվ ազատամարտերի քաջարի հերոսներից մեկը: Պատմական հիմքեր ունեն նաև նույն ավանդության մեջ հիշատակվող կռիվը, վերջինիս վայրը, կովի հաղթական վախճանը:

¹ «Գրվան հայոց պատմության», Ժ., էջ 37—39:

Միակ բանը, որի վերաբերյալ շկա համապատասխան գրավոր վկայություն, դա հարուստ մահմեդականների ունեցվածքը բնագրավելու վերաբերյալ Դավիթ բեկի արած կարգադրության և աղքատ Ալու կովի պատմություններն են, որոնք, ամենայն հավանականությամբ, հնարածին և հետսամուտ մտախիվներ են:

Մյուս ավանդության մեջ մենք գտնում ենք 1727 թվին Բեքիր և Արաբ-Ալի փաշաների բազմամարդ բանակի կողմից Հալիձորի բերդի պաշարման և այդ բերդում իր փոքրաթիվ կորիճներով ամրացած Դավիթ բեկի գործած քաջագործությունների հեռավոր արձագանքները, որոնց հետևանքով, ինչպես հայանի է պատմությունից, ոչ միայն կասեցվել են թշնամու կրկնվող կատաղի գրոհները, այլև, ի վերջո, նա ետ է շարավել բերդի պարիսպներից և դիմել է փախուստի: Այնտեղ գրտնում ենք նաև 1727 թվին Բարգուշատի Եղիվարդ գյուղի մոտ Ֆաթալի խանի և Դավիթ բեկի հավատարիմ զինակից Չավնդուրի գորապետ Թորոս իշխանի զորքերի միջև տեղի ունեցած արյունալի ճակատամարտի արձագանքները, որի ժամանակ ուրացող՝ Մելիք-Ֆրանգյուլի ստոր դավաճանությամբ, հայերը մեծ զոհեր կրելով և կոոցնելով իրենց զորապետին, ստիպված են լինում նահանջելու:

Պատմական վերոհիշյալ դեպքերն ու դեմքերը ժողովրդական ավանդության մեջ միախառնվել են իրար, ենթարկվել զգալի փոփոխության, ստացել վիպական նկատելի երանգավորում: Օսմանյան փաշաներին այստեղ փոխարինել է պարսից շահը (իմա Ֆաթալի խանը), իր քրտարմնելի դերով հանդես է եկել Եղիվարդի ճակատամարտի մասնակից Մելիք-Ֆրանգյուլը (որին ժողովուրդը նշավակել է «շուն» նախատակաՆով), Հալիձորի բերդի պաշարման՝ հայերի համար ունեցած հաղթական վախճանին փոխարինել է Դավիթ բեկի և նրա մարդկանց կողմից հարկադրաբար բերդը լքելու պատմությունը, որը հիշեցնում է Եղիվարդի վերոհիշյալ ճակատամարտի տխուր վերջավորությունը. գրույցի մեջ մուտք է գործել բերդի ջուրը կտրելու, նման դեպքերում հաճախակի կրկնվող, վիպական սովորական դրվագը:

Ինչ վերաբերում է նարգիսների դաշտի անվանակոչության հետ կապված պատմությանը, ապա վերջինս վիպական-ստեղծական մի դեղեցիկ դրվագ է, որով սյունեցիները յուրովի խորհրդանշել են թշնամու դեմ մղված ազատազրական մարտերի զոհ իրենց հերոսական գավակների անմահության և հավերժության գաղափարը:

Ակնհայտ են նաև քննության առարկա մյուս ավանդություններում առկա պատմական մոտիվները: Մխալ կլիներ, սահայն, այդ ավանդու-թյունների մեջ աեսնել լոկ իրական փաստերի սովորական արձանա-գրումներ: Ինչպես ժողովրդական ավանդությունների մեծ մասի մեջ, այնպես էլ այստեղ մենք գործ ունենք իրական երևույթների յուրօրինակ բանահյուսական վերարտադրության հետ, որոնք խորհրդանշում են անձնագորհ ու հերոսական այն պայքարը, որ մղել է հայ ժողովուրդը դարերի ընթացքում թուրքական բռնակալ փաշաների, բեգերի և նրանց հրոսակների դեմ:

Բերված օրինակներով շեն սահմանափակվում հայկական ավան-դություններում հիշվող այլազգի բռնակալները և հայրենի հերոսներն ու նահատակները: Նրանց մեջ մենք հանդիպում ենք նաև հոռոմեական ներոն կայսերն ու հայոց Տիրիթ (=Տրգատ) թագավորին (№ 745), Սա-լահադին Սուլթանին ու Երուսաղեմի հայերին (№ 693), Տուղրիլ բեկին ու Քաթուլ իշխանին (№ 754), Ղզլարի թաթար խանին և Հայաստանից առևանգված աղջիկներին (№ 418), Զիլի Սուլթանին և Սարգիս զորա-վարին (№ 755), Պարսից թագավորին ու Քմբկաբերդի հայ իշխանին (№ 759), Սելիմ խանին և Երանոս գյուղացի Զոհրաբին (№ 113), Լեզգի հրոսակներին և Աշտարակեցի Վարդիկին (№ 694), Իբրահիմ խանին և Խյուլի Արզումանին (№ 764), Երևանի խանին ու Եղվարդ գյուղացի հայ քաջուհուն (№ 765Գ), Նախիջևանի խանին և Քարահունջ գյուղացի անձ-նագորհ հորը (№ 766), Զաֆար կուլի բեկին և աշուղ Միսկին-Բուրջուն (№ 785) և շատ ուրիշների:

25. Այլազգի բռնակալների և հայրենի հերոսների ու նահատակ-ների մասին պատմող ավանդությունների գաղափարական էությունը:— Ըստ արժանվույն գնահատելով քննության առարկա ավանդությունների պատմական ու հրաշապատում մոտիվների ճանաչողական արժեքն ու նշանակությունը, պետք է հատկապես ընդգծել այդ ավանդությունների գաղափարական էության առանձնակի կարևորությունը իբրև այլազգի բռնակալների ու նրանց հրոսակների դեմ հայ ժողովրդի դարավոր պաշտպանական և ազատագրական մաքառումների նշանակալից վավե-րականների:

Հիշյալ կարգի ավանդությունների մեջ իրական դեպքերի ու դեմ-քերի հիշողությունը բանավոր ավանդամբ անցնելով դարից դար և սերնդից-սերունդ, ժամանակի հոլովումով ինքնաբերաբար ենթարկվել է նշանակալից փոփոխությունների ու խմբագրման, օժտվել ընդհան-

րացնող բնավորությամբ: Այդ ավանդությունների գործող անձ այլազգի բռնակալները և հայրենի հերոսներն ու նահատակները դարձել են հայոց դարավոր պատմության մեջ հաճախակի հանդիպող համապատասխան պատմական դեմքերի յուրահատուկ տիպական կերպարներ, իսկ նրանց կատարած գործողություններն էլ ստացել են նույնօրինակ տիպական հանդամանքների բնույթ:

Հայ ավանդախոսները մի կողմից նշուվակել ու դատապարտել են Հայաստանի բազմաթիվ թշնամիներին, անկախ նրանց ազգային պատկանելությունից, կրոնական դավանանքից, դիրքից ու աստիճանից, մյուս կողմից՝ դրվատել ու մեծարել են հայրենի հերոսներին, թագավոր լինեն նրանք, թե դորավար, իշխան թե հասարակ շինական, աշխարհական, թե հոգևորական: Ոչ մի քիչ թե շատ կարևոր հատկանիշ, որ բնորոշ է այլազգի բռնակալներին և հայրենի հերոսներին, չի վրիպել ժողովրդական ավանդախոսների ուշադրությունից: Կերտելով թշնամի և բարեկամ պատմական անձանց կերպարներ, նրանք ընդհանուր առմամբ հարազատ են մնացել նրանց իրական նախատիպերին: Սակայն, բեկվելով ավանդախոսների երևակայության մեջ և անցնելով նրանց ստեղծագործական բովով, պատմական այդ անձինք միաժամանակ ենթարկվել են նաև զգալի փոփոխությունների: Ժողովրդական ավանդախոսները, ամեն մեկը յուրովի, խտացրել կամ մեղմել են նրանց այս կամ այն գիծը, մարմնավորել են նրանց մեջ այն ամենը, ինչ մտածել ու զգացել են իրենք նրանց մասին: Ինքը լինելով պատմության հիմնական շարժիչ ուժն ու գլխավոր հերոսը, ժողովուրդը, ինչպես իր անդիր բանահյուսության մյուս ստեղծագործություններում, այնպես էլ ավանդությունների մեջ, իր աշխարհայացքի պատմական սոսճանափակության հետևանքով, սեփական դործերը հաճախ վերագրել է զանազան թագավորների, իշխանների ու դորավարների, նրանց մեջ մարմնավորված տեսել իր հատկություններն ու ցանկությունները:

Հայկական ավանդություններում հանդես եկող այլազգի բռնակալներին բնորոշ են, ամենից առաջ, նվաճողական, աշխարհակալական նկրտումները, ուրիշի հողը զրավելու, նրան ազատությունից զրկելու, նրա կայք ու գույքին տիրանալու ձգտումը, ժողովրդին կեղեքելն ու հարստահարելը: Մենք նրանց սովորաբար հանդիպում ենք ավերի ու ավարի պատրաստվելիս, սպանություններ, կողոպուտով կամ հարկահանություններ վերադաված, գերեվարելիս, առևանգելիս կամ հրկիզելիս: Այլազգի բռնակալի համար խորթ է ստեղծագործ, շինարար աշխատանքի,

խաղաղ ու հանգիստ կյանքով ապրելու հասկացողությունը: Նրա բարոյական դիմանկարի ամենաաչքի ընկնող կողմերից մեկը դավադրությունն ու խարդախությունն է: Իր շար նպատակներին հասնելու համար նա կանգ չի առնում որևէ միջոցի առջև, դրժում է պայմանն ու ուխտը, խախտում տված խոսքն ու երդումը: Դավադիր ու խարդախ լինելով, այլազգի բռնակալը միաժամանակ նաև ստոր է, արյունոտուշտ ու շար առանց ոճրագործ դաժանության ու դավաճանության նա չի կարողանում իրականացնել իր մտադրությունները: Նրա բնորոշ գծերից են նաև պարծենկոտությունն ու շողակրատությունը, փոքրոգությունն ու վախկոտությունը: Իրենց հասարակական ու անձնական վերոհիշյալ հատկանիշներով հիմնականում մոտ ու նման լինելով իրար, այլազգի բռնակալները միաժամանակ ունեն նաև իրենց տարբերիչ գծերը: Մեկն օրինակ նրանցից քսու է ու անինքնասեր, մյուսը մորթապաշտ է, երրորդը պարզամիտ է կամ հիմար, չորրորդը զերծ չէ խոհեմությունից, երբեմն նաև որոշ մեծահոգությունից:

Այլազգի բռնակալներին հաշկական ավանդություններում սովորաբար հակադրված են հայրենի հերոսները: Առաջինների նման սրանք ևս ծնունդ են համապատասխան հասարակական, քաղաքական և պատմական հանգամանքների, ժողովրդի կյանքում բախտորոշ դեր խաղացած իրադարձությունների: Ժողովրդական ավանդախոսները կարողացել են ճշմարտացիորեն բացահայտել նաև վերջիններիս բուն էությունը: Նրանց համոզմամբ հերոսականությունը կապված չէ միայն ֆիզիկական մեծ ուժի հետ: Այն, առաջին հերթին, բխում է այն նպատակից, որ հետապնդում են նրա կրողները: Պայքարի մեջ հաղթանակում ու հերոսանում են այնպիսի անձնավորություններ, ովքեր հետապնդում են բարձր ու վեհ նպատակներ, ում ոգեշնչում է ընդհանուրի բարօրության զաղափարը:

Ինչպես վիպական բանահյուսության հերոսների մեծ մասը, այնպես էլ հաշկական ավանդությունների լավագույն հերոսները ապրում ու զորժում են ժողովրդի ընդհանուր կյանքով ու շահախնդրություններով: Նրանք դաժան ու անսիրտ կովարարներ չեն: Լինելով մարդասիրական բարձր հատկություններով օժտված անձնավորություններ, նրանց խորթ է դաժանությունն ու վրիժառությունը: Ազգային հերոսները համարձակ են ու վճռական, տոկոն ու շրջահայաց, մեծահոգի ու անձնագոհ, ազնիվ ու շիտակ, հնարամիտ ու հեռատես, խոհեմ ու առաքինի: Նրանք գնահատում ու հարգում են ոչ միայն իրենց հայրենակից-

ների, այլև օտարների ազատութիւնն ու անկախութիւնը, աչքի են ընկնում ճնշվածների ու հարստահարվածների նկատմամբ ունեցած իրենց հոգատարութեամբ: Ազգային հերոսները անհանդուրժող են բռնութեան նկատմամբ, անողորմ ու անզիջում թշնամու հանդեպ: Ծիշտ է, հայկական ավանդութիւններում համարյա բացակայում է ազգային հերոսների կյանքի մյուս կողմերի (ընտանեկան հարաբերութիւն, սեր և այլն) դրսևորումը, սակայն, այդուհանդերձ, նրանք թողնում են բավական ամբողջական տպավորութիւն: Եվ դա բնական է, քանի որ նրանց էութիւնը բացահայտվում է ոչ թե անձնական կամ ընտանեկան հարաբերութիւններում, այլ հայրենիքի պաշտպանութեան համար մղած մարտերում: Ինչպես վիպական բանահյուսութեան մյուս ժանրերի (էպոս, վիպերգ...), այնպես էլ ավանդութիւնների հերոսների ճակատագիրը հերոսական լինելով, հաճախ ունի ողբերգական բնավորութիւն, այնքանով, որքանով որ նրանց անձնագոհ պայքարը թշնամու դեմ, վերջինիս գերակշիռ ուժերի պատճառով, միշտ չէ, որ պսակվել է հաջողութեամբ:

Ստեղծված լինելով պատմական տարբեր ժամանակներում և իրենց անհատական մի շարք գծերով տարբերվելով իրարից, հայկական ավանդութիւնների հերոսները՝ իրենց հասարակական ընդհանուր նկարագրով՝ իբրև ժողովրդի լավագույն հատկութիւնների ու նվիրական գաղափարների կրողներ, նրա ազգային բնավորութեան լավագույն գծերի խտացումներ, հարազատ ու մոտ են իրար: Նրանց մեջ հայ ժողովուրդը մարմնավորել է ազատութեան, անկախութեան, խաղաղութեան, աշխատասիրութեան, հայրենի հողի նվիրական լինելու վսեմ գաղափարները, որոնցով ինքը տողորված է եղել այլազգի բռնակալների ու վերջիններիս հրոսակների դեմ մղած իր դարավոր մահու և կենաց պաշտպանական և ազատագրական մաքառումների ողջ ընթացքում:

Այդօրինակ ստեղծագործութիւնների բնորոշ նմուշներից են.

Հայկի և Բելի ավանդութիւնը, բազմադարյան հայ բանահյուսութեան վաղնջական ստեղծագործութիւններից մեկը, որի մեջ ներդրված են այդ բանահյուսութեան գաղափարական էութեան և գեղարվեստական ձևի լավագույն հատկանիշները: Հիշյալ ավանդութեան մեջ մեր հեռավոր նախնիները բացահայտել են ազատ կյանքի և հարազատ հայրենիքի անկախութեան նվիրական գաղափարները, վիպական ձևով պատմել են այլազգի բռնակալների դեմ իրենց մղած առաջին հերոսա-

մարտերից մեկի մասին: Հատկանշական է այս առումով այն հանգամանքը, որ ըստ Հայկի և Բելի ավանդության՝ Հայաստան Էրկրի և հայ ժողովրդի ծագումն ու անունը կապվում են իր անկախության և ազատության համար պայքարող դյուցազն Հայկի անվան հետ:

Հայոց Տիրիթ (= Տրդատ) թագավորի և հռոմեացի Ներոն կայսեր ավանդությունը, ուր պատմվում է, թե ինչպես, երբ հայոց Տիրիթ թագավորը Հայաստանից Հռոմ է դալիս Ներոնից թագ ստանալու, Հռոմի իշխանները ցանկանալով ահաբեկել նրան, Տիրիթին տանում են ցույց տալու Հռոմի մեծամեծ ու երևելի շինությունները, այդ թվում նաև նրա ծերակույտի ժողովն ու բազմաթիվ սենյակները, ուր պահված էին հոմեական օրենսգրքերը: Երբ Տիրիթը ճաշի սեղան է նստում, Ներոնը նրան հարցնում է. «Հայոց աշխարհումն էլ այսպիսի օրենքներ կա՞ն»: Տիրիթը պատասխանում է. «Հայոց աշխարհի օրենքները, ճիշտ է, թվով քիչ են, բայց լավ օրենքներ են և ամեն մարդ պարտավոր է իմանալ դրանք. և եթե հայ ժողովուրդն այդ օրենքները լավ պահպանի, հոմեացիք չեն կարող շատ մոտենալ Հայաստանին»: Ներոն կայսրը դարմանքով հարցնում է. «Որո՞նք են Հայաստանի այդ օրենքները, որոնց մասին մենք դեռ չենք լսել»: Տիրիթը պատասխանում է. «Առաջին օրենքն այն է, որ մեր թուրք ժանգոտ լինի ու մանգաղը՝ հայելիի նման փայլուն: Երկրորդ օրենքն այն է, որ մեր դատարանի դուռը կանաչ խոտ բուսած լինի, իսկ տաճարի դուռն էլ միշտ ցեխոտ լինի» (№ 746):

Տվյալ ավանդության մեջ Տիրիթ թագավորի բերանով հայ ժողովուրդը դրսևորել է իր ազգային բնավորությանը հարադատ այնպիսի գծեր, ինչպիսիք են աշխատասիրությունը, շինարար ու խաղաղասեր ոգին, ազգային արժանապատվության բարձր գիտակցությամբ օժտված լինելը²:

¹ Հայոց Տիրիթ թագավորի վերոհիշյալ պատասխանը մոտիկից հիշեցնում է՝ «Թուրք թող ժանգոտ լինի», «Մանգաղը սուր (կամ փայլուն) լինի», «Դատարանիդ դուռը թող կանաչ բուսնի» հայկական ժողովրդական օրհնանքները:

² Ավանդության պատմական ատաղձը կազմում են մեր թվականության առաջին դարի երկրորդ կեսի հայ-հոմեական հարաբերությունները, երբ 62 թ. Ներոն կայսեր հանձնարարությամբ հոմեացի Պետրոս զորավարն իր զորքերի գլուխն անցած հարձակվում է Հայաստանի վրա՝ այն նվաճելու և հոմեական պրովինցիա դարձնելու նպատակով. երբ հայկական զորքերը Տրդատ առաջին (իմա՝ Տիրիթ) Արշակունի թագավորի զլխավորությամբ և պարթևների օգնական օգնությամբ, ուժեղ հակահարված տալով

Հայոց Արշակ թագավորի և պարսից Շապուհ Վարազի ավանդուքյունը, ուր պատկերավոր ու գեղեցիկ խորհրդանշված է հայ ժողովրդի անսահման նվիրվածությունն իր հարազատ երկրին, նրա անխզելի կայր հայրենի հող ու ջրի հետ: Հունական դիցաբանության հռչակավոր հերոս Անթեյի նման հայոց Արշակ թագավորն այստեղ կտրվելով հայրենի հող ու ջրից (իմա՛ իր ժողովրդից) թուլանում ու ընկճվում է Շապուհի հանդեպ, և ընդհակառակը, հաստատ կանգնելով այդ հողի ու ջրի վրա, գոտեպնդվում է և նոր լիցք ստանալով խիզախորեն դիմադրավում է ռխերիմ թշնամուն:

ՄՅԱԿՈՒՅԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

Հայաստանն իր աշխարհագրական դիրքի և քաղաքական անբարենպաստ պայմանների պատճառով դարեր շարունակ ենթարկվել է օտարերկրյա նվաճողների պարբերական հարձակումներին, դարձել կոտորածների, ավերի ու ավարի առարկա. չնայած դրան հայ ժողովուրդը չի դավաճանել իր ստեղծագործ բնավորությանը: Դիմադրավելով իր երկիրը խուժած թշնամու բազմամբոխ բանակներին և անհամար զոհերի գնով ազատագրելով նրանից հայրենի հողը, նա նոր ի նորո վերաշինել է իր ավերված քաղաքներն ու ավանները, ակոսել է խուպան մնացած դաշտերը, կերտել է ճարտարապետական իր հուշակապ կոթողները, դարգացրել գիրն ու գրականությունը, մտահոգվել ուսման ու լուսավորության տարածման գործով:

Հայ գիտնականներից, գրողներից ու արվեստագետներից շատերն անցյալում ստեղծագործել են ոչ միայն այն ժամանակ, երբ երկրում կարճատև խաղաղություն ու դադար է տիրել, այլև անգամ պատերազմների ու վտանգի ծանր տարիներին: Ծվարած հայրենի բնաշխարհի լեռնակարկառներում կամ վանքերի մթին խցերում, նրանք շարունակել են իրենց տրեւից ստեղծագործական նվիրումը:

Գեուես Մովսես Խորենացին անդրադառնալով 5-րդ դարում Հայաստանում գոյություն ունեցող քաղաքական ծանր վիճակին, երբ ինքը շարադրել է իր «Հայոց պատմությունը», ի միջի այլոց գրել է. «Հէնք

հոսմեացիներին, պարտության են մատնում նրանց. երբ ներոնն ստիպված է լինում ընդունելու հայերի առաջարկը՝ Հայաստանի անկախությունը ճանաչելու մասին, պայմանով, որ Տրդատը գնա Հոռոմ և անձամբ իր ձեռքով թագադրվի:

եկեալ անհատք և յուրվից կողմանց, դերփումն տանց և յափշտակութիւն ստացուածոց. կապումն դիւաւորաց և բանտք յայանեաց. յօտարութիւն վտարումն ազատաց և անթիւ նեղութիւնք ռամկաց, առումն քաղաքաց և քանդումն ամրոցաց. աւերումն աւանաց և հրդեհումն շինուածոց. սովք անբաւք և հիւանդութիւնք և մահք բազմօրինակք...»¹:

Նման պայմաններում է ստեղծվել նաև Եղիշեի նշանավոր «Վարդանանց պատմութիւնը», որի տարբեր էջերում մենք գտնում ենք հեղինակային այսօրինակ վկայութիւններ². «Ոչ ըստ կամաց արտօսրալիք ողբովք ճառագրեմք զբազում հարուածսն՝ յորում պատահեցաք և մեք իսկ ականատեսք լինելով»:

Մահն ու սարսափն է իշխել հայ մշակույթի գործիչներին նաև հաջորդ դարերում, երբ Հայաստանի վրա ծանրացել է բյուզանդական և արաբական տիրապետութեան լուծը, երբ նրա քաղաքներում ու գյուղերում իրենց ավերածութիւններն ու կոտորածներն են կատարել սելջուկ-մոնղոլական հորդաները, Իրանի բռնակալ շահերն ու սուլթանական արշունկզակ ջարդարարները:

Ապացույց՝ հայ հին ու նոր հեղինակների պատմագրական երկերից շատերի համապատասխան բովանդակութիւնը, այդ երկերի մի մասի բնորոշ վերնագրերը («Ողբ Եղեսիո», «Հիշատակարան աղետից», «Վերք Հայաստանի» և այլն), ինչպես նաև այն բյուրավոր սրտառուչ հիշատակարանները, որ թողել են մեր մաղաղաթյա մատչանների զրիչները:

Ահա թե ինչ է գրել այդ կապակցութեամբ միջնադարյան Հայաստանի անվանի իմաստասեր-փիլիսոփա և ուսուցիչ Հովհան Որոտնեցու սան Հակոբ գրիչը 1385 թվականին Երնջակի գավառի վրա «անօրենների» կատարած բարբարոսական արշավանքների առիթով. «Գծագրեցաւ մատենս ի թուականիս Հայոց ՊԼԵ, ի ժամանակիս, որ է գառն և լայրբեր...: Այլ մեք ընդ տիեզերահամբաւ և երանաշնորհ բարունապետիս Հայաստանեաց և վերագիտողի տեան Յովհաննու Որոտնեցոյ կայաք կարդալ և ի գրել ի համալսարան սորին, որ յայս անձուկ և խաւարեալ ժամանակիս փայլէր որպէս զարեգակն ի վերայ աշխարհի անուն սորին...: Եւ մինչդեռ անճառ ցնծութեամբ և բերկրալից ուրախութեամբ լցեալ կայաք... եկին և առին զբերդն Որոտան... Եւ կամէին ձերբակալ

¹ Մ. Խոսեանցի, Պատմութիւն Հայոց, Տիփսիս, 1913, գիրք Գ, գլուխ ԿԸ, էջ 365—366:

² Եղիշե, Պատմութիւն Վարդանանց, Տիփսիս, 1904, էջ 11, 24, 77 և հով.:

առնել զսուրբ բաբունիս մեր վասն հայրենեացն ժառանգութեան: Եւ առ կամօքն աստուծոյ զերծաւ ի նոցանէ և Բ ամ բոլոր յայլ և յայլ տեղիս շրջէր աշակերտօք հանդերձ կարդալով և ուսուցանելով: Եւ ես ծանրաբեռն մարմնով, զթուղթ և զօրինակ, զգրիչ և զթանաք ի յուս իմ բարձեալ, ի հետ գնացի, կարդայի, և որչափ ժամանէի՝ զսուրբ մատեանսս գրէի, բազում նեղութեամբ և շարշարանօք, զի ուր սկսա անդ ոչ էառ զկատարումն»¹:

Հար և նման վկայություն է թողել մեզ նաև մեր մոտիկ անցյալի նշանավոր պատմաբան Լեոն իր «Հայոց պատմություն» հեղինակային հիշատակարանի մեջ: Նա գրել է. «Վերջակետը դրի 1921 թվականի հունվարի 19-ին (ն.տ.), Մենդյան թաթախման երեկոյան, ժամը 6 և կեսին: Դառն ու նեղ ժամանակ է, աշխարհը տառապում է համաշխարհային պատերազմի հետևանքներից. Հայաստանում սով է: Ղարա-բեքի փաշան գրավել է Ղարսի ամբողջ շրջանը, Ալեքսանդրապոլը և շրջակաները: Ժողովուրդը արյուն-արցունք է թափում թյուրքի ձեռքին: Կոտորածներ, ավարառություն, տղամարդկանց քշում տանում են էրզերում և էլ հեռու, կանանց ու աղջիկներին բռնաբարում: Քսաներորդ դարում ենք, բայց հային դեռ կրծում և ծվատում է հին արյունոտ իրականությունը: Ե՞րբ է լինելու հանգստությունը, ով անողոք ու զարհուրելի ճակատագիր»²: Այսպես և շատ ուրիշներ:

Հակառակ քաղաքական, հաճախ էլ նյութական այն ծանր պայմաններին, որոնց մեջ ապրել և ստեղծագործել են հայ մշակույթի գործիչները, նրանց երկերը ընդհանրապես աչքի են ընկնում իրենց առաջավոր ու կենսահաստատ գաղափարներով, մշակուն և բարձր արվեստով: Այդ երկերի լավագույն նմուշները ըստ էության լինելով մաքառման ու պաշարի ստեղծագործություններ, ազատ են վրիժառության մարդատյաց ու արյունոտ միտումներից, հեռու հոռետես ու մոռյլ տրամադրություններից: Նրանց մեջ իրենց ցայտուն դրսևորումն են գտել Հայաստանի հասարակական լայն զանգվածներին հարազատ ու հասկանալի այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են՝ ազատասիրությունը, խաղաղասիրությունը, մարդասիրությունը, գովերգված և փառաբանված են՝ արդար աշխատանքն ու սերը, աշխարհիկ կյանքն ու վա-

¹ Լ. Խաչիկյան, ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 735:

² Լեո, Հայոց պատմություն, հատ. Բ, Երևան, 1947, էջ 735:

յեւթները, դատապարտված ու նստված են՝ ճնշումը, բռնությունը, շահագործումն ու ձրիակերությունը:

Ահա թե ինչու գիտություն, գրականության և արվեստի լավագույն ներկայացուցիչները Հայաստանում մեծ համարում են ունեցել ոչ միայն մտավորականության մեջ, այլև հասարակ ժողովրդի ամենալայն շրջաններում: Դրա պերճախոս ապացույցներից են այն բազմաթիվ ավանդություններն ու ավանդական զրույցները, որոնք դարերի ընթացքում հյուսվել ու պատմվել են մեզանում նրանց վերաբերյալ:

26. Հին շրջան:—Բազմադարյան հայ մշակույթի առաջին մեծ երախտավորը, որի մասին բավական շատ ավանդություններ և ավանդական զրույցներ են հորինվել մեր սամիկ ու շինական ավանդախոսների միջոցով, դա Մեսրոպ Մաշտոցն է՝ անդրանիկ հայ ուսուցիչն ու թարգմանիչը, գրողն ու գիտնականը:

Ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում, տարբեր դարերում հյուսված ու պատմված այդ ստեղծագործությունների մեջ յուրովի արտացոլված է Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու գործը, դրսևորված է նրա կատարած պատմական մեծագույն առաքելության համազգային ընդունելությունն ու բուն ժողովրդական ընկալումը, հրաշապատում պատկերներով ու մոտիվներով խորհրդանշված է այն բախտորոշ գերը, որ ունեցել են Մաշտոցի ստեղծած նշանագրերը հայերի ազգային, քաղաքական և մշակութային անկախության ու ինքնուրույնության հաստատման ու ամրապնդման համար:

Նշված ավանդություններում ու ավանդական զրույցներում պատմվում է, թե ինչպես Մեսրոպ Մաշտոցը հայերի համար տառեր գտնելու մտքով տարված, գիշերային տեսիլի ժամանակ մտովին պատկերացնում է այդ տառերը և նրանց նմանությամբ ստեղծում է հայոց գրերը (768 Ա, 768 Դ.), թե ինչպես նա լուսավորություն ու քրիստոնեություն տարածելու համար շրջում է Հայաստանում և հարևան վայրերում (Գողթն, Աղվանից աշխարհ, Բալու և այլն), կատարում է զանազան հրաշագործություններ (№ 741, 430, 632), թե ինչպես մեռնելուց հետո նրա ճկույթը թաղում են հայրենի Հացիկ գյուղում, իսկ մարմինը՝ Օշականում (№ № 739, 254), և այլն, և այլն:

Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության մասին պատմող վերահիշյալ և նույնօրինակ շատ ուրիշ ավանդությունների զգալի մասը կապված է Հայաստանի զանազան հիշարժան վայրերի, հուշարձանների ու առարկաների հետ:

Այդպիսիք են, օրինակ, Մեսրոպ Մաշտոցի քարայրը Գողթան գավառի Մսրվանիս գյուղի մոտ (№ 90), Մաշտոցի այրը Բալուի բերդի մոտ (№ 102), Մաշտոցներ կոչված բնակավայրը Սեանա լճի արևելյան ծայրին (№ 466), Մեսրոպ Մաշտոցի եկեղեցին՝ Բաքվի էրմանիքենդ թաղամասում (№ 637), Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը Տարոնի Հացիկ գյուղում (№ 739), Մեսրոպի գերեզմանը Բալուի հյուսիսային կողմում, Սուրբ Մեսրոպ լեռան մոտ (№ № 741), Մաշտոցի աղոթատեղին Բալուի շրջանի Ձեթ գյուղի արևմտյան կողմում (№ 858) և այլն:

Քննության առարկա բոլոր ավանդությունների մեջ իրար համաձուլված հանդես են եկել մի կողմից պատմական ճշմարտացի փաստերը, մյուս կողմից բանահյուս ժողովրդի ստեղծագործական երևակայության բնորոշ արտահայտությունն հանդիսացող հրաշապատում պատկերներն ու կերպարները:

Իրական-պատմական փաստեր են հայոց գրերի գյուտը, Մաշտոցի ուսուցչական և քարոզչական գործունեությունը ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում, հեթանոսության մնացորդների հալածանքը Գողթան գավառում և Աղվանից աշխարհում, Տարոն գավառի Հացիկ գյուղի հետ նրա ունեցած կապը, Վաղարշապատում վախճանվելն ու Օշականում թաղվելը, որոնք համընկնում են ժամանակակից ու ականատեսի այն վկայություններին, որ թողել է մեզ Մաշտոցի աշակերտ ու գործակից Կորյունը, իր «Վարք Մաշտոցի» կենսագրական հայտնի երկում¹: Պատմական հիմքից զուրկ չէ նաև բերված ավանդություններից մեկի մեջ եղած այն ակնարկը, որ վերաբերում է հայոց գրերի Բալուում ստեղծված լինելուն: Այստեղ հավանորեն դեր է խաղացել Մաշտոցի գործակից երկու աշակերտներից մեկի բալուցի լինելու հանգամանքը (խոսքը Հովսեփ Պաղնացու մասին է): Եղեսիայից (կամ Սամոսատից) Հայաստան դառնալիս Մաշտոցը, ըստ երևույթին, իր այդ աշակերտի խնդիրք-դրդումով, այցելել է իրենց դարձի ճանապարհին գտնվող նրա հայրենի Պաղին կամ Բալու քաղաքը², ուր և տեղացի հայերը առիթ են ունեցել լսելու Մաշտոցի կատարած գյուտի մասին:

¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941, էջ 5, 36, 92, 94 և հավ.:

² Հմմտ. Ս. Երեմյան, Հայաստանի քարտեզը Մեսրոպ Մաշտոցի դարաշրջանում (կցված է Կորյունի «Վարք Մաշտոցի» գրքին), Երևան, 1962:

Քերված ավանդությունների մեջ հնարածին և հրաշապատում բնույթ ունեն՝ Մաշտոցի կողմից գավազանի հարվածով քարից ջուր բխեցնելը, ճկույթի պատմությունը, Վաղարշապատից Օշական տանուլ ճանապարհին քարի պատովելն ու միջից ջուր բխելը, և նման այլ մոտիվներ, որոնց միջոցով ավանդաստեղծ ժողովուրդը հատկապես շեշտել է Մաշտոցի արտակարգ ընդունակությունների տեր մարդ լինելու հանգամանքը, գերբնական ու խորհրդավոր մեկնությունն տալով նրա կատարած ազգային-լուսավորական մեծ գործին:

Մաշտոցի նման ժողովրդական ավանդությունների հերոս ու գործող անձ են դարձել հայ մշակույթի հին շրջանի գործիչներից նաև ուրիշ նշանավոր դեմքեր: Այսպես.

Նղիշեի համար պատմում են, որ նա եղել է Վարդան Մամիկոնյանի զինվորն ու դպրապետը, մասնակցել է Ավարայրի ճակատամարտին: Վարդանի զոհվելուց հետո, նա թողել է զինվորական ծառայությունը, դարձել է ճգնավոր Ռշտունյաց երկրում և գրել է իր «Վարդանանց պատմությունը»: Ասում են նաև, որ երբ Նղիշեն վախճանվել է, նրա վրայ լույս է իջել երկնքից: Մարդիկ տեսնելով այդ հրաշքը, եկեղեցի են կառուցել նրա գերեզմանին, որտեղ դրանից հետո սկսել են կատարվել հիվանդների բազմաթիվ բժշկություններ: Մի օր էլ լեռան վրայից մի բորոտ վիշապ է իջել և հառաչելով ու բառաչելով սկսել է լիզել Նղիշեի գերեզմանը: Վիշապն իսկույն առողջացել է և մի պայծառ աղ թողնելով նրա գերեզմանին, հեռացել է: Նղիշեի եկեղեցու դուռը միշտ բաց է եղել թե հայ և թե քուրդ ուխտավորների համար: Նա շատ անգամ երևացել է նրանց երազում՝ իբրև կարմիր ձիու վրա նստած մի զորական կամ իբրև ճերմակամորուք վարդապետ (№ 731):

Ավանդությունը ուշագրավ է նախ և առաջ իր պարունակած կենսագրական արժեքավոր տեղեկություններով (Նղիշեի՝ Վարդան Մամիկոնյանի զինվոր ու դպրապետ լինելը, նրա անձնական մասնակցությունը 451 թ. պատերազմին), որոնք լրացնում ու հարստացնում են պատմիչի կյանքի վերաբերյալ գրավոր աղբյուրներում եղած կցկտուր ու աղքատ տվյալները: Պակաս նշանակալից չեն նաև Նղիշեի սրբացվելու հանգամանքը և այն հրաշապատում մոտիվները, որոնցով ներթափանցված է ամբողջ ավանդությունը (երկնքից լույս իջնելը, հիվանդ մարդկանց և վիշապին բուժելը, գերեզմանի՝ ուխտատեղի լինելու հանգամանքը): Դրանք պերճախոս ապացույց են այն լայն ժողովրդականության, որ վայելել է պատմիչը թե իր ժամանակակիցների և թե հա-

ջորդ սերունդների մեջ՝ իբրև Վարդանանց հերոսամարտի գործոն մասնակիցներից մեկը և մանավանդ իբրև այդ հերոսամարտի անմահ տարեգիրը:

Դավիթ Անհաղթի մասին ասում են, թե նա 60 ուրիշ իմաստասերների հետ մասնակցում է Աթենքում կայացած իմաստունների մրցումին: Դավիթը մեծ հաջողությամբ մեկնում է քաղաքում կանգնեցված հատուկ պղնձյա բարձր սյան վրա գրված յոթ իմաստասերների խոսքերը և արժանանում մրցույթի դատավորների հիացմունքին ու փալլուն դնահատականին: Այդ առիթով Դավթի ընկերները նստեցնում են նրան ակներով ու մարգարիտներով զարդարված ոսկե ապարի վրա և ուսերին առած սկսում են ման ածել քաղաքի շուրջը՝ «անհաղթ Դավիթ» ցնծագին բացականչություններով: Դրանից հետո Դավթի անունը մնում է Դավիթ Անհաղթ (№ 771):

Ավանդության մեջ, օգտագործելով Դավիթ Անհաղթի Աթենքում ուսանելու և արտակարգ ընդունակությունների տեր մարդ լինելու կենսագրական փաստերը¹, հայ ավանդախոսները վիպական ձևով (60 հոգու հետ մրցույթի մասնակցելու պատմությունը, անհաղթ ածականի ստուգաբանությունը) բացահայտել են Դավիթ Անհաղթի մեծ հռչակը, իբրև հին աշխարհի նշանավոր փիլիսոփաներից մեկի:

27. Միջին դարեր:—Հին շրջանի գիտնականների և պատմիչ-գրողների հետ միասին մեզանում ժողովրդական ավանդախոսների ուշագրության առարկա են դարձել հայոց միջնադարյան գեղարվեստական գրականության, մասնավորապես միջնադարյան հայ քնարերգության նշանավոր ներկայացուցիչները, մի քնարերգություն, որը Վ. Բրյուսովի բնութագրմամբ հանդիսանում է «մարդկային ոգու ամենասքանչելի հաղթանակներից մեկը, որպիսիք երբևէ ճանաչել է համայն աշխարհի տարեգրությունը»²:

Առանձնապես շատ ու տարածված են եղել Գրիգոր Նարեկացու մասին հյուսված ժողովրդական ավանդություններն ու ավանդական գրույցները: Բանահյուսական այդ ստեղծագործությունների գոյության ու տարածման փաստը պայմանավորված է գրական այն մեծ հռչակով, որ ունեցել է նա հայության ամենահոծ զանգվածներում վերածնության շնչով տոգորված իր խորախորհուրդ և բարձրարվեստ ստեղծագործու-

¹ Տե՛ս Գ. Զարեհնալյան, Հայկական հին գպրության պատմություն, Վենետիկ, 1886, էջ 296—301:

² В. Брюсов, Поэзия Армении, М., 1916, էջ 7:

թյուններով, մասնավորապես՝ համամարդկային և ազգային նշանակալից հարցեր արժարժող իր «Ողբերգության մատյանով» կամ «Նարեկով»: Գրական իսկական մի կոթող, որը օտարների իսկ կողմից համեմատվել է Հոմերոսի, Գանթեի, Շեքսպիրի ու Գյոթեի գործերի հետ, համարվել հայ ժողովրդի մշակույթի շափանիչը, իսկ նրա հեղինակն էլ՝ տառապած և հանուն հոգեկան մեծության, հանուն անբծության՝ մեղքի դեմ մաքառած, ազգային համընդհանուր խոր ապրումների, մեծ քաղաքակրթության տեր մի ժողովրդի հույզերի ու մտորումների արտահայտիչը¹: Մի ստեղծագործություն, ուր Թումանյանի բառերով ասած՝ «հայելիզուն չի որ խոսում է, բերանը չի որ պատմում է, կրակված սիրտն է որ այրվում է երկիրը բռնած, տանջված հոգին է, որ մռնչում է մինչև երկինք»²: Բնատուր հանճարի կատարյալ մի հրաշագործություն, որը ընթերցողին հիացնում է հեղինակի ստեղծագործական արտակարգ երևակայությամբ, անօրինակ բուռն լեզուամներով, բանաստեղծական անկրկնելի պատկերներով:

Հայ ժողովուրդը ներքին մի բնազդով զգացել է Նարեկացու «Ողբերգության Մատյանի» վերոհիշյալ արժանիքները, իր հոգու աչքերով յուրովի թափանցել նրա էության խորքերը և ըստ այդմ այն համարել իսկական մի հրաշալիք, իսկ նրա հեղինակին էլ՝ կատարյալ հրաշագործ մի էակ:

Ահա թե ինչով պետք է բացատրել ոչն փաստը, որ բազմաթիվ հայ բնատանիքներում, անկախ վերջիններիս ընչքային ու կրթական վիճակից, «Նարեկը» դարեր շարունակ եղել է ամենանվիրական ու հարգի գրավոր մատյանը, որին վերագրվել է ոչ միայն հոգեկան, այլև ֆիզիկական ցավեր բուժելու մեծ զորություն: Ահա թե ինչու Մեսրոպ Մաշտոցի նման ժողովուրդը սրբացրել է նաև Նարեկացուն, ուխտավայր դարձրել Վասպուրականի Նարեկա վանքում գտնվող նրա գերեզմանը: Ահա թե ինչու Նարեկացու մասին նրա ստեղծած բազմաթիվ ավանդություններն ու ավանդական զրույցները դարերի ընթացքում, բանավոր ու գրավոր ուղիներով տարածվել են Արևմտյան և Արևելյան Հայաստանի զանազան կողմերում և հայաբնակ այլ վայրերում, Ռշտունյաց երկրի Նարեկ գյուղից մինչև Ռուսաստանի հայաշատ Աստրախան քաղաքը³,

¹ «Մատյան Ողբերգությանը ֆրանսերեն», տես «Հայրենիքի ձայն», 1965, № 37:

² Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 158:

³ Ավելորդ չենք համարում այստեղ արձանագրելու, որ Աստրախան քաղաքում է գրված, ավելի ճիշտ ընդօրինակված, Նարեկացու մասին ժողովրդական ավանդություններ

կապվել Հայաստանի սահմաններում և նրանից դուրս գտնվող բազմաթիվ հիշարժան վայրերի, հուշարձանների ու առարկաների հետ¹, ստացել համահայկական-համաղգային նշանակություն:

Գրիգոր Նարեկացու մասին պատմող ժողովրդական ավանդությունները գաղափարական և ճանաչողական նշանակալից արժեք ներկայացնող բանահյուսական վավերականներ են²: Նրանց մեծ մասի էությունը կազմում է այն սրտացավ ու ջերմ վերաբերմունքը, որ ցու-

ու գրույցներ պարունակող ամենահարուստ ձեռագիր ժողովածուն՝ «Վարք և պատմություն սրբոյն Գրիգորի Նարեկացոյն» ընդհանուր խորագրով, որ պարունակում է թվով 17 ուշագրավ ավանդություններ և գրույցներ գրաբար լեզվով: Այդ ժողովածուն ներկայումս գտնվում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի բազմահազար ձեռագրերի շարքում, 9861 թվահամարի տակ: Թե ե՞րբ, որտե՞ղ և ի՞նչ հանդամանքներում է ստեղծվել այն՝ հայտնի չէ: Ժողովածուի մասին որոշ տեղեկություն է տալիս նրա վերջում գտնվող գրչական հետևյալ համառոտ հիշատակարանը. «Եւ պարտ է գիտել, թէ զպատմութիւնս սուտի գրեցաւ, կամ յո՞րում ժամանակ: Ի ՌՃԿԲ (= 1713) Թուականութեանս մերում եկն թարիզեցի Տէր Մարտիրոսն ի քաղաքս Թփիսիզ, Գրիգոր Նարեկայ աշուճն և կոնդակովն, ու տեսեալ Մովսէս քահանային զլիակատար պատմութիւնս, ցանկացաւ սմայ, և յոյժ փափագմամբ ետ գրել ձեռամբ զակամեցի յոգնիմաստ Սարգիս քահանային: Ետ ժամանակաց յօրինակեցաւ ձեռամբ Գրիգոր Կղերիկոս Մանուկեան, ի փառս հրաշագործողին Աստուծոյ, և ի պատիւ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական վարդապետին: Արդ, ով ոք հանդիպիք սմա ընթեռնելով կամ օրինակելով, յիշեցիք ի յազօթս ձեր միով հայրմերիւ և դուք յիշեալ լիջիք առաջի Աստուծոյ: Ամէն:

Գրեցաւ ի Աստրախան քաղաքի, ի 1837 թուականիս փրկչականի և ի յամսեանն ղեկավարերի» (տե՛ս Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 9861, էջ 22բ—23ա: Այս ձեռագրի վրա, իրարից անկախ և տարբեր ժամանակ, մեր ուշագրությունն են հրավիրել Մատենադարանի տնօրեն Լ. Խաչիկյանը և ձեռագրական բաժնի վարիչ Ս. Եղանյանը: Օգտվելով առիթից երկուսին էլ հայտնում ենք մեր շնորհակալությունը):

¹ Իբրև օրինակ հիշենք՝ Նարեկացու քարերը Վասպուրականի Նարեկ, Խարզիթ գյուղերի և Նարեկա վանքի մոտակայքում (№ 190 Ա, Բ և Գ), Նարեկացու աղոթատեղին Վասպուրականի Նարեկ գյուղի մոտ (846), Նարեկացու գիճին և Կարոս Խաչը Վասպուրականի Ձեփ գյուղում (322 Բ, 774 Ի), Առտեր կղզին Վանա լճում (224), Նարեկացու տունը Եվրոպիայի արևմտյան կողմում (№ 861). և այլն:

² Գրանցից մի քանի նմուշներ են միայն տպագրված: Գոյություն չունի նաև ուսումնասիրություն այդ մասին: Եղածը առանձին ակնարկներ ու դիտողություններ են՝ արված այս կամ այն առիթով (տե՛ս Մ. Արեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք Ա., Երևան, 1941, էջ 524 (Նարեկացու կենսագրության առնչությամբ), Հովհ. Թվկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 65—71 (Թվկուրանցու «Գեղ մի կայր Նարեկ ասեն» սկզբնատողով վիպական տաղի առիթով), և այլն:

ցարեբրում է Նարեկացին հասարակ մարդկանց նկատմամբ, օգնելով վերջիններիս նրանց առաջ ծառայած դժվարությունների և պատահած դժբախտությունների ժամանակ: Ըստ այդ ավանդությունների՝ Նարեկացին կամավոր իր վրա է վերցնում հարզիթ գյուղի մեռած հովվի պարտականությունը և ստացած վարձը տալիս է նրա անօգնական մնացած կնոջն ու յոթ որբերին (№ 774 Թ.), աղոթելով աստծուն, մեջտեղից երկու կես է անում այն վեմ քարը, որը չէին կարողանում ջարդել և ճանապարհից հեռացնել վանքի առուն փորող մշակները (№ 774 ԺԲ), թողություն և արքայություն է հայցում աստծուց Տիգրիս գետի վրա կամուրջ կապող վարպետի համար, որը կոսպաշտ լինելու պատճառով, մեռնելուց հետո դժխա էր ընկել (№ 774 ԺԳ), աստծու միջոցով պատժել է տալիս շահամուլ տանուտիրոջը, որը կիրակի օրերն անգամ շարաշար աշխատեցնում էր իր 40 մշակներին (№ ԺԴ), աստծու օգնությամբ կենդանացնում է մեռած նորապսակ երիտասարդին, անհուն խնդություն ու երջանկություն պատճառելով նրա ողբացող ծնողներին ու հարսնացուին (№ 774 Լ), կենդանացնում է աղքատ պառավի՝ երկանքի քարի տակ մնացած թխսկանին ու ձագերին (№ 774 Բ), խաչակնքելով՝ չոր քակորը թարմ լավաշ է դարձնում, որով կերակրվում են քաղցած հոտաղները (№ 774 Ճ), ծարավ մարդկանց համար դալտղանի հարվածով ջուր է բխեցնում չոր քարածայուից (№ 774 ՃԱ), վիրավոր անգամալուծի խնդիրքով նրան շալակած մի գյուղից մյուսն է տեղափոխում (№ 774 Զ) և այլն:

Գրիգոր Նարեկացուն նվիրված ժողովրդական ավանդությունների մեջ պատմվում է նաև այն դավերի ու ամբաստանությունների մասին, որ նյութվում են նրա դեմ:

Պատմում են, օրինակ, որ Նարեկացին մինչև կրոնավոր դառնալը հովիվ է եղել Վանա լճի ափին գտնվող հարզիթ գյուղում: Գրիգորի թշնամիները մի անգամ հարձակվում են նրա վրա և ուզում են ծեծել: Նարեկացին թաքնվում է վեմ քարի ետևում, որը գոգավոր ձև ստանալով, իր մեջ է առնում նրան: Թշնամիները անցնում են քարի կողքով և շեն նկատում Նարեկացուն (№ 190Ա):

Մեկ ուրիշ ավանդությամբ՝ մի քանի հաչաղկոտ (= նախանձ) ու սուպո (= բիրտ) մարդիկ բամբասում ու շարախոսում են Նարեկացուն իբրև հերձվածողի: Իշխաններն ու եպիսկոպոսները հավաքվելով որոշում են դատի տալ նրան: Այդ նպատակով նրանք հրավիրակներ են ուղարկում Նարեկացու մոտ: Սա հեղությունը ընդունում է իր մոտ եկած

մարդկանց և հացի հրավիրելով, նրանց առաջները դնում է երկու տապակած աղալնի: Օրն ուրբաթ է լինում: Հրավիրակները հիշեցնում են Նարեկացուն պասի մասին: Սա ներողութուն է խնդրում նրանցից պասը մոռացած լինելու համար և տոաջարկում է, որ նրանք հրամայեն աղալնիներին թռչելու: Հյուրերը չեն կարողանում անել այդ: Նարեկացին ինքն է հրամայում: Նրա խոսքով տապակած աղալնիները թև առնելով թռչում, դնում են: Հրավիրակները զարմանում և սարսափում են աչքով տեսած հրաշքից, գալիս պատմում են այդ մասին իրենց ուղարկող իշխաններին ու եպիսկոպոսներին, և Նարեկացու դեմ նշույթված ամբաստանությունը խափանվում է (№ 7742):

Վերահիշյալ բոլոր ավանդությունների մեջ Գրիգոր Նարեկացին հանդես է գալիս իբրև մի գաղափարատիպ, իբրև յուրօրինակ մի սուրբ: Ի տարբերություն քրիստոնեական եկեղեցու սովորական սրբերի, որոնք հիմնականում ծառայում են կրոնին և եկեղեցուն, Նարեկացու մտահոգությունների գլխավոր առարկան հասարակ ժողովուրդն է, վերջինիս հուզող կենսական հարցերը: Նրա կյանքի ու գործի պատմությունը, ըստ ավանդությունների, ոչ այլ ինչ է, բայց եթե հարազատ ժողովրդի լայն խավերի զբաղմունքի, կենցաղի ու հասարակական հարաբերությունների բանահյուսական տարեգրությունը:

Ունենալով հիմնականում հրաշապատում բնավորություն, Նարեկացու մասին պատմող ժողովրդական ավանդություններն ու զրույցները զերծ չեն նաև որոշակի պատմական ատաղձից:

Իրական ու ճշմարտացի են, նախ և առաջ, այդ ավանդությունների ու զրույցների գործողության վայրերը: Պատմական Հայաստանի Վասպուրական և Տուրուբերան նահանգներում գտնվող այն գավառները, քաղաքները, գյուղերն ու ավանները (Վան, Մուշ, Վարազ, Աղթամար, Արճեշ, Նոր-գեղ, Բելու, Զախավանց, Պատականց, Կուզաղիշ, Խարզիթ, Ներքին Գաղոխ, Արտոնք և այլն), վանքերն ու մենաստաններն (Նարեկա վանք, Սուրբ Կարապետի վանք, Վարդանանց վանք, Ապարանից Սուրբ Խաչ վանք և այլն) են դրանք, ուր ծնվել, ապրել, ուսանել, բարոգել, այցելել ու ստեղծագործել է ինքը՝ Նարեկացին:

Թեև ժամանակագրական ու այլ կարգի զանազան խախտումներով, բայց ըստ էության իրական ու ճշմարտացի են իրենց արմատներով նաև Նարեկացուն նվիրված ժողովրդական ավանդություններում առկա կենսագրական ու կենցաղային որոշ մոտիվներ, պատմական դեպքեր, դեմքեր, հարաբերություններ, որոնք գոյություն են ունեցել միջնադար-

յան Հայաստանում նարեկացուն շրջապատող միջավայրում, նրա ապրած ժամանակաշրջանում, նրանից առաջ և հետո:

Այդպիսիք են այն հիշատակութունները, որոնց համաձայն նարեկացին եղել է Անանիա Շիրակացու քեռորդին (պետք է լինի Անանիա նարեկացու) և Խոսրովի որդին, մանուկ հասակում աշակերտել է Նղիշե վարդապետին (№ 774Բ), աստծու հրամանով «մեկ առեկ, հազար է սովորել», եղել է շատ «կարդացվոր», «ուսումնագետ» մարդ (№ № 774 ժԶ, ԻԱ, ԻԳ), և այլն:

Առանձնապես ուշագրավ են տվյալ առումով վերևում բերված այն ավանդութունները, ուր խոսվում է նարեկացու հակառակորդ եպիսկոպոսների, իշխանների և ուրիշ «սոպո» և «հաշաղկոս» մարդկանց մասին (№ № 190Ա, 774Զ):

Ինքնաբերաբար հարց է առաջանում: Գրանք նույն այն անձնավորութունները չե՞ն արդյոք, որոնց մասին հիշատակում է ինքը բանաստեղծը իր «Ողբերգության մատյանի» մեջ, իբրև իր «թշնամիների», «բամբասողների» և «խածնողների»: Նման ենթադրության համար որոշ հիմք են տալիս այն կասկածները, որ եղել են ժամանակին նարեկացու հոր, նրա ուսուցչի և իրեն՝ Գրիգորի նկատմամբ, իբրև հերձվածողների: Ահա ինչ է գրել այդ կապակցությամբ Մ. Աբեղյանը նարեկացուն նվիրված իր մեծարժեք ուսումնասիրության մեջ. «Թե ինչո՞ւ են թշնամացել և բամբասել նրան (իմա նարեկացուն—Ա. Ղ.) այդ չի իմացվում նրա Մատյանից. անհավանական չէ «Յայամաուրբի» հաղորդածը, թե նրան ամբաստանում էին իբրև հերձվածողի: Նրա հայրը, Խոսրով Անձևացյաց եպիսկոպոսը, իր ծերության հասակում բանադրվում է իրեն ձեռնադրող Անանիա Մոկացի կաթողիկոսից իբրև հերձվածող, ևրա ուսուցիչ Անանիա նարեկացին, ինչպես իր Խոստովանության Գրից երևում է, «մերձ ի մահ վիճակում, ոչ ինքնաբերաբար, այլ կատարելով կաթողիկոսի հրամանը՝ անիծել է թոնդրակեցիներին», ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ Խոսրով եպիսկոպոսի և կաթողիկոսի միջև տեղի ունեցած վեճերից հետո կարող էր կասկած ծագել և Անանիա նարեկացու ուղղափառության մասին, քանի որ խնամիական կապեր կային սրա և Խոսրովի միջև և Անանիա նարեկացուն էր աշակերտում Խոսրովի որդին՝ պատանի Գրիգորը: Շատ հավանական

1 Գր. նարեկացի, Մատենագրութիւնք, 1840, էջ 291:

է, որ նույն կասկածն եղել է և Գրիգոր Նարեկացու մասին, քանի որ սա էլ գրած ունի թուղթ ընդդեմ թոնդրակեցի աղանդավորների»¹:

Մ. Աբեղյանի առաջ քաշած վերոհիշյալ վարկածը մեր կարծիքով քավական հիմնավոր է և հաստատվում է համապատասխան առարկայական կուլաններով: Այդ վարկածի հաստատմանը նպաստում են ամենից առաջ Նարեկացու գրական ստեղծագործությունները, մասնավորապես նրա «Ողբերգության մատյանը»: Այստեղ առկա են այնպիսի միտումներ ու գաղափարներ, որոնք կարող էին դժգոհություն առաջացնել ժամանակի հոգևոր և աշխարհիկ վերնախավերի շրջանում, հիմք տալով նրանց հերձվածող կամ աղանդավորների համակիր համարելու «նարեկի» հեղինակին:

Այդօրինակ միտումներից ու գաղափարներից են.

ա. Նարեկացու համարձակությունը՝ շրջանցելով պաշտոնական եկեղեցուն և անմիջական հաղորդակցություն մեջ մտնելով երկնային տիրոջ հետ, «ի խորոց սրտից» բխած իր խանդավառ խոսքով՝ հանուր մարդկության կատարած մեղքերի համար թողություն հայցելու անձամբ աստծուց, որը հիշեցնում է միջնադարյան հայ աղանդավորների (մծղնեականներ, թոնդրակեցիներ) համապատասխան դիրքորոշումը, որով աստծու հետ հոգևոր հաղորդակցությամբ միացած մարդու համար ավելորդ էին համարվում եկեղեցին ու նրա խորհուրդները (մարդը իր գործած մեղքերի համար պետք է անձամբ խոստովաներ միայն աստծուն, քանի որ ոչ եկեղեցին և ոչ էլ քահանան նրան ոչ մի օգնություն չէին կարող ցույց տալ այդ գործում)²:

բ. «Ողբերգության մատյանի» հեղինակի խորհրդածությունները՝ մի կողմից «խոռվարար առաքյալների», «անկնդրուկ քահանաների», «գողամիտ հաղարապետների», «շահարար վաճառականների», «թարմատար թագավորների», «ոգեկործան կայսրերի» և մյուս կողմից՝ «ամենուր մրրկող աղքատության հնոցի» մասին, որոնք հեռվից-հեռու արձագանքում են ժամանակակից հասարակական կյանքում տիրող սոցիալական անհավասարության ու անարդարության վերաբերյալ պալլիկյանների և թոնդրակեցիների մտքերին, համընկնում գույքերի արգար բաժանման, մասնավոր սեփականության վերացման, եկեղեցական կալվածների համայնացման նրանց առաջադրած պահանջներին:

¹ Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Գ., Երևան, 1968, էջ 79—80:

² Ն. Տեր-Մինասյան, Միջնադարյան աղանդների ծագման և զարգացման պատմությունից, Երևան, 1968, էջ 76, 168:

դ. «Ողբերգության Մատյանի» էությունը կազմող «մարդապաշտության» և «աստվածապաշտության» գաղափարները, որոնք զգալի չափով համընկնում են մարդու և աստծու նկատմամբ թոնդրակեցիների մոտեցմանը: Պերճախոս է այս տեսակետից այն փաստը, որ հակադրվելով իրենց նյութապաշտության մեջ մեղադրողներին, թոնդրակեցիները հավաստել են, որ իրենք ոչ թե նյութապաշտ, այլ աստվածապաշտներ են, դրա համար էլ ոչինչ են համարում՝ խաչը, եկեղեցին, քահանային, անդոսնում են եկեղեցական ամուսնությունն ու պսակը (նրանց կարծիքով կատարյալ սերն այն է, երբ մարդիկ սիրով են մերձենում միմյանց: Դա բխում է աստծու պատվիրանից և հաճելի է Քրիստոսին, որովհետև ինքը աստված սեր է և սիրով միավորվելն է կամենում, և ոչ թե եկեղեցական պսակը)¹:

Մ. Աբեղյանի վարկածի անուղղակի հաստատումն են, մեր կարծիքով, նաև նարեկացու մասին պատմող հայ ժողովրդական ավանդությունները, որոնց մեջ դժվար չէ նկատել այն միտումների ու գաղափարների բանահյուսական յուրօրինակ անդրադարձումները, որ մենք աեսանք վերևում, մի կողմից «Ողբերգության մատյանի», մյուս կողմից՝ թոնդրակեցիների և աղանդավորական այլ ուսմունքների մեջ: Այդ ավանդությունների ճանաչողական գլխավոր արժեքը, տվյալ դեպքում, ոչ այնքան նրանց մեջ արձագանք գտած պատմական այս կամ այն փաստի ճշգրտությունն է, որքան էլ նշանակալից լինի այդ փաստը, ինչքան պատմության տրամաբանությունը, դառաչբջանի ընդհանուր մրրնությունը, և հատկապես այն կարծիքն ու ըմբռնումը, որ ունեցել են Հայաստանի ժողովրդական լայն զանգվածները հաննաբեղ գրողի մասին: Ըստ պատկերի յուրում ռամկացնելով Գրիգոր Նարեկացուն և հրաշագործ հատկություններ վերագրելով իր սիրելի հերոսին, հայ ժողովուրդը նրան դարձրել է սեփական նվիրական հույզերի ու մտորումների մարմնացումը, իր երազանքների ու ակնկալությունների իրականացնողը, նրա միջոցով մերկացրել ու դատապարտել է շարիքն ու անարդարությունը, հաստատել ու փառաբանել է բարին ու արդարը:

Ժողովրդական ավանդությունների մեջ առկա վերոհիշյալ անդրադարձումներից են.

ա) Աստծու կարևոր մասնակցությունը ավանդությունների մեծ մասի մեջ՝ նարեկացու կատարած հրաշագործությունների ժամանակ:

¹ Նույն տեղում, էջ 155, 178:

բ) Նարեկացու և պաշտոնական եկեղեցու ներկայացուցիչների միջև մի քանի ավանդույթյուններում առկա հակամարտությունը:

գ) Այն առաստիճան ու բողոքանքներ մարդասիրությունը, որ երևան է բերում Նարեկացին անխտիր բոլոր ավանդույթյուններում:

դ) Առանձին ավանդույթյուններում պաշտոնական եկեղեցու կողմից օրենքի ուժ ստացած կրոնական ծեսերի ու խորհուրդների նկատմամբ Նարեկացու կատարած զանցառումները (ուրբաթ օրվա պասի մոտացումը, միջնորդությունը աստծու առաջ՝ դժոխքից դրախտ տեղափոխելու Տիգրիս գետի վրա կամուրջ շինող կռապաշտ վարպետին):

ե) Հասարակ մարդկանց (հովիվ, աղքատ պառավ, վանքի կամ տանուտիրոջ համար աշխատող մշակներ) նյութական ու աշխատանքային ծանր պայմանները բարելավելու գործում Նարեկացու դրսևորած մտահոգությունը մի շարք ավանդույթյուններում և այլն:

Բերված փաստերը, թվում է, թե բավական որոշակի լույս են սրբուում Գրիգոր Նարեկացու՝ թոնդրակեցիների հետ ունեցած կապի վրա: Նույն այդ փաստերը միաժամանակ հավաստում են մի իրողություն, որ ժողովրդի ընդերքից ելած հնօրյա ավանդախոսները ավելի ճիշտ են ընկալել դադափարական այն աղերսը, որ իրականում գոյություն է ունեցել թոնդրակեցիների և Նարեկացու միջև, քան մեր օրերի որոշ գիտնականներ: Գյուրագայթորեն խաբվելով թոնդրակեցիների դեմ Նարեկացու կողմից հարկադրաբար գրված «թղթից», այդ գիտնականները անջրպետ են ստեղծել մեծ բանաստեղծի և հայ հասարակական մտքի ժամանակի առաջավոր հոսանքներից մեկի ներկայացուցիչների միջև: Նրանք անտեսել են, որ Նարեկացին ոչ առաջինն է և ոչ էլ վերջինը ինչպես անցյալի, այնպես էլ նոր ժամանակների գիտության ու մշակույթի ականավոր գործիչների շարքում, որոնք իրենց նկատմամբ տարվող հալածանքներից խուսափելու համար ստիպված են եղել առերես դատապարտել սեփական իսկ դավանանքները:

Հայ գրականության, գիտության ու արվեստի միջնադարյան գործիչներից ժողովրդական ավանդույթյունների գործող անձ ու հերոս են դարձել ուրիշ նշանավոր դեմքեր ևս: Այսպես.

Մխիթար Գոշի մասին ասում են, թե մի անգամ նա երազում տեսնում է աստծուն, որը նրան ասում է. «Մխիթար, չոթ տարի հացի առատություն է լինելու, չոթ տարի էլ՝ շորաչին. առատության ժամանակ պաշար հավաքի, որ սովի ժամանակ ժողովուրդը նեղություն չկրի»:

Լսելով աստծու խոսքը, Մխիթարը մեծ ամբարներ է շինել տալիս և հացի

առատ տարիներին վանքի միջոցներով ցորեն է լցնում այդ ամբարները: Երբ յոթ տարի անց սկսում է սովը, Մխիթարը մի գուշ (փայտե կտոր աման) է շինել տալիս և նրանով ցորեն է բաժանում ժողովրդին: Գրանից հետո Մխիթարի անունը դնում են Գուշ կամ Գոշ Մխիթար, իսկ գյուղի անունն էլ՝ Գոշի գյուղ (№ 470):

Ավանդության մեջ, որ կապված է Մխիթար Գոշի կյանքի ու գործունեության հիմնական վայրից (Նոր Գետիկի վանք) ոչ հեռու գտնվող Գոշ գյուղի հետ (Իջևանի շրջան) բանահյուսական կերպավորում է ստացել Վերածնության շրջանի հայ նշանավոր գործիչներից մեկի մարդասիրությանը, նրա համակրական վերաբերմունքը ընչադուրի, աշխատավոր խավերի նկատմամբ, որի արձագանքները մենք գտնում ենք նրա դրական երկերում («Առակներ», «Գատաատանագիրք»):

Ճարտարապետ, քանդակագործ և նկարիչ Վարպետ Մոմիկի մասին պատմում են, որ նա ժամանակին փոխադարձ սիրով կապված է եղել Սյունյաց իշխանի աղջկա հետ: Իմանալով այդ, իշխանը մի օր կանչում է իր մոտ Մոմիկին և ասում է. Աղջիկս կտամ քեզ, եթե կարողանաս խնձ համար երեք տարում մի նոր վանք կառուցել Եղեգնաձորում: Վարպետ Մոմիկը ընդունում է իշխանի դրած պայմանը և անմիջապես գործի է անցնում: Մոտակա ապառաժներից ահագին քարեր կտրելով և խնամքով տաշելով ու քանդակազարդելով դրանք, նա արագությամբ բարձրացնում է իշխանի պահանջած նոր վանքի պատերը: Ժամանակ անց, իմանալով, որ Մոմիկը ավարտելու վրա է վանքի կառուցումը, իշխանը մտահոգության մեջ է ընկնում: Որպեսզի իր աղջկան շտա հասարակ քարագործ վարպետի, նա խորամանկության է դիմում: Պատվիրում է ծառային բարձրանալ Մոմիկի կառուցած վանքի գմբեթը և այնտեղից ցած հրել նրան: Ծառան կատարում է տիրոջ պատվերը, և Մոմիկի տաշած վերջին քարը շիրմաքար է դառնում իր համար (№ 611):

Ավանդությունն ունի իրական-պատմական որոշակի հիմքեր: Քրական է, նախ և առաջ, Վարպետ Մոմիկի մասին եղած հիշատակությունը՝ իբրև Եղեգնաձորի շրջանի Ամաղու գյուղից ոչ հեռու գտնվող նորավանքի տաճարը կառուցողի ու քանդակազարդողի: Դա ոչ այլ ոք է, բայց եթե միջնադարյան այն նշանավոր համանուն հայ արվեստագետը

¹ Մխիթար Գոշ, Առակներ, տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը Էմ. Պիվազյանի, Երևան, 1951, էջ 14, 15, 22:

(ճարտարապետ, քանդակագործ և մանրանկարիչ), որին վերագրվում է ինչպես Նորավանքի Բուրթելաշեն (Ս. Աստվածածին) երկհարկանի քանդակագարդ ու գեղեցիկ հայանի եկեղեցու կառուցումը, այնպես էլ Վայոց ձորում գտնվող որոշ խաչքարերի քանդակները: Պատմական հիմքեր ունի, այնուհետև Սյունյաց իշխանի հիշատակությունը՝ իբրև Նորավանքի տաճարը կառուցել ավողի: Հայանի է, որ 13-րդ դարից Նորավանքը սկսում է վայելել Սյունյաց Օրբելյան իշխանների լայն աջակցությունն ու հովանավորությունը, դառնալով Սյունիքի հոգևոր տերերի աթոռանիստ կենտրոնն ու դամբարանը: Հայանի է նաև, որ Նորավանքի բոլոր շինությունները կառուցված են Օրբելյան իշխանական տան անդամների կողմից և, ընդհանրապես, Նորավանքի ծաղկումն էլ հենց Օրբելյանների տոհմի տիրապետության հետ է կապված: Ինչ վերաբերում է մասնավորապես Նորավանքի Ս. Աստվածածին երկհարկանի եկեղեցուն, ապա այն շինել է ավել Բուրթել Օրբելյանը¹:

Գալով ավանդության հենքն հանդիսացող Վարպետ Մոմիկի և Սյունյաց իշխանի դատեր սիրավեպին, ապա վերջինս, ամենայն հավանականությամբ վիսրական-բանահյուսական ծաղում ունի, քանի որ ժամանակակից գրավոր աղբյուրները (պատմիչներ, վիմական արձանագրություններ) այդ մասին ոչ մի հիշատակություն չունեն: Պատմականը այստեղ նման կարգի սիրավեպերի համար բնորոշ ողբերգական վախճանն է, իբրև հետևանք միջնադարի պայմաններում հասարակության տարբեր խավերի միջև դոյություն ունեցող սոցիալական խորը անջրպետի:

Սարգիս Պիծակի մասին ասում են, թե նա մի անգամ ծաղիկ է նկարելիս լինում, երբ հանկարծ մի պիծակ է մտնում սենյակը և նստում դիմացի լուսամուտին: Նայելով պիծակին «ճարտար» նկարիչը ծաղիկի վրա մեծ վարպետությամբ դուրս է բերում նրա պատկերը: Նկարչի մոտ գտնվող մարդիկ կարծում են, թե դա կենդանի պիծակն է, որ նստել է ծաղիկի նկարի վրա և փորձում են ձեռքով քշել նրան: Այդ տեսնելով նկարչի հայրը՝ Գրիգորը սկսում է ծիծաղել և մարդիկ նոր միայն գլխի են ընկնում, որ դա կենդանի պիծակ չէ: Այդ օրվանից նկարիչ Սարգրսին կոչում են Սարգիս Պիծակ (№ 780):

¹ Տե՛ս Ս. Բաբխուղարյան, Գիվան հայ վիմագրության, պրակ. Գ., Երևան, 1967, էջ 29, 39, 210, 228 և հավ.:

Ավանդության մեջ կենսագրական մի քանի տվյալների (նկարչի և նրա հոր անունները, նրա «ճարտար» ածականը)¹ և պիժակի հորինածո պատմության² միջոցով բացահայտված է Սարգիս Պիժակի կերպարը իբրև փորձված ու հմուտ մի նկարչի, որը կենդանի գծերի և վառ գույների միջոցով կարողացել է իր նկարներում ստեղծել իրականության պատրանքը՝ արժանանալով ժամանակակիցների զարմանքին ու հիացմունքին:

Հայ աշխարհիկ ու հոգևոր ճարտարապետությունն ու մանրանկարչությունը չի սահմանափակվում միայն Վարպետ Մոմիկի և Սարգիս Պիժակի անուններով: Ինչպես նրանցից առաջ, այնպես էլ հետո հայերն ունեցել են Տրդատի, Մանվելի, Թորոս Ռոսլինի պես հռչակավոր վարպետներ, որոնք ստեղծել են բնդհանուր ճանաչում գտած բազմաթիվ գլուխգործոցներ թե ճարտարապետության և թե նկարչության ու քանդակագործության բնագավառում, գլուխգործոցներ, որոնցից շատերը իրենց գեղարվեստական անկրկնելի հատկանիշներով զմայլանք են պատճառել ոչ միայն ժամանակակիցներին, այլև հետնորդ սերունդներին:

Հայ հին և միջնադարյան գրավոր աղբյուրները (մատենագիրներ, հիշատակարաններ, վիմական արձանագրություններ), ցավոք, շատ ժլատ ու կցկտուր տեղեկություններ են պահպանել մեր մշակույթի այդ գործիչների վերաբերյալ, անհայտության ու սավերի մեջ թողնելով նրանցից շատերի անունները:

Երախտագետ ժողովուրդը իր ավանդախոսների բերանով, հաճախ առանց անունները տալու, պատմել է նրանց կյանքի ու գործի մասին, հիացել է նրանց կատարած հրաշագործություններով, դառնացել նրանց բաժին ընկած հաճախ շատ դժվարին կյանքի ու ողբերգական ճակատագրի համար:

Հայոց ավանդական առաջին քարագործ վարպետն ու քանդակագործը եղել է Հայկ նահապետի թոռան՝ Պասքամի տոհմից սերող դյուցազն Տորքը: Մ. Խորենացու վկայությամբ հին Հայաստանում տարածված է եղել առասպելական մի ավանդություն, ուր երգելով պատմվել է, թե ինչպես Տորքը եզունգներով արծիվներ է փորագրել ապառաժներից պոկված որձաքարերի վրա:

¹ Ղ. Ալիշան, Սիսվան, Վենետիկ, 1885, էջ 517:

² Նմանօրինակ պատմություններ են հյուսվել նաև աշխարհահռչակ այնպիսի նկարիչների մասին, ինչպիսիք են Միքել-Անջելոն, Լեոնարդո Դա Վինչին և այլն:

Ավանդության մեջ կենսագրական մի քանի տվյալների (նկարչի և նրա հոր անունները, նրա «ճարտար» ածականը)¹ և պիժակի հորինածո պատմության² միջոցով բացահայտված է Սարգիս Պիժակի կերպարը իբրև փորձված ու հմուտ մի նկարչի, որը կենդանի գծերի և վառ գույների միջոցով կարողացել է իր նկարներում ստեղծել իրականության պատրանքը՝ արժանանալով ժամանակակիցների զարմանքին ու հիացմունքին:

Հայ աշխարհիկ ու հոգևոր ճարտարապետությունն ու մանրանկարչությունը չի սահմանափակվում միայն Վարպետ Մամիկի և Սարգիս Պիժակի անուններով: Ինչպես նրանցից առաջ, այնպես էլ հետո հայերն ունեցել են Տրդատի, Մանվելի, Թորոս Ռոսլինի պես հուշակավոր վարպետներ, որոնք ստեղծել են ընդհանուր ճանաչում գտած բազմաթիվ գլուխգործոցներ թե ճարտարապետության և թե նկարչության ու քանդակագործության բնագավառում, գլուխգործոցներ, որոնցից շատերը իրենց գեղարվեստական անկրկնելի հատկանիշներով զմայլանք են պատճառել ոչ միայն ժամանակակիցներին, այլև հեանորդ սերունդներին:

Հայ հին և միջնադարյան գրավոր աղբյուրները (մատենագիրներ, հիշատակարաններ, վիճական արձանագրություններ), ցավոք, շատ ժլատ ու կցկտուր տեղեկություններ են պահպանել մեր մշակույթի այդ գործիչների վերաբերյալ, անհայտության ու սովերի մեջ թողնելով նրանցից շատերի անունները:

Երախտագետ ժողովուրդը իր ավանդախոսների բերանով, հաճախ առանց անունները տալու, պատմել է նրանց կյանքի ու գործի մասին, հիացել է նրանց կատարած հրաշագործություններով, դառնացել նրանց բաժին ընկած հաճախ շատ դժվարին կյանքի ու ողբերգական ճակատագրի համար:

Հայոց ավանդական առաջին քարագործ վարպետն ու քանդակագործը եղել է Հայկ նահապետի թոռան՝ Պասքամի առհմից սերող դյուցազն Տորքը: Մ. Խորենացու վկայությամբ հին Հայաստանում տարածված է եղել առասպելական մի ավանդություն, ուր երգելով պատմվել է, թե ինչպես Տորքը եղունգներով արծիվներ է փորագրել ապառաժներից պսկված որձաքարերի վրա:

¹ Ղ. Ալիշան, Սիտլան, Վենետիկ, 1885, էջ 517:

² Նմանօրինակ պատմություններ են հյուսվել նաև աշխարհահռչակ այնպիսի նկարիչների մասին, ինչպիսիք են Միքել-Անջելոն, Լեոնարդո Դա Վինչին և այլն:

«Երգէին նմա բուռն հարկանել զորձաքար վիմաց ձեռք, ուր ոչ գոյր գեղութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր և քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ, և գրել նոյնպէս եղնգամբք իւրովք արծուիս և այլս այսպիսիս»¹:

Որոշ գիտնականների կարծիքով Խորենացու բերած այս առասպելական երգ-ավանդությունը պարունակում է իր մեջ քարեդարյան շրջանի բնորոշ տարրեր: Նրա մեջ պահպանվել են հետքեր այն վաղնշական ժամանակներից, երբ մարդիկ իրենց ճարտար արվեստն արտահայտում էին միայն սեփական ձեռքով ու քարով²: Ուրիշների հավաստմամբ՝ ժողովրդական դիտողությունը դեռ հնուց նկատել է Հայկական լեռնաշխարհի զանազան կողմերում լեռնային ապարների վրա սառույցի հոսելուց առաջացած խորագծեր և վերագրել է այդ «Անգել հսկայի» եղունգների վարպետությանը³:

Գեղամա և Սյունիքի լեռներում, Արագածոտնում և Հայաստանի մի շարք ուրիշ վայրերում վերջին տարիներս հնագետների կողմից հայտնաբերած հազարավոր հիանալի ժայռապատկերները, մեր կարծիքով, ավանդական Տորքին վերագրված քարարվեստի այդօրինակ նմուշներից են, որն այնքան տարածված ու ծաղկած է եղել Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների մոտ⁴:

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետական ամենաուշագրավ հուշարձաններից է Գեղարդավանքը կամ Այրիվանքը, կառուցված 13-րդ դարի երկրորդ կեսին: Ժողովրդական ավանդությունն ասում է, թե Գեղարդավանքը կառուցել են ազնվական ծագում ունեցող քույր ու եղբայր, ցանկանալով իրենց մահվանից հետո անմոռաց հիշատակ թողնել աշխարհում: Չիմանալով, թե ո՞րտեղից պետք է սկսել գործը, եղբայրը դիմում է աստծու օգնությանը: Լուսաբացին քնից վարթնելով, նա իր կուսնը գտնում է դրված ապառաժի ծայրին: Գլխի է ընկնում, որ վանքի շինությունը այդտեղից էլ պետք է սկսել: Եվ քույր ու եղբայր

1 Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփսիս, 1913, գիրք Բ., գլուխ Ը, էջ 115:

2 Խ. Սամուելյան, Հին Հայաստանի կուլտուրան, Ա. հատոր, էջ 307—308:

3 Թ. Հակոբյան, Ուրվագծեր Հայաստանի պատմական աշխարհագրության, Երևան, 1960, էջ 11:

4 Ս. Սարգսյան, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113, 118, Գր. Կարախանյան, Պ. Սաֆյան, Ժայռապատկերներ Սյունիքում, «Սովետական արվեստ», 1967, № 1, էջ 31—38:

անմիջապես գործի են անցնում: Եղբայրը շարդում է սուպառաժը, իսկ քույրն էլ շարդված քարերը մազերի մեջ դնելով, բարձրացնում է ձորից վեր: Նրանց աշխատանքը այսպես տևում է երկար տարիներ, մինչև որ քույր ու եղբայր ժայռի մեջ փորում, պրծնում են իրենց ուխտած վանքը (№ 609):

Անկասկած է, որ հրաշապատում այս ավանդույթյանը ծնունդ է տվել այն զմայլանքն ու սքանչացումը, որ առաջ է բերել ժողովրդի մեջ Գեղարդավանքը, որը Թորամանյանի խոստովանության մեջ, «ամենեն ավելի փորձված արվեստագետներուն անգամ անհավատալի պատրանք թվալու չափ նրբությամբ, համաշափությամբ ու վայելչությամբ կերտված է ընդհանրապես»¹:

Համապատասխան գրավոր հավաստի վկայությունն շունենալով ձեռքի տակ, մենք շենք կարող որոշակի ասել, թե իրականում ովքե՞ր են հանդիսացել Գեղարդա վանքի ծրագրող ճարտարապետն ու նրա կառուցող քարագործ վարպետները և առհասարակ ինչ կերպ է գլուխ բերվել գեղարվեստական այդ հիասքանչ հուշարձանը: Հայտնի է միայն նրա ժամատներից մեկի կառուցող վարպետի անունը (Գալձագ), որն արձանագրված է նրա գմբեթի նոնազարդ երիզի վրա և մեկ էլ այն, որ վանքը կառուցել է ավել Պոռշ իշխանի որդի Պապաքն իր Ընուզուրան կնոջ հետ, հայոց ՉԼԷ (= 1288) թվականին, ի հիշատակ իրենց հոգու²:

Կարելի է ենթադրել, որ ավանդույթյան մեջ իբրև Գեղարդը ստեղծող անձինք հիշվող քույրն ու եղբայրը հիշյալ Պապաքն ու Ընուզուրանն են, որոնք իրականում ոչ թե ստեղծել, այլ միայն կառուցել են ավել այն, իրենց տրամադրած դրամի ուժով, ավանդախոսների երևակայության մեջ գրավելով վանքը կերտող ճարտարապետի և քարագործ վարպետների տեղը:

Տաթևի վանքը կառուցող ճարտարապետի մասին պատմում են, որ երբ նա ավարտելով իր գործը, հասնում է վանքի գմբեթի ծայրին, վերևից ցած է նայում և տեսնելով ձորի ահավոր խորությունը, սարսափահար սկսում է մտածել, թե ինչպե՞ս է ինքը գետին իջնելու: Ստիպված նա դիմում է աստծուն և թևեր խնդրում, որպեսզի թռչի, անցնի ձորի մյուս կողմը: Լսելով ճարտարապետի աղաչանքը, աստված թևեր է տա-

¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա., Երևան, 1942, էջ 349:

² Վ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պոռշյանք, մասն Ա., Վաղարշապատ, 1928, էջ 114, 143, 291:

լիս նրան, որոնցով նա թռչում, զնում է հեռու աշխարհներ: Ճարտարապետի անհայտանալուց հետո, ոչ ոք չի իմանում, թե ինչպե՞ս պետք է հանել այն գերանները, որոնց վրա հենված էր վանքի կամարակապ կառուրը: Գնում են ճարտարապետի ետևից: Երկար որոնելուց հետո նրան գտնում են մի հեռավոր տեղում, իմանում փայտամածը հանելու եղանակը, վերադառնում Հայաստան, հանում են փայտերը և վանքի անունը դնում են Տաթև (= տա թև...) ի հիշատակ այն թևերի, որ տվել էր աստված նրա ճարտարապետին (№ 618):

Մի ուրիշ ավանդույթյան համաձայն, երբ սկսում է կառուցվել Տաթևի վանքը, սրա ճարտարապետն ու վանքի համար առու փորող վանականը գրազ են գալիս, թե իրենցից ո՞վ ավելի շուտ կվերջացնի իր գործը: Երկուսն էլ թափով սկսում են աշխատել: Ժամանակ անց, վանականը հեռվից նկատելով, որ ճարտարապետը ավարտելու վրա է վանքի կառուցումը, գրազը տանուլ շտալու համար, որոշում է խաբել նրան: Ձորի հակառակ կողմից նա կախում է մի մեծ ու երկար սավան, որը քամուց ալիքաձև ծածանվելով, հեռվից ջրի է նմանվում: Վանքի գմբեթի վերջին քարերը շարելիս, ճարտարապետը հանկարծ տեսնում է այդ և կարծելով, թե վանականը իրենից առաջ արդեն վերջացրել է իր գործը, պարտված շինելու համար, ինքնասպան է լինում՝ իրեն ձորը նետելով գմբեթից (№ 243):

Բերված երկու ավանդույթյունների մեջ բանահյուսական պատկերավոր դրսևորում է գտել մի կողմից Տաթևի վանքի բարձր դիրքը, ճարտարապետական վեհույթյունը, շրջապատի լեռնային բնակարի հետ ունեցած նրա ներդաշնակույթյունը, մյուս կողմից՝ վանքը կառուցող ճարտարապետի ազնիվ հոգին ու վեհանձնույթյունը և ջրի առուն փորող վանականի նենգավոր սիրտն ու տմարդույթյունը:

Արարատյան դաշտից դեպի Կարին տանող ճանապարհին, Արաքսի և Մուրցի գետախառնուրդի վրա, Վերին Բասենի մոտ կա մի մեծ կամուրջ, որը հայ աշխարհիկ ճարտարապետության կոթողներից մեկն է և հայտնի է Հովվի կամուրջ անունով: Ավանդույթյունն ասում է, թե սրա մոտ ապրող բնակիչները շատ անգամներ փորձ են արել ամրացնել կամուրջը, բայց Արաքս գետը միշտ ավերել է այն: Կամուրջը միայն այն ժամանակ է անխախտ մնացել իր տեղում և դիմադրել Արաքսի կատաղի ջրերին, երբ մի ճարտար հովիվ մեծ հմտությամբ դրել է նրա հիմքի քարը, որի համար էլ այն դրանից հետո կոչվել է Հովվի կամուրջ (№ 586):

Իր բնույթով լինելով տիպիկ հնարածին-բանահյուսական ստեղծագործություն, տվյալ ավանդությունը զերծ չէ պատմական որոշ հիմքերից և բնութագրական է ժողովրդական ավանդախոսների հասարակական հոգեբանության համար:

Գրավոր աղբյուրներից մեկի հավաստմամբ «Այս գեղեցիկ կամուրջը, ընկած է Արաքս գետի վրա և պահպանվում է յոթ քարե գեղեցիկ կամարներով»¹: Ըստ մի այլ վկայության, այն բաղկացած է «Համակ սպիտակ և գորշագույն որձաքարէ, յորս նշմարին և գիծք քանդակեալք առ նշանակէ ինչ: Արդարև ճարտար և ամուր շինուած, որոյ զղէմ կայեալ է այնքան բուռն բախման ալեաց դարս յուրովս»²:

Վերոհիշյալ երկու վկայություններն էլ յուրովի հաստատում են խնդրո առարկա կամուրջի կառուցման հետ կապված դժվարությունների վերաբերյալ ժողովրդական ավանդության մեջ եղած համապատասխան ակնարկների ճշմարտացիությունը: Ուշագրավ է հատկապես այն հանգամանքը, որ ժողովուրդը կամուրջի կառուցումը կապել է ոչ թե որևէ նշանավոր իշխանի կամ թագավորի, այլ մի «ճարտար» հովվի անվան հետ, անկախ այն բանից, թե ովքեր են եղել իրականում նրա ճարտարապետն ու կառուցող քարագործ վարպետները:

Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր ճարտարապետական կառույցների մասին պատմող ժողովրդական ավանդությունների մեջ նշանակալից տեղ են զբաղում այն պատումները, ուր խոսվում է մեր հնօրյա ճարտարապետների, քարագործ վարպետների ու նրանց աշակերտների անձնական ու աշխատանքային փոխհարաբերությունների մասին: Այսպես.

Սանահնի հուշակավոր վանքը կառուցող վարպետի մասին ավանդությունն ասում է, որ նա մի անգամ վեճի է բռնվում հարազատ որդու հետ: Սա թողնում է հոր հետ աշխատելը և մի ենթավարպետի հետ Հաղբատ գյուղում, տեղի իշխանի պատվերով ինքնուրույն կերպով սկսում է մի նոր վանք շինել: Լսելով այդ մասին, վարպետ հայրը ժամանակ անց գալիս է Հաղբատ՝ տեսնելու համար որդու ձեռքերի աշխատանքը: Ուշագիր ու լավ գննելով որդու բարձրացրած պատի շարվածքը, վարպետը դիմելով որդուն, գոհունակությամբ ասում է. Հախ պատ է (այսինքն՝ լավ, ամուր պատ է) և փաթաթվելով նրան համբու-

¹ В. Потто, Кавказская война, Тифлис, 1888, հատ. 4, պրակ. 3, էջ 261:

² Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 24:

րում ու հաշտվում է հետը: Այդ օրվանից էլ վանքի անունը մնում է Հախպատ (№ 647):

Մի ուրիշ ավանդության մեջ պատմվում է, որ Մակարավանքը կառուցող վարպետը ուխտ է անում՝ մինչև ամբողջ վանքը շտվարաի, շենքից ցած շինչի: Նրա որդին քարտաշուսթյուն էր անում հոր հետ նույն տեղում: Շենքի քարերը տաշելով նա դրանք ուրիշների ձեռքերով հանձնում էր հորը: Նրբ ավարտվելու վրա է լինում վանքի կառուցումը և մնում է միայն գմբեթը, քարտաշ որդին հիվանդանալով մեռնում է: Հարազատները որոշում են այդ մասին ոչինչ չասել շինարարության վրա գտնվող հորը և մեռած որդու փոխարեն կանչում են մի ուրիշ քարտաշի: Սրա ուղարկած քարերի տաշվածքից վարպետ հայրը տեսնում է, որ դա իր որդու ձեռքի գործը չէ և գլխի է ընկնում, որ նրա հետ դրժբախտություն է պատահել: Չկարողանալով դիմանալ ծանր վշտին, նա վանքի գմբեթից իրեն ցած նետելով ինքնասպան է լինում (№ 644):

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ ավանդության մեջ իր ճշմարտացի արտացոլումն է գտել հայ հնօրյա ճարտարապետների, քարագործ վարպետների և նրանց աշակերտների կյանքն ու աշխատանքը, ազգակցական կապերը, համագործակցությունն ու հակամարտությունը, շրջապատի իրականության հետ ունեցած շփումը և այլն:

Հայտնի է, որ Հայաստանում, ինչպես հին դարերում, այնպես էլ ավելի ուշ շրջանում, տարբեր տիպի արհեստավորները, այդ թվում նաև քարագործ վարպետները, որմնադիրներն ու քարտաշները աշխատել են մեծ կամ փոքր խմբերով, ընդ որում հաճախ հայր ու որդի միասին: Ղեկավար ունենալով իրենց վարպետագլխին, նրանք շրջել են վայրից վայր, կառուցելով ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր բազմաթիվ մեծ շենքեր (բերդեր, կամուրջներ, պալատներ, վանքեր), դրա համար նախապես պատվեր ստանալով երկրի տերերից (թագավոր, իշխան, կաթողիկոս)¹:

Մաշտոցից ու Նարեկացուց հետո հայ մշակույթի երրորդ նշանավոր դեմքը, որի մասին առանձնապես շատ ավանդություններ ու զրույցներ են հյուսվել ու պատմվել մեզանում՝ դա Սաջաթ-Նովան է: Այդ տեսակետից բնորոշ են մեծ գուսանի հայերեն խաղերի անդրանիկ հրա-

¹ Տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դարերում, Երևան, 1958, էջ 192—193:

տարակիշ, նրա կենսագրության ու ստեղծագործության առաջին ուսումնասիրող, բազմերախտ բանասեր ու բանահավաք Գևորգ Ախվերդյանի հետևյալ խոսքերը. «Մեծերուց լսածն ասելով պատմում են», «Լսել եմ ծերերուց», «Էսպես պատմում են նրա թաղման պատահողները», «Սայաթ-Նովու առհմի ավանդութենն ու նրա մասին դարսված գրույցքը ասում են» և այլն¹: Դժբախտաբար այդ ավանդությունների ու գրույցների մի զգալի մասը, ժամանակին գրի շառնվելու պատճառով, կորել է: Սակայն, դրանց մեջ հասած սակավաթիվ նմուշներն էլ բավական են, որպեսզի մենք որոշակի պատկերացում կազմենք այն մասին, թե ի՞նչ է մտածել ու զգացել հայ ժողովուրդը սիրո ու արդարության շատագույն իր գուսանի մասին և առհասարակ ի՞նչ տեղեկություններ է ունեցել նա Սայաթ-Նովայի կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ: Այդ ավանդությունների մեջ պատմվում է, թե ինչպես Սայաթ-Նովան իր գյուղական երգ ու նվագով հոգեկան ծանր վիճակից դուրս է բերում վրաց Հերակլ թագավորին (783 Փ), չնայած իր հոգևորականի կողմանը, Հաղբատից շատուկարգով Թիֆլիս է գալիս՝ իր հայրենի քաղաքը եկած համբավավոր օտարական աշուղի հետ մրցելու համար (№ 783Ա, 783Բ), թե ինչպես նա սրախողխող է արվում Թիֆլիսի Ս. Գևորգ եկեղեցում՝ քաղաքը դրաված Աղա-Մահմադ խանի սարվազների կողմից (№ 783Ե) և այլն:

Վերոհիշյալ ավանդությունների մեջ դրոշմված են իրական հիմքեր ունեցող և ճշմարտապատում այն պատկերացումներն ու կարծիքը, որ ունեցել է հայ ժողովուրդը Սայաթ-Նովայի վերաբերյալ, իբրև երգ ու նվագի բնատուր արտակարգ ձիրքով օժտված մի արվեստագետի, իբրև մեծ ժողովրդականություն վայելող հայրենասեր ու ազնիվ մի գուսանի, որի համար հարազատ քաղաքի պատիվը ավելի բարձր է, քան ալիամայից իրեն բաժին ընկած կրոնավորի սև սքեմը, իբրև համեստ ու մեծահոգի մի մարդու, որը չի ամբարտավանում իր տարած հաղթանակով և ետ է վերադարձնում պարտված արվեստակցի սազը:

Իրական ու ճշմարտացի է նաև քննության առարկա ավանդությունների մեջ արտացոլված պատմատեղագրական և ազգագրական ու կենցաղային միջավայրը, որտեղ իբրև գործող անձ հանդես է գալիս Սայաթ-Նովան: Դա, ամենից առաջ, հին Թիֆլիսն է իր ուրույն կոլորիտով, իր Կուր գետով, «քաղքի տղերքով» ու աշուղական մրցումներով, որոնք ժամանակին այնքան բնորոշ են եղել Մերձավոր արևելքի ու Անդրկով-

¹ Գևորգ Ախվերդյան, Սայաթ-Նովա, Մոսկվա, 1852, էջ ԺԲ, ԺԳ և ԺԵ:

կասի քաղաքների ու գյուղերի, այդ թվում նաև Թիֆլիսի համար: Դա, այնուհետև, Վրաց Հերակլ Զ-րդ թագավորն է, որի մոտ, ինչպես հայտնի է, Սայաթ-Նովան հանդես է եկել իբրև աշուղ, մոտիկից շփվելով պալատական մարդկանց և անձամբ Վրաց թագավորի հետ¹:

Դա Սայաթ-Նովայի կրոնավորելն է Հաղբատի վանքում, որը տեղի է ունեցել հակառակ նրա կամքի, Հերակլ թագավորի կարգադրությամբ՝ վերջինիս պալատական մարդկանց սարքած խարդավանքների հետևանքով²: Դա Սայաթ-Նովային հետապնդող Գավիթ եպիսկոպոսն է, որը ըստ եղած վավերագրերի 1771 թվականի դեկտեմբերի 25-ին նշանակվել է Հաղբատի վանքի միաբան և մինչև 1795 թվականը հիշվել է իբրև վերջինիս առաջնորդ³: Դա, վերջապես, Սայաթ-Նովայի սպանվելու փաստն է Թիֆլիսի բերդի Ս. Գևորգ եկեղեցում (ուր, ինչպես հայտնի է, Թիֆլիս գալիս միշտ իջևանել է Սայաթ-Նովան) Աղա-Մահ-մադ խանի սարվազների ձեռքով, որը հաստատվում է դեպքերին ժամանակակից ու ականատես մարդկանց վկայություններով և նրա ժա-

¹ Հայտնի է, որ Սայաթ-Նովան իր գուսանական արտակարգ տաղանդի շնորհիվ ժամանակին դարձել է Վրաց արքունիքի և անձամբ Հերակլ Զ-րդի պալատական երգիչը, այդ գերում բավական երկար ժամանակ մնալով պալատում (մոտավորապես 1744—1759 թթ.): Ուշադրով է այս տեսակետից Սայաթ-Նովայի հետևյալ խոստովանությունը, որ արել է նա իր կյանքի վերջին տարիներին. «Ճրբ Հերակլ թագավորն ուզեց մեջիս՝ սարքել և երաժիշտներիս այնտեղ տարան, ես այն ժամանակ պարսկական եղանակով վրացերեն երգեցի: Պարոնին այդ շատ դուր եկավ և ինձ խալաթ շնորհվեց: Գրանից հետո շատերը երգեցին ինձ նմանվելով: Ես ամենքի մոտ լավ էի ընդունված ոչ միայն իմ երգով, այլև կատակներով ու այլ աշխարհային բաներով» («Սայաթ-Նովան Հաղբատում», հատված վրաց Իվանե արքայազնի «Կալմաստրա» գրքից, տես «Գրական թերթ», 1936, № 3):

² Այդ մասին թափանցիկ ակնարկներ կան Սայաթ-Նովայի վրացերեն խաղերից մեկի մեջ, որ նա հորինել է Հաղբատի վանքում կրոնավոր եղած ժամանակ: Ահա մի քառյակ այդ խաղից.

«Քարավորաց կամքով մեջիս կանչվողիս,
Թավազներուց միձըրվող ու հարզվողիս,
Կարմիր կապան արք ու փառքով հաքնողիս,
Աբիղայի սիվ քուրձը բաժին էլավ...»:

(Գ. Աստվածատրյան, Սայաթ-Նովայի անհայտ երգերից, «Ազգագրական հանդես», գիրք Ժ., 1903, էջ 110):

³ Դիվան հայոց պատմության, գիրք Գ., 1899, էջ 582, 588—591, գիրք ԺԱ., 1913, էջ 458:

ուանգների թողած համապատասխան գրավոր անուղղակի ակնարկներով¹:

28. Նոր և նորագույն շրջան:—Հայ ժողովուրդը քիչ ավանդություններ չի ստեղծել նաև իր մշակույթի նոր և նորագույն շրջանի գործիչների մասին: Ի տարբերություն հին և միջնադարյան հեղինակներին նվիրված ավանդությունների, որոնք ժողովրդական լայն խավերի մեջ իրենց ապրած երկար դարերի բանավոր կյանքի և ավանդախոսների պատմականորեն ավելի սահմանափակ աշխարհայացքի հետևանքով ներթափանցված են ոչ սակավ հրաշապատում պատկերներով ու կերպարներով և ի հայտ են բերում ժամանակագրական ու պատմական հակասություններ ու խախտումներ, նոր և նորագույն շրջանի գործիչներին նվիրված ավանդությունները՝ հյուսված լինելով դեպքերին ու դեմքերին ժամանակակից ու ականատես, առավել սթափ աշխարհայացքի տեր մարդկանց կողմից և ապրած լինելով համեմատաբար կարճատև բանավոր կյանք, աչքի են ընկնում իրականության երևույթների առավել ճշմարտացի վերարտադրությամբ, ժամանակագրական և պատմական հավաստիությամբ: Դրանք ոչ այլ ինչ են, բայց եթե յուրօրինակ անդիր հուշապատումներ, որոնք ժամանակի հոլովումով և համապատասխան իրադրության մեջ կարող են դառնալ և հաճախ դառնում են բուն ժողովրդական ավանդություններ և ավանդական զրույցներ:

Այս առումով հիշարժան են, նախ և առաջ, հայոց աշխարհաբար լեզվի և նոր գրականության հիմնադրի, 19-րդ դարի հայ մեծ լուսավորչի՝ Խաչատուր Աբովյանի մասին մեզանում ստեղծված ժողովրդական ավանդություններն ու բանավոր հուշապատումները, որոնց մեջ յուրովի բացահայտված է այն ըմբռնումը, որ ունեցել է հայ ժողովուրդը նրա կատարած պատմական առաքելության վերաբերյալ:

Այդ ավանդությունների և ավանդական զրույցների մեջ պատմըվում է, թե ինչպես Գրիգոր Լուսավորիչը երազում երևում է պատանի

¹ Գ. Ախվերդյան, Սայաթ-Նովա, էջ ԺԳ., Գ. Ասատուր, Մի պատառիկ իմ հուշերից, «Գրական թերթ», 1936, № 3, «Ազգագրական հանդես», գիրք Ժ, 1903, էջ 100: Ոչ մի շուրջ հիմք չկա կասկածի տակ առնելու կամ ժխտելու Սայաթ-Նովայի սպանության մասին պատմող ավանդության ճշմարտացիությունը, ինչպես այդ արել են որոշ սայաթ-նովագետներ, հարկ եղածից ավելի նշանակություն տալով իրենց հայտնաբերած կասկածելի գրավոր հիշատակություններին և հանիրավի թերագնահատելով ժողովրդական ավանդությունների պատմական արժեքը (տե՛ս Պրոֆ. Լ. Մելիքսեր-բեկ, Նոր նյութեր նայաթ-Նովայի առասպելական նահատակության շուրջը, «Պրոլետար», 1935, № 189):

Աբովյանին և պարզեում նրան վարժ կարգալու շնորհք (№ 787), թե ինչպես Աբովյանի խորհրդին հետևելով քանաքեոցիք բշում են իրենց հանդը գավթած բեգերին¹, թե ինչպես Երևանի Սարգարը լսելով Աբովյանի բրոջ գեղեցկության համբավը՝ իր սարվազներին քանաքեո է ուղարկում նրան առևանգելու համար², թե ինչպես ոռուսաց թագավորի պաշտոնյաները բռնում են Աբովյանին և սև կառետի մեջ նստեցնելով նրան Սիբիր են արքայում (№ 787 Գ), թե ինչպես մի քանի գերմանացի ճանապարհորդներ Սիբիրի մի հեռավոր գյուղում հանդիպում են Աբովյանի ոռու աշակերտներին, որոնք նրանց հետ հիանալի գերմաներեն են խոսում (№ 787 Դ) և այլն:

Առաջին ավանդության մեջ ավանդախոսի ստեղծագործական երևակայությունը նյութ է մատակարարել Աբովյանի բացառիկ ընդունակությունների տեր մարդ լինելու հանգամանքը, որին նրանք տվել են յուրահատուկ գերբնական հիմնավորում:

Երկրորդ ավանդության մեջ դրոշմվել է այն մտահոգությունը, որ հանդես է բերել Աբովյանը իր հայրենակից քանաքեոցիներին հուղող հողային հարցի աննշույթյամբ:

Երրորդ ավանդության մեջ Աբովյանը հանդես է բերված «Վերքի» հերոս Աղասու դերում: Բնազգաբար զգալով այն հոգեհարազատությունը, որ գոյություն է ունեցել գրողի և նրա սիրած հերոսի միջև, ավանդաստեղծ ժողովուրդը նույնացրել է նրանց՝ հերոսի գլխին եկածը վերագրել հեղինակին:

Չորրորդ ավանդությունը ամենայն հավանականությամբ ծագել է Աբովյանի Սիբիր արքայազնի վերաբերյալ մեզանում գոյություն ունեցող հայտնի վարկածի հիման վրա, ստանալով քանահյուսական երանգավորում: Անկախ այն հանգամանքից, թե որքանով է ճշմարիտ տվյալ վարկածը, հետևաբար և նրա հիման վրա ծագած քանահյուսական պատումը, վերջինիս մեջ իր դրսևորումն է գտել այն պատկերացումը, որ ունեցել է հայ ժողովուրդը Աբովյանի մասին իբրև մեծ հայրենասերի և Հայաստանի անկախության մասին մտածող անձնվեր գործչի:

Հինգերորդ ավանդությունը հավանորեն ծագել է այն շփոթությունից, որով Խաչատուր Աբովյանը ոմանց կողմից նույնացվել է իր ազանվանակից և իրենից ժամանակով ոչ շատ հեռու ապրած ոչ անհայտ

¹ Տե՛ս «Գրական թերթ», 1938, № 18 (199):

² Պատմել է Աշտարակի շրջանի Գովրի գյուղի բնակիչ Հովհաննես Հովհաննիսյանը (70 տարեկան): Գրի է անել Վարդ Բոլոյանը 1938 թ.:

հայ ուսուցիչ և գրող Գևորգ Աբովյանի հետ, որը, ինչպես հայտնի է, իր հակացարական գործունեության համար ժամանակին աքսորվել է Սիբիր¹:

Բաֆֆու մասին պատմում են, որ նա ժամանակին եղել է Աղթամարի կղզում, որտեղ մի բարձր քարի վրա նստած գրել է իր «Չայն տուր, ով ծովակ» նշանավոր բանաստեղծությունը: Ասում են նաև, որ կղզու վարդապետները ուզեցել են բռնել ու ծովը նետել նրան՝ փոռա (բողոքական) քարոզչի տեղ դնելով: Իմանալով այդ մասին, Բաֆֆին թողել է Աղթամարը ու փախել: Այն քարը, որի վրա նստած նա գրել է «Չայն տուր, ով ծովակ»-ը, դրանից հետո կոչվել է Բաֆֆու քար (№ 187):

Մի ուրիշ ավանդությանմբ Բաֆֆին ժամանակին եկել է Ղարաբաղի Դահրավ գյուղը՝ տեղի քաջերի պատմությունը գրելու համար: Նա շքրջել է տնե-տուն, հարց ու փորձ արել ծերերին, կարդացել է մամուլալաժ գերեզմանաքարերի վրա եղած գրերը: Բաֆֆու խնդրանքով գյուղացիները շուտ են տվել գյուղամիջին ընկած հսկայական սալ քարը և նա կարդացել է նաև այդ քարի հակառակ երեսին եղած հաչերեն գրերը: Նրա մեկնելուց հետո սալ քարի ընկած տեղից մի առատ աղբյուր է բխել, մեծ ուրախություն պատճառելով դահրավցիներին, որոնք ջրի համար ստիպված էին իջնել մոտակա ձորը: Այդ աղբյուրը մինչև հիմա էլ կա և կոչվում է Բաֆֆու աղբյուր (№ 265):

Երկու ավանդություններն էլ հյուսված են իրական-կենսագրական հենքի վրա: Առաջինը՝ չուրահատուկ մի արձագանք է այն ուղևորության, որ կատարել է Բաֆֆին 1858 թ. Վասպուրականի և Տարոնի շրջաններում, և որի արդյունքը հանդիսացավ նրա «Աղթամարա վանքը» ակնարկը, տպագրված «Հյուսիսափայլի» 1860 թ. № 11-ում, որ կրթոտ քննադատության է ենթարկված հայ կղերի թանձրամտությունն ու խավարամոլությունը: Երկրորդը՝ նույնպիսի մի արձագանք է այն ուղևորության, որ կատարել է Բաֆֆին 1881 թ. հուլիս և օգոստոս ամիսներին Ղարաբաղում, իր պատմական վեպերի համար համապատասխան նյութեր հավաքելու նպատակով²:

¹ Հայկ Տեր-Ասավաճառյանց, Բառարան հայ կենսագրությանց, պրակ Ա., Թիֆլիս, 1904, էջ 23—24: Տե՛ս նաև Երվ. Շահազիզ, Խաչատուր Աբովյանի կենսագրությունը, Երևան, 1945, էջ 176:

² Տե՛ս Բաֆֆու «Աղթամարա վանքը» ակնարկը տպագրված «Հյուսիսափայլ» ամսագրի 1860 թ., № 11-ում: Տե՛ս նաև Խ. Սամվելյան, Բաֆֆի, Երևան, 1957, էջ 114—117:

Կենսագրական փաստերի արտացոլումից ավելի, նշված ավանդու-
թյունների մեջ կարևոր են Հայաստանի տարբեր վայրերում Բաֆֆու ա-
նունով մկրտված աղբյուրի ու քարի փաստերը: Վերջիններիս մեջ խոր-
հրրդանշված և յուրովի ընդգծված է այն վերաբերմունքը, որ ունեցել
են Հայաստանի բնակչության լայն զանգվածները սիրելի գրողի նկատ-
մամբ, մի գրող, որն իր ողջ գիտակցական կյանքն ու հզոր տաղանդը,
առանց մնացորդի, ի սպաս է դրել հարազատ ժողովրդի ազգային ազա-
տագրական պայքարի սրբազան կրակի բորբոքման նվիրական գոր-
ծին:

Հովհաննես Թումանյանի մասին ասում են, թե նա 1915 թվականին
Թիֆլիսից էջմիածին է գալիս՝ Արևմտյան Հայաստանի զանազան գա-
վառներից այստեղ հավաքված և սովից ու հիվանդություններից մեռ-
նող հազարավոր հայ գաղթականներին օգնելու համար: Կարիք է լի-
նում վանքին պատկանող ինչ-որ մի տուն տրամադրել գաղթականնե-
րին: Թումանյանն այդ խնդրով անձամբ դիմում է կաթողիկոսին: Կա-
թողիկոսը հրաժարվում է տունը տալ գաղթականներին: Վրդովված Թու-
մանյանը իր դժկամությունն է արտահայտում կաթողիկոսին նրա մերժ-
ման համար:

— Հիշեցեք, պարոն: Թումանյան, որ ևս Ամենայն Հայոց կաթողի-
կոսն էմ,— ասում է դժկամ կաթողիկոսը:

— Իսկ ևս ամենայն հայոց բանաստեղծն էմ,— պատասխանում է
նրան Թումանյանը¹:

Մի ուրիշ ավանդության համաձայն, երբ 1919 թվականին Թու-
մանյանի տանը նշվելիս է եղել նրա ծննդյան 50-ամյակը, հրավիրված-
ների մեջ լինում է նաև Զորավար Անդրանիկը: Անդրանիկի կենացի
ժամանակ Թումանյանն իր բաժակաճառի մեջ ասում է. երեսուն տարի
առաջ մի հայ ժողովուրդ էր, մի իրիմյան, անցավ երեսուն տարի՝ հիմի
էլ մի հայ ժողովուրդ է, մի Անդրանիկ... Ընդհատելով Թումանյանի
խոսքը, Անդրանիկը նստած տեղից վրա է բերում. Կանցնի էլի երեսուն
տարի, ո՛չ իրիմյան կլինի, ո՛չ Անդրանիկ, կմնա... Շունն ու կատուն²:

Երկու ավանդություններն էլ հիմնված են ժամանակակիցների հու-
շապատումների վրա և ունեն իրական հող: Առաջինի կենսագրական

¹ Ստ. Զաչյան, Հուշերի գիրք, Երևան, 1958, էջ 40—41:

² Վ. Թորովենց, Հուշեր Հովհաննես Թումանյանի մասին (տե՛ս «Թումանյանը ժա-
մանակակիցների հուշերում», գիրք Ա. (ձեռագիրը գտնվում է Մ. Արեղյանի անվան
պատմականության ինստիտուտի տեքստաբանության բաժնում):

ատաղձը այն ինքնակամ առաքելությունն է, որ կատարել է Թուման-
յանը իր երկու դուստրերի ուղեկցությամբ 1915 թվականի հուլիս ամ-
սին, Թիֆլիսից էջմիածին գալով՝ այստեղ կուտակված թուրքական յա-
թաղանից մազապուրծ բազմահազար անօթևան ու սովալլուկ արևմտա-
հայ գաղթականներին իր ուժերի ներածին շափ օգնություն ցույց տա-
լու, նրանց կացարանի, սննդի, հագուստի և բուժման գործը կազմա-
կերպելու համար¹: Երկրորդինը՝ բանաստեղծի ծննդյան 50-ամյա տա-
րելիցն է: Ժամանակակիցների վկայությամբ Թումանյանը կարականա-
պես դեմ է եղել հոբելյանական մեծ հանդես կազմակերպելու գաղա-
փարին, նկատի ունենալով իր ժողովրդի ինչպես նյութական, այնպես
էլ քաղաքական ու բարոյական անբարենպաստ վիճակը այդ օրերին,
և դրա փոխարեն իր տանը, սեփական սուղ միջոցներով մի փոքր հա-
վաքույթ է կազմակերպել մտերիմ մարդկանց համար, որոնց մեջ է եղել
նաև այդ ժամանակ Թիֆլիսում գտնվող Զորավար Անդրանիկը²:

Կենսագրական ատաղձ ունեցող վերոհիշյալ երկու ավանդություն-
հուշապատումներն էլ շատ բնորոշ ու տիպական են ոչ միայն հայ ժո-
ղովրդի ազգային մեծ բանաստեղծի քաղաքացիական և հասարակակա-
նական կյանքի բնութագրման, այլև Թումանյանի ստեղծագործության ան-
մահույթյան համար:

Հայ մշակույթի բնաշխարհիկ գործիչներից բացի, որոնք ծնվել,
ապրել ու ստեղծագործել են իրենց բուն հայրենիքում, մենք ունեցել ենք
նաև ոչ քիչ թվով հայազգի գիտնականներ, գրողներ ու արվեստագետ-
ներ, որոնք պատմական ճակատագրի բերումով ստեղծագործել են Հա-
յաստանից դուրս: Իրենց երկերի նյութով ու թեմայով առնչված լինելով
օտար միջավայրի հետ, հայազգի այդ գործիչների լավագույն ներկա-
յացուցիչները հոգեկան ամուր և անխզելի կապերով միշտ կապված են
մնացել մայր հայրենիքի ու հարազատ ժողովրդի հետ, պահպանել են
իրենց ազգային ոգին, կենդանի հետաքրքրություն են ցուցաբերել Հա-
յաստանի անցյալի ու ներկայի նկատմամբ, իսկ առիթը ներկայանալիս

¹ Առ, Հիշողություններ Թումանյանի մասին (տե՛ս «Նորք» ամսագիր, Երևան, 1923, № 3, էջ 220): Տես նաև Ա. Ինճիկյան, Անձանոթ էջեր Հ. Թումանյանի գրական ժառան-
գությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1968, № 2, էջ 164, 167:

² Վերահիշումներ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի կյանքին (Զորավար Անդ-
րանիկի հուշերը), տես «Պայքար» թերթը, Բոստոն, 1923, մայիս: Նույնը արտատպված՝
«Գրական թերթ»-ում, 1964, № 51, 18 դեկտեմբերի:

էլ, չեն գլացել թե խոսքով և թե գործով յուրովսանն օգտակար լինել նրան: Այս առումով շատ բնորոշ է Վիլյամ Սարոյանի հետևյալ խոստովանությունը, որը, ավելի կամ պակաս շափով, կարող է վերաբերվել նաև տարաշխարհիկ մյուս հայ լավագույն գործիչներին:

«Թեև ես գրում եմ անգլերեն, և թեև ծնունդով ամերիկացի եմ, բայց ես ինձ համարում եմ հայ գրող: Իմ գործածած բառերը անգլերեն են: Միջավայրը, որի մասին գրում եմ, ամերիկյան է: Ոգին, սակայն, որ մղում է ինձ գրելու, հայկական է: Ուտի ես հայ գրող եմ: Ես խորապես սիրում եմ հայ գրողների մեծ ընտանիքին պատկանելու պատիվը»¹:

Երախտագետ հայ ժողովուրդը իր հուշապատումների և ավանդությունների մեջ չի մոռացել պատշաճ տեղ հատկացնելու նաև տարաշխարհիկ հայ գիտնականներին, գրողներին ու արվեստագետներին: Նրա այդօրինակ ստեղծագործությունների բնորոշ օրինակներից են հետևյալ երկու հուշապատում-ավանդությունները:

Հովհաննես Այվազովսկու մասին պատմում են, որ նա Թեոդոսիայում լսելով հայկական կոտորածների բոթը, ատելությամբ է լցվում թուրք ջարդարարների դեմ: Նկարիչը դայրացած վերցնում է Սուլթան Աբդու Ազիզի կողմից իր նկարների համար տարիներ առաջ տրված ադամանդյա շքանշանները, կապում է դրանք շան վզին և դուրս գալով տանից ուղղվում է դեպի ծովափ: Այստեղ նա նստում է մի ձկնորսական նավակ, հեռանում դեպի բաց ծովը, հանում շան վզից թուրքական շքանշանները և, ի նշան բողոքի, դրանք նետում է ջուրը²:

Վիլյամ Սարոյանի մասին ասում են, թե նա Հայաստան կատարած իր այցելության ժամանակ, հայ գրողների հետ հանդիպելիս ասել է. «Ես շատ կսիրեմ Մասիս, դուք ալ կսիրե՞ք» թե ձեզի համար ան սովորական է դարձեր: Գրողներից մեկը պատասխանում է. Ինչ օղուտ, որ մերը չէ: Ատիկա կարևոր չէ, — ասել է Սարոյանը և պատմել հետևյալ դրույթը:

Ատենոք, երիտասարդ մը կսիրահարի թագավորին աղջկան. բայց աղքատ կըլլա, դերվիշ, շորերը չլուտ, էրեսը աղտոտ: Ամբողջ օրը սաղը ձեռին թագավորի պալատի պատուհանին տակը կշալե. մեկ օր, էրկու

¹ Վ. Սարոյան, Մարդկային կատակերգություն, Երևան, 1959, էջ 9—10 (քաղվածքը բերում ենք գրքի թարգմանիչ և. Գաշտեցի առաջաբանից):

² Լ. Վազնե, Պատմություն նկարիչ Այվազովսկու մասին, Երևան, 1962, էջ 271—272:

օր, իրեք օր... թագավոր դուս կուգա կասե. Տղա, աղվոր կշալես, բայց իմ աղջիկ քեզ չի սիրեր... է,— թող չսիրե,— կպատասխանե տղան, բայց ես անոր կսիրեմ:— Հիմա՛ մենք ու Մասիսը...¹:

Տարբեր ժամանակ և տարբեր պայմաններում Հայաստանում նմանօրինակ ուշադրավ ավանդույթյուններ, ավանդական գրույցներ և անգիր հուշապատումներ են հյուսվել ու պատմվել նաև Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու, Հովհան Օձնեցու, Հովհաննես Իմաստասերի, Ներսես Շնորհալու, Հովհան Ռոտմեցու, Գրիգոր Տաթևացու, Հակոբ Պարոնյանի, Պետրոս Ադամյանի, Կոմիտասի, Թորոս Թորամանյանի, Մանուկ Աբեղյանի, Ավետիք Իսահակյանի, Եղիշե Չարենցի, Վ. Համբարձումյանի և ղիտույթյան, գրականության ու արվեստի ուրիշ նշանավոր գործիչների մասին:

Մերթ վաղնշական դարերից եկող հրաշապատում պատկերներով ու կերպարներով, մերթ էլ դեպքերին ու դեմքերին ժամանակակից ու ականատես մարդկանց իրապատում հուշերի ձևով ու ճշմարտացի տրվյալներով, վերոհիշյալ ավանդույթյունների, ավանդական գրույցների ու անգիր հուշապատումների մեջ մեր աչքի առջև հառնում են հին ու նոր ժամանակների հայ գիտնականների, գրողների ու արվեստագետների կերպարները՝ ժողովրդի դիրքերից, նրա հայեցակետով և շարժ ու կշիռով դիտված ու գնահատված իրենց մարդկային նկարագրով, ստեղծագործական խառնվածքով և հասարակական վարքագծի բնորոշ կողմերով:

Ինչքան ավելի բախտորոշ ու կարևոր է եղել այս կամ այն գիտնականի, գրողի ու արվեստագետի կատարած առաքելությունը հարազատ ժողովրդի գաղափարական, կուլտուրական և դեղարվեստական զարթոնքի ու լուսավորության համար, այնքան ավելի մեծ ու նշանակալից է եղել և նրա կյանքի ու ստեղծագործության արձագանքը ժողովրդական ավանդույթյուններում:

Հայ ժողովուրդն իր ավանդույթյունների մեջ առանձնակի ուշադրություն է հատկացրել և իր խորը երախտագիտությունն է դրսևորել հատկապես այն գիտնականների, գրողների ու արվեստագետների նկատմամբ, ովքեր բանիվ և գրչով մաքառել են իրենց ազգի գիտության, գրականության ու արվեստի զարգացման, նրա ազատ ու անկախ դոյություն և ինքնորոշման համար, ովքեր իրենց բնատուր տաղանդն ու

¹ Գրի է առել Սարգիս Հարությունյանը 1960 թ. հոկտեմբերին, Երևան քաղաքում:

գիտակցական ողջ կյանքը բոլորանվեր ի սպաս են բերել նրա լինելության իրավունքը հաստատելու և մարդկային մշակույթի պատմության մեջ նրա համար պատվավոր տեղ ապահովելու գործին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵԿԸՄՈՒՑ ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միջազգային ավանդություններ:—Հայկական ավանդությունների շարքում բուն ազգային ստեղծագործություններից բացի առկա են նաև այսպես կոչված միջազգային ավանդություններ: Գրանք այն ավանդություններն են, որոնց զուգահեռներն ու տարբերակները մենք գտնում ենք ոչ միայն Հայաստանին հարևան ժողովուրդների, այլև նրանից աշխարհագրորեն ու էթնիկապես շատ հեռու ազգերի մոտ, և որոնք հայկական համապատասխան ավանդություններին հիշեցնում են երբեմն լոկ իրենց սյուժեներով, թեմաներով ու կերպարներով, իսկ երբեմն էլ՝ իրենց բովանդակությամբ, կառուցվածքով և գեղարվեստական հատկանիշներով:

Վերոհիշյալ կարգի ավանդությունների բնորոշ օրինակներից մեկն է համաշխարհային ջրհեղեղի ավանդությունը, որի այլազան տարբերակները ցրված են ինչպես Ասիայի ու Եվրոպայի, այնպես էլ Աֆրիկայի ու Ամերիկայի բազմաթիվ հին ու նոր ժողովուրդների մոտ: Ահա դրանցից մի քանիսը.

Հայկական տարբերակ: Իմանալով, որ մեծ ջրհեղեղ է լինելու, Նոյ նահապետը մի տապան է շինել տալիս: Երբ ջրերը սկսում են ծածկել գետնի երեսը նա ընտանիքով տեղավորվում է տապանի մեջ, իր հեռվերցնելով նաև մեկական նմուշ զանազան կենդանիներից: Երկար ժամանակ ջրերի վրա լողալուց հետո, Նոյի տապանը վերջապես հասնում է Մասիս սարին և կանգ է առնում նրա վրա: Ժամանակ անց, պարզելու համար, թե իջե՞լ են արդյոք ջրերը, Նոյ նահապետը տապանից բաց է թողնում ագռավին: Ագռավը գնում և այլևս չի վերադառնում: Երկրորդ անգամ Նոյը բաց է թողնում աղավնուն: Մրանից առաջ արձակված ագռավը հարձակվում է աղավնու վրա և կծում է նրա լեզուն: Չնայած դրան աղավնին դարձյալ գտնում է Նոյին ավետիք տալու հնարը: Նա կտրում է ծառի կանաչ ոստը և բերանն առած վերադառնում է տապանը: Նոյը տեսնելով կանաչ ոստը, գլխի է ընկնում, որ ջրերն արդեն ցամաքել են: Նա իր ընտանիքով Մասիսի գագաթից իջնում է ցած (Նախիջևան) և պատվիրում է որդիներին՝ ջուր ցողել իրար վրա, որ-

պեսղի դրանով մարդիկ անմոռաց պահեն ջրհեղեղի հիշատակը (№ № 360, 789Բ):

Կովկասյան տարբերակ: Մեծ ջրհեղեղի ժամանակ Նոյ նահապետը իր գերդաստանով մտնում է տապանը և սկսում է լողալ ջրերի վրա: Քամին տապանը քշում է Կազբեկ լեռան կողմը: Տապանի հատակը քրավում է Կազբեկի գագաթին և երկու կեսի է բաժանում այն, թամբի ձև տալով նրան: Հետո տապանը գալիս հասնում է Արարատ սարին և դադար է առնում նրա վրա: Պարզելու համար, թե ի՞նչ վիճակում է ջրհեղեղը, Նոյը տապանից բաց է թողնում աղավնուն: Սա որոշ ժամանակ անց հետ է վերադառնում՝ կտցին մի կանաչ շյուղ: Նոյը դրանից հասկանում է, որ ցամաքն արդեն երևացել է, ուստի իր գերդաստանի հետ ցած է իջնում Արարատ լեռից¹:

Հունական տարբերակ: Երկրի վրա եղած մարդկանց ոչնչացնելու համար, Զևսը տեղատարափ անձրև է թափում երկնքից, որը հեղեղում է Հունաստանի կեսը: Պրոմեթեոսի որդին՝ Դեկալիոնը, հոր խորհրդով մի տապան է պատրաստում և կնոջ հետ, անհրաժեշտ պաշար առնելով իրենց համար, մտնում են նրա մեջ: Ինն օր և ինը գիշեր ջրերի վրա լողալուց հետո, Դեկալիոնն ու կինը հասնում են Պաոնաս լեռանը և ի նշան իրենց փրկության՝ զոհ են մատուցում Զևսին: Վերջինիս հրամանով նրանք սկսում են քարեր հավաքել գետնից և մեկ-մեկ նետել իրենց գլխավերևով: Դեկալիոնի նետած քարերը տղամարդիկ են դառնում, իսկ կնոջը՝ կանայք: Սրանց միջոցով նորից շենացվում է ջրհեղեղից ավերված երկիրը²:

Շումերա-բաբելական տարբերակ: Քրոնոս աստվածը զգուշացնում է Քսիսուրուս թագավորին մոտալուտ ջրհեղեղի մասին: Սա մի նավ է պատրաստել տալիս, և երբ սկսվում է ջրհեղեղը, հարազատների ու բարեկամների հետ մտնում է նրա մեջ, շնորհակալով վերցնելու նաև անհրաժեշտ կենսամթերք և զանազան տնային թռչուններ ու կենդանիներ: Ժամանակ անց, երբ ջրհեղեղը սկսում է նվազել, Քսիսուրուսը հերթով բաց է թողնում նավում եղած թռչուններից մի քանիսին, նրանց միջոցով պարզելու համար, թե երևացել է արդյոք ցամաքը: Դրսում

¹ Сборник материалов для описания местностей и племен Кавказа, т. 26, р. 3, էջ 102:

² Фрезер, Фольклор в Ветхом завете, М.-Л., 1931, էջ 65—66:

ապաստան ու կեր շտանելով թռչուններն անմիջապես հետ են վերադառնում: Մի քանի օր անց Քսիսուարուսը կրկնում է իր փորձը: Թռչունները վերադառնում են՝ ոտներին կավի հեռքեր: Երբ Քսիսուարուսը երրորդ անգամ է բաց թողնում թռչուններին, նրանք իրենց համար ապաստան ու կեր գտնելով ջրից ազատված ցամաքի վրա, այլևս հետ չեն վերադառնում: Ջրհեղեղի վերջանալու նշան համարելով դա, Քսիսուարուսը նավը ուղղում է դեպի ցամաք և յուրայինների հետ իջևանում է Հայաստանի լեռներին: Ի նշան իրենց փրկության Քսիսուարուսն իր մարդկանց հետ սկսում է զոհեր մատուցել աստվածներին¹:

Աֆրիկյան տարբերակ: Ժամանակին գետերը հեղեղում են ողջ երկիրը: Ասածու ցուցումով երկու մարդ վերցնելով իրենց հետ զանազան արմատիքներ, մեկական գույգ տեսակ-տեսակ թռչուններ ու կենդանիներ, մտնում են մի նավի մեջ և սկսում են լողալ ջրերի վրա: Երբ ջրհեղեղը կամաց-կամաց սկսում է նվազել, նրանք բաց են թողնում աղավնուն՝ պարզելու համար, թե երևացե՞լ է արդյոք ցամաքը: Աղավնին անմիջապես հետ է վերադառնում: Ավելի ուշ նրանք թողնում են բազեին, որը այլևս հետ չի գալիս: Դրանից կռահելով, որ ցամաքն արդեն երևացել է, նավի մարդիկ վերցնում են իրենց հետ եղած արմատիքն ու կենդանիներին և ցամաք են դուրս գալիս²:

Մեքսիկական տարբերակ: Երբ սկսվում է ջրհեղեղը, Տեցպի անունով մի մարդ իր հետ վերցնելով կնոջը, երեխաներին և զանազան կենդանիների ու սերմերի նմուշներ, մտնում է մի մեծ նավի մեջ և սկսում է լողալ ջրերի վրա: Բավական ժամանակ անց, երբ Տեցպին նկատում է, որ ջրերն աստիճանաբար իջնում են, բաց է թողնում նավի մեջ եղած անդդին: Սա ջրի տակից դուրս եկած ցամաքի վրա դիակներ գտնելով, սկսում է հոշոտել դրանք և այլևս չի վերադառնում: Տեցպին հերթով բաց է թողնում ուրիշ թռչունների, որոնք նույնպես հետ չեն գալիս: Վերջին անգամ նա բաց է թողնում կոլիբրի անունով թռչնակին: Սա շուտով հետ է վերադառնում, կացին մի կանաչ սատ: Դրանից իմանալով, որ ջրերն արդեն լրիվ իջել են, Տեցպին նավն ուղղում է դեպի հեռվում երևացող ցամաքը³:

¹ Նույն տեղում, էջ 48—49:

² Նույն տեղում, էջ 125:

³ Նույն տեղում, էջ 103:

Հյուսիս-ամերիկյան տարբերակ: Աշխարհի ստեղծման առաջին օրերին երկիրը ծածկվում է ջրով: Խեղդվելուց ազատվելու համար մի քանի մարդիկ վերցնելով իրենց հետ որոշ թվով կենդանիներ, մտնում են նավը և սկսում են լողալ ջրերի վրա, սնվելով ձկներով: Երբ հեռո՛հեռո՛ ջրերն իջնում են, նավորները հեռվում նկատում են ինչ-որ լեռներ: Նավն ուղղելով դեպի այդ կողմը, նրանք իջեանում են լեռների վրա: Շատ շանցած երևում է նաև իսկական ցամաքը: Նավորները վերցնելով իրենց հետ նավի մեջ եղած կենդանիներին, լեռներից իջնում են երկրի վրա և սկսում են աճել ու բազմանալ¹:

Քննության առարկա ավանդությունը, բացի վերը նշվածներից, ունի նաև իր շինական, հրեական, հին հնդկական, ավստրալիական, հարավ-ամերիկյան և այլ տարբերակներ²:

Համաշխարհային ջրհեղեղի վերաբերյալ տարբեր ժողովուրդների ավանդությունների մեջ եղած անուրանալի նմանություններն ու ընդհանրությունները որոշ գիտնականների կողմից բացատրվել է այդ ավանդությունների մի ընդհանուր ու միասնական սկզբնաղբյուրից սերած լինելու հանգամանքով: Նրանց կարծիքով դրանք ոչ այլ ինչ են, բայց եթե Նոյան տապանի բիբլիական հայտնի ավանդության ազավազված վարկածները, որոնք ծնունդ են առել Աստվածաշնչի աղգեցությունամբ: Ինչ վերաբերում է Նոյան տապանի բիբլիական ավանդությանը, ապա այս վերջինն էլ նույն այդ գիտնականների հավաստմամբ՝ յուրօրինակ մթազնված մի արձագանքն է հեռավոր դարերում տեղի ունեցած մի այնպիսի իրական ջրհեղեղի, որն ընդգրկել է ողջ աշխարհը³:

Չի կարելի ուրանալ այն փաստը, որ քննության առարկա ավանդության առանձին տարբերակներ որոշ ժողովուրդների մոտ իրոք սերում են Աստվածաշնչից և հանգիստանում են Նոյան տապանի բիբլիական ավանդության ավելի կամ պակաս հարազատ արձագանքները: Այդպիսիք են ամենից առաջ քրիստոնեություն ընդունած կամ վերջինիս աղգեցության ոլորտներում գանվող մի շարք ազգերի, այդ թվում և հայերի ու ասորիների համապատասխան ավանդությունները: Հայտնի

¹ Նույն տեղում, էջ 121—122:

² В. Б. Никитина, Е. В. Паевская, Литература древнего Востока, М., 1962, 346—347. Фрезер, Фольклор в Ветхом завете, М.—Л., 1931, էջ 56—65, 76—77, 85—86, 93—102.

³ Фрезер, Фольклор в Ветхом завете, М.—Л., 1931, էջ 126:

է, որ կ' հայերի, կ' սրանց հարևան ասորիների մոտ Աստվածաշնչից անկախ, հնագույն ժամանակներից գոյություն են ունեցել ջրհեղեղի մասին ավանդություններ, որոնք հետագայում, Աստվածաշնչի ազդեցությամբ կենդանացել ու նորոգվել են: Այդօրինակ ավանդություններից է մեզանում 5-րդ դարում ստեղծված՝ Հակոբ Մծրնեցի հայրապետի հետ կապված ավանդությունը՝ բերված Փ. Բուզանդի Պատմության մեջ¹, ուր պատմվում է այն փորձերի մասին, որ կատարում է հիշյալ հայրապետը Նոյան տապանը տեսնելու նպատակով (№ 813 Ա): Այդպիսիք են մասամբ նաև հին արաբների և արևելյան այլ ժողովուրդների ջրհեղեղի վերաբերյալ որոշ ավանդություններ, որոնք Աստվածաշնչի ուրիշ առասպելների ու ավանդությունների հետ մուտք գործելով Ղուրանի մեջ, վերջինիս միջոցով հայանի են դարձել իսլամություն ընդունած շատ ժողովուրդների²:

Ընդունելով հանդերձ Նոյան տապանի բիբլիական ավանդության տարածման փաստը մի շարք ժողովուրդների մեջ, միաժամանակ անհնար է համաձայնել այն պնդումին, ըստ որի ջրհեղեղի վերաբերյալ աշխարհով մեկ տարածված նմանատիպ բոլոր ավանդությունների միակ և եզակի սկզբնաղբյուրը եղել է Աստվածաշունչը, քանի որ գիտության կողմից համապատասխան համոզիչ փաստերով հաստատված է, որ Նոյան տապանի բիբլիական սկզբնաղբյուր կոչվածը իրականում ոչ թե սկզբնաղբյուր է, այլ համեմատաբար ուշ ժամանակի մի կրկնօրինակ՝ ավելի հին շումերա-բաբելական համապատասխան ավանդության:

Տարբեր երկրներում ու մայրցամաքներում, հեռավոր անցյալում, իբրև հետևանք այնտեղ կատարված տեղատարափ անձրևների, ձնհալի, երկրաշարժների, ծովերի ու օվկիանոսների ջրերի տեղաշարժման, եղեջ են և դանազան դարերում, դանազան ժողովուրդների մոտ, իրարից անկախ ստեղծված վերոհիշյալ ավանդությունները³:

Ինչ վերաբերում է նշված ավանդությունների մեջ եղած նմանություններին ու ընդհանրություններին, ապա դրանք հետևանք են այն բանի, որ տարբեր երկրներում և մայրցամաքներում սպրոզ մարդկանց

¹ Մ. Աբելյան, Հայոց հին գրականության պատմություն, դիրք Ա., Երևան, 1944, էջ 91:

² В. Б. Никитина, Е. В. Паевская, Литература древнего Востока, М., 1962, էջ 347:

³ Фрезер, Фольклор в Ветхом завете, М.—Л., 1931, էջ 132—136:

վրա, բնական տարբեր պատճառներից առաջ եկած ջրհեղեղներն ունեցել են նույն ազդեցությունը և նրանք հար և նման ձևով են մտածել՝ փրկվելու բնության այդ տարերային աղետի ահավոր վտանգից, ապաստան գտնելու ջրից ազատ մնացած բարձունքների վրա և շարունակելու իրենց նախկին բնական կյանքը:

Միջազգային ավանդությունների ոչ պակաս բնորոշ մի ուրիշ օրինակ է շղթայված կամ արգելափակված դյուցազնի կամ հերոսի ավանդությունը, որի տարբերակները հայտնի են ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան շատ ժողովուրդների բանավոր ստեղծագործությունների մեջ: Ահա դրանցից մի քանիսը.

Հայկական տարբերակ: Արտավազդ թագավորազնը հոր անեծքով ևրկաթե կապանքներով շղթայված է Մասիս լեռան քարանձավներից մեկում: Երկու շներ անդադար կրծում են նրա շղթաները: Արտավազդը ջանք է թափում ազատվելու արգելարանից, սակայն դարբինների կռահահարությունից նորից ամրանում են նրա շղթաները, և Արտավազդը մնում է գամված իր տեղում (№ 805):

Մի ուրիշ ավանդությամբ՝ Մհերը ձիու հետ միասին հոր անեծքով փակված է Վանի մոտ գտնվող Ազոավա քարում: Տարին մի անգամ, Համբարձման գիշերը, բացվում է Ազոավա քարի դուռը: Մհերը ձիով դուրս է գալիս քարանձավից: Նա փորձում է գետնի ուժը և համոզվելով, որ այն չի կարող դիմանալ իր ծանրությունը, նորից հետ է վերադառնում: Նա դուրս կգա այն ժամանակ, երբ գարին դառնա մասուրի շափ, ցորենի հատիկն էլ՝ ընկուզի (№ 98Ա):

Վրացական տարբերակ: Ամիրանին մարդկանց ազատում է դևերի սպանալիքից, սովորեցնում կրակ ձեռք բերելու և մետաղը մշակելու միջոցը: Նույն մարդկանց համար նա կովի է բռնվում աստծու (Քրիստոսի) հետ, որի համար աստված (Քրիստոսը) շարաշար պատժում է նրան՝ շղթայելով Կովկասյան ժայռերին: Ամիրանիի սուրը բնկած է նրա կողքին, իսկ հավատարիմ շունն էլ անվերջ կրծում (լիզում) է տիրոջ շղթաները՝ նրան ազատելու համար: Ամեն Ավագ Հինգշաբթի՝ երկրի բնդերքից մի դարբին է դուրս գալիս, նորից ամրացնում է Ամիրանիի մաշված շղթաները և չի թողնում, որ նա ազատվի կապանքներից¹:

¹ Տե՛ս В. Ф. Миллер, Кавказские предания о великанах, прикованных горам («Журнал Министерства народного просвещения», СПб 1883, № 1, էջ 110, 116: Հմմտ. М. Я. Чиковани, Народный грузинский эпос о прикованном Амირани, М., 1966, էջ 205, 311:

Հունական տարբերակ: Զևսը զայրանալով մարդկանց վրա խլում է նրանցից կրակը: Դյուցազն (տիտան) Պրոմեթեոսը կրակի ետեից գնում է Օլիմպոս և գողանալով այն աստվածներից, բերում հանձնում է մարդկանց: Պրոմեթեոսին պատժելու համար Զևսը նիզակով ճեղքում է նրա կուրծքը և գամում Կովկասյան ժայռերին: Մի հսկայական արծիվ ամեն առավոտ կտցահարում է Պրոմեթեոսի լյարդը, որը գիշերը նորից վերականգնվում է: Պրոմեթեոսի տառապանքները տեսնելով, Զևսի որդի Հերակլեսը սպանում է արծվին և ազատագրում է շղթայված տիտանին¹:

Իրանական տարբերակ: Եռագլուխ վիշապ Աժդահակին (Չոհակ) պարտության է մատնում դյուցազն Ֆրեդունը (Հրուդեն) և Կավե դարբնի օգնությամբ շղթայում է Դրմավենդ լեռան վրա: Արչունը կաթիլ-կաթիլ հոսում է շղթայված Աժդահակի վերքից դեպի գետին, իսկ երբ նա ցնցվում է՝ երկրաշարժ է լինում: Աժդահակը մինչև աշխարհի վերջը դատապարտված է շղթայված մնալու, որովհետև նրա աղատությունը մեծ չարիք կարող է պատճառել մարդկանց: Իրանի Դրմավանդ քաղաքի բնակիչները ամեն տարի իբրև տոն նշում են Աժդահակի շղթայման օրը²:

Սերբական տարբերակ:—Դյուցազն Մարկո Կրալեիչը հարազատ հոր փառքին նախանձելու համար անհիծվում է նրա կողմից: Այդ անեծքի պատճառով Մարկո Կրալեիչը մի անգամ շատ նեղ դրության մեջ է ընկնում պատերազմի դաշտում և խնդրում է աստծու օգնությունը: Աստված խղճում է Մարկոյին և փակում է նրան մի քարայրի մեջ՝ իր ձիու և թրի հետ: Մարկո Կրալեիչը այն ժամանակ է դուրս գալու քարայրից և փրկելու Սերբիան թշնամիներից, երբ նրա սուրբ կազատվի քարի միջից և Շարան ձին էլ՝ կրծելով կսպառի քարայրում եղած ամբողջ մամուր³:

Գերմանական տարբերակ: Թոռ աստվածը՝ դյուցազն Բալդրին խարդավանքով սպանելու համար՝ քարայրի մեջ շղթայում է հսկա Լուցիֆերին: Վերջինիս գլխավերևում գտնվող որդերը անընդհատ լորձ ու թույն են արտադրում, որոնք թափվում են նրա երեսին: Լուցիֆերի ցնցումներից

¹ „Вестник древней истории“, 1947, № 1, էջ 295, 302, 303:

² Fr. Spiegel, Iranische Alterthumskunde, I, էջ 532:

³ М. Халанский, Южно-славянские сказания о Кралевиче Марке, հատ. 1, Варшава, 1893, էջ 159; Հմմտ. И. Кравцов, Сербский эпос., М.—Л., 1933, էջ 78:

դողում է ամբողջ երկիրը: Նա մինչև աշխարհի վերջը պետք է մնա շրթթալված վիճակում, որ շկարողանա պատժել աստվածներին ու մարդկանց: Գրա համար է, որ Զալցբուրգի և Տրիոլի բոլոր դարբինները օրվա վերջում, իրենց աշխատանքն ավարտելուց հետո, մուրճով խփում են սալին, որ նորից ամրանան Լուցիֆերի շղթաները և նա շկարողանա դուրս գալ իր քարայրից¹:

Բացի նշված տարբերակներից շղթալված դյուցազնի ավանդությունը ունի նաև իր՝ շինական (Գունյ)², հնդկական (Միթրա)³, հրեական (Մեսսիա)⁴, ռուսական (Միխայիլ Պոտիկա)⁵, արխաղական (Աբուրսկիլ)⁶, նարտական (Ամրան)⁷ և այլ տարբերակները:

Շղթալված (արգելափակված) դյուցազնի (հերոսի) վերաբերյալ աշխարհով մեկ տարածված ավանդությունների մեջ եղած նմանությունների փաստին, ինչպես այլուր, այնպես էլ մեզանում արվել են տարբեր բացատրություններ:

Առանձնապես բնորոշ են այս առումով հայ և վրաց մի քանի բանասագետների կարծիքներն ու տեսակետները:

Գեոևս անցյալ դարի առաջին կեսերին, Մկրտիչ էմինը ելնելով հայոց Արտավազդի և վրաց Ամիրանի՞ր ավանդությունների մեջ եղած նմանության փաստից, նշել է, որ երկրորդը «ոչ այլ ինչ է, բայց եթե հատուած ինչ ի հին վիպասանութեանց հայոց, որ անցեալ առ Վերիացիս, սակաւ մի այլևայլութեամբ ընկալեալ եղև ի նոցունց: Յերկոսին յաւանդութիւնսդ տարբերութիւն տեսանի միայն յանուանս Արտաւազդայ և Ամիրանայ և լերանց, յորս նորա կալեալ կան կալանաւոր, առաջինն ի Մասիս, երկրորդն ի Կովկասեան լերինս: Իսկ այլ ամենայն հանգամանք առասպելին վրաց նոյն են ընդ որոց յերգս Գողթան դարբայէն հայոց պատմին»⁸:

¹ E. H. Meyer. Cerm. Muthol., էջ 107, 163.

² В. Б. Никитина, Е. В. Паевская, Литература древнего Востока, М., 1962, էջ 347:

³ БСЭ, 2-րդ հրատ., հատ. 27, էջ 600:

⁴ И. Крывелев, Книга о библии., М., 1958, էջ 185.

⁵ Ор. Миллер, Илья Муромец и богатырство Киевское, СПб., 1869, էջ 199.

⁶ В. Гарция, Из абхазских народных преданий и поверий, СМОМПК, հատ. 13, րտժ. 2, էջ 32—43:

⁷ А. Кайтмазов, Сказания о нартах, СМОМПК, հատ. 7, րտժ. 2, էջ 3—36:

⁸ Մ. էմին, Վէպք հնոյն Հայաստանի, Մոսկվա, 1850, էջ 42:

Միակ անուղղակի և բավական խախուտ փաստարկը, որ բերում է էմինը իր կարծիքը հիմնավորելու համար, դա այն է, որ Արտավազդի ավանդությունը կապված է հեթանոսական հավատալիքների հետ, իսկ Ամիրանիինը՝ քրիստոնեական: «Եւ զի զրոյցն վրաց ի մերոց ի փոխ առեալ է՝ յայտ անտի է,— դրում է նա,— զի մայր Ամիրանայ՝ որպէս և յետինս այս, քրիստոնեայք են. իսկ մերն Արտավազդ և քաջք և երգք զնոցունց ի հեթանոսութեան անդ ունին զսկիզբն»¹:

Նույն դարի 60-ական թվականներին, վրաց Ամիրանիի հայկական ծագման վերաբերյալ էմինի վերոհիշյալ կարծիքին հար և նման կարծիք է հայտնել և մի ուրիշ հայ բանագետ՝ Ստ. Պալասանյանը, գրելով՝ «Վրաց Ամիրանի զրույցը, որ մինչև այժմ էլ պատմվում է նույն ժողովրդի մեջ, մեր Արտավազդի զրույցի գրեթե նույն և նմանն է, և ինչպես երևում է, հին ժամանակներից Հայաստանից Վրաստան է անցկացել: Այս երկու զրույցների մեջ եղած զանազանությունը էնդուրումն է երեւում, որ առաջինը հեթանոսական ժամանակների պատկանելով՝ հեթանոսական կարծիքներ է բովանդակում, իսկ երկրորդը քրիստոնեության ժամանակների վերաբերելով՝ քրիստոնեական կարծիքներ է պարունակում»²:

Քննության առարկա ավանդությունների վերաբերյալ տրամադժորեն հակառակ տեսակետ են արտահայտել վրաց բանագետներից մի քանիսը:

Ա. Ծերեթելու տեսակետով, օրինակ, ինչպես Յազոն-Մեղեայի, այնպես էլ Պրոմեթեոսի ավանդությունները Վրաստանի արգասիքն են. «այստեղ են նրանք ծնվել, այստեղ են հասակ առել, և հեթաթների կերպարանք ընդունած, Կոլխիդայից անցել են Հելլադա»³: Հաստատելով Ա. Ծերեթելու վերոհիշյալ վարկածը Պրոմեթեոսի վրացական ծագման վերաբերյալ, վրաց բանագետ Պ. Ինգորովան, ավելի հեռուն է գնում. գտնելով, որ հայկական Մհերի ավանդության սկզբնաղբյուրը ևս եղել է վրաց Ամիրանիի ավանդությունը⁴: Մի ուրիշ ժամանակակից վրաց բանագետ, նշելով հանդերձ, որ ինքը՝ «չի բաժանում այն տեսակետը,

¹ Նույն տեղում:

² Ստ. Պալասանյան, Պատմություն հայոց գրականության, հատ. Ա., Թիֆլիս, 1865, էջ 186:

³ Ա. Ծերեթելի, Երկեր, հատ. 3, Թիֆլիս, 1940, էջ 679 (վրացերեն):

⁴ Պ. Ինգորովա, Սասունցի Դավիթ հայկական էպոսը, Թիֆլիս, 1934, էջ XXVIII (վրացերեն): Տե՛ս նաև «Մնաթորի», 1939, № 1, էջ 184 (վրացերեն):

որի համաձայն կրտսեր Մհերի ցիկլի սկզբնաղբյուրը իբր թե եղել է Ամիրանիի ավանդությունը¹», մի փոքր ավելի զգուշավոր ու նուրբ ձևակերպմամբ, բստ էություն կրկնում է Պ. Ինգորովայի տեսակետը, գրելով. «Ամիրանի ցիկլը, լայնորեն տարածված է վրաստանում և նրա սահմաններից դուրս: Շղթայված հերոսի վերաբերյալ զրույցը ժողովրդականացած է վրացերեն, սվաներեն, մեգրելերեն, աբխազերեն, հայերեն, օսեթերեն, չերքեզերեն, լակերեն և կաբարդիներեն լեզուներով: Սակայն, կենտրոնական տեղը պատկանում է վրացականին: Զրույցը վրացականից անցել է մյուս ժողովուրդներին: Այդ բանը հաստատվում է նաև այնու, որ Ամիրանի մասին երգեր և ոտանավորներ հանդիպում են միայն վրացերեն լեզվով: Արմատավորվելով կովկասի մյուս ժողովուրդների մեջ, վրացական զրույցը աստիճանաբար ձուլվել է տեղականների հետ և վեր է ածվել ազգային էպոսի»: Եվ ապա. «ժամանակակից կովկասյան ժողովուրդների մեջ տարածված վիպական սյուժեների ուսումնասիրությունը մեզ կանգնեցրեց մի կողմից վրացական «Ամիրանի», «Տարելիանի» և «Ռոստոմիանի», և մյուս կողմից Մհերի մասին եղած հայկական վիպական զրույցների փոխհարաբերության պրոբլեմի առաջ: Որոշակի շրջաններում ժողովրդականացած այդ սյուժեները ներկայումս կապված են տարբեր ժողովուրդների հետ, բայց, ինչպես հայտնի է, լեզվական բազմազանությունը միշտ չէ, որ ենթադրում է սյուժեների բազմաձևազուսմայնություն»² (ընդգծումները մերն են—Ա. Ղ.):

Եղել են և ուրիշ կարծիքներ ու տեսակետներ, որոնց ներկա դեպքում հարկ չենք համարում մի առ մի անդրադառնալ:

Բացառված չհամարելով ինչպես վրացիների ու հույների, այնպես էլ մանավանդ վրացիների ու հայերի քննության առարկա ավանդությունների (Ամիրանի, Պրոմեթեոս, Արտավազդ, Մհեր) փոխադարձ ազդեցության ու ներգործության հնարավորության հանգամանքը, նկատի

¹ М. Чиковани, Народный грузинский эпос о прикованном Амირани, Москва, 1966, էջ 70—71:

² Նույն տեղում, էջ 16, 200:

³ S. G. Potanin, Восточные мотивы в средневековом европейском эпосе. М., 1899, էջ 395, Լ. Մելիքբերեկի, Արտավազդի և Մհերի հեռքերը վրաստանում («Բաների հայաստանի գիտական ինստիտուտի», Վաղարշապատ, 1921—1922, գիրք Ա. և Բ., էջ 93—104), Н. Марр, Кавказоведение и абхазский язык, «Избранные работы», հատ. 1, 1933, էջ 71 և այլն:

ունենալով հիշյալ ժողովուրդների միջև գոյություն ունեցած պատմական հարաբերություններն ու կուլտուրական հաղորդակցությունը, որոնց պայմաններում նշված ավանդություններից մեկի կամ մյուսի այս կամ այն մանրամասնը կարող էր փոխ առնվել և հարմարեցվել այս կամ այն ժողովրդի ազգային հերոսի կերպարին, մենք միաժամանակ անընդունելի և իրական, պատմական կովաններից դուրկ ենք համարում այն կարծիքներն ու տեսակետները, որոնց համաձայն՝ վրաց Ամիրանին իբր թե ծագել է հայկական Արտավազդից (Մ. էմին, Ստ. Պալասանյան), հունական Պրոմեթեոսը՝ վրաց Ամիրանից (Ա. Ծերեթելի, Պ. Ինգորովա), հայկական Մհերը՝ վրաց Ամիրանից (Պ. Ինգորովա, Մ. Չիկովանի): Այդ կարծիքներն ու տեսակետները ավելի շատ խարսխված են դրանք պաշտպանող հայ և վրացի հեղինակների ցանկության, քան համապատասխան առարկայական փաստերի վրա: Եման տրամադծորեն իրար հակառակ կարծիքների ու տեսակետների գոյության հանգամանքն, ինքնին, խոսում է վերջիններիս խախուտ լինելու մասին:

Արձանագրելով հանդերձ ինչպես հայ, այնպես էլ վրաց բանագետների կարծիքների ու տեսակետների հավասար չափով հիմնադուրկ լինելը, միաժամանակ չի կարելի շնշել այն էական տարբերությունը, որ գոյություն ունի դրանց հեղինակների դիրքորոշման և մեկնակետերի մեջ: Մինչդեռ էմինի և Պալասանյանի կարծիքները հայտնվել են անցյալ դարի 50—60-ական թվականներին, բանագիտական մտքի զարգացման համեմատաբար ցածր աստիճանի պայմաններում, բանահյուսական սյուժեների ու մոտիվների փոխառության տեսակետի տիրապետության շրջանում, Ինգորովայի և Չիկովանու տեսակետները արտահայտվել են մեր օրերում:

Ուտի, եթե էմինի և Պալասանյանի կարծիքները կտրելի է դիտել որպես հայ հեղինակների յուրահատուկ տուրքը ժամանակի իշխող փոխառության տեսությանը, պարուրված նրանց ազգային ոգմանտիզմի պարզամիտ հավատով, ապա վրաց բանագետների և հատկապես Պ. Ինգորովայի տեսակետը պետք է համարել ժամանակավրեպ և ըստ ամենայնի միտումնավոր մի տեսակետ, որը իրավացիորեն խստագույնս քննադատության է ենթարկվել ակադեմիկոս Հովսեփ Թրբելու կողմից՝ իբրև «յուրատեսակ ունանչիստական պահանջի մի սնանկ փորձ»¹:

¹ Ակադ. Հ. Ա. Ծերեթի, Սասունցի Գավիթ էպոսը (տպված է «Խորհրդային գրականություն» ամսագրում, 1939, № 8—9, էջ 13): Տե՛ս նաև նույն հեղինակի՝

Եթե առաջնորդվելու լինենք Ինգորովայի տրամաբանությամբ, ապա կարելի կլինի պնդել, որ վրացական ծագում ունեն նաև վրացիների հետ կուլտուր-պատմական քիչ թե շատ երկարատև շփման ու հարաբերության մեջ եղած՝ աբխազների Աբուսկիլը, նարտերի Ամրանը, իրանցիների Հրուզենը, և սրանց պես էլի ուրիշներ, քանի որ վերջիններիս և վրաց Ամիրանի միջև ևս առկա են հար և նման ընդհանրություններ՝ ինչ կա մի կողմից հունական Պրոմեթեոսի, հայկական Արտավազդ-Մհերի և մյուս կողմից վրացական Ամիրանի միջև:

Պատմական փաստը, սակայն, այն է, որ շղթայված (արգելափակված) դյուցազնի (հերոսի) ավանդության վերևում հիշատակված բոլոր տարբերակները յուրաքանչյուր առանձին ժողովրդի ինքնուրույն ստեղծագործության արգասիքն են, և զանազան երկրներում ծագել են իրարից բոլորովին անկախ, այդ նույն երկրների բնակչության անցած տնտեսական զարգացման հար և նման փուլերում: Խոսքը վերաբերում է քննության առարկա ավանդության էությանն ու հիմնական նկարագրին և ոչ նրա առանձին մանրամասներին (հերոսի անունը, բնավորության այս կամ այն մասնակի գիծը և այլն), որոնք տարբեր ժողովուրդների միջև տեղի ունեցած կուլտուր-պատմական փոխհարաբերությունների ու շփման պայմանների ազդեցությամբ կարող են մի ժողովրդից անցնել մյուսին:

Ինչպես հունական հուշակավոր Պրոմեթեոսը, այնպես էլ վերջինիս բազմազգի տարբերակ-զուգահեռները ստեղծվել են պատմական մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ դեռևս չէին ձևավորվել ոչ միայն այդ ավանդությունների տեղի ժողովուրդները, այլև հետագայում նրանց կազմի մեջ մտած սոհմերն ու ցեղերը: Մարդկային պատմության վաղնջական այդ փուլը դիտության մեջ հայտնի է «բարբարոսության»

«Армянский героический эпос», Ереван, 1956, էջ 113: Նույնը նաև հայերեն՝ Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 105—106:

Ի միջի այլոց նկատենք, որ հունական Պրոմեթեոսի և հայկական Արտավազդի ու Մհերի վրացական ծագման մասին վերը բերված տեսակետները մեզ հիշեցնում են ուսանավոր երգիչ Ֆ. Ի. Շալյապինի վրացի լինելու վարկածը, որը ամենայն լրջությամբ «հիմնավորված» և ի լուր աշխարհի հայտարարված է վրաց ժամանակակից արվեստաբաններից մեկի կողմից (տե՛ս Шалва Кошмашвдзэ, Тбилисский театр оперы и балета в 1851—1921, Тбилиси, 1950: Սրա քննադատությունը տե՛ս К. Ляско, В. Пуртов, Шалапин, легенды и быль, «Советская культура», 1968, № 121, 12 հոկտեմբերի, էջ 4):

շրջան անունով: Դա այն ժամանակներն էին, երբ մարդը առաջին անգամ սկսում է մտածել երկաթը կոելու և կոփելու մասին՝ նրանից գործիք ու զենք պատրաստելու նպատակով, երբ այդ հողի վրա ձևավորվում է առաջին արհեստներից մեկը՝ դարբնությունը, և դարբինները կապվում են պաշտամունքի առարկա դարձած երկաթի ու կրակի տարրերի հետ, որոնց վերագրվում է գերբնական և մոգական զորություն, իբրև մարդու տնտեսական և արտադրական կյանքում խոշորագույն դեր խաղացող արարածների, իբրև առաջին մետաղագործների¹:

Հունական Պրոմեթեոսը և նրա այլազգի զուգահեռ-տարբերակները մարմնավորում են իրենց մեջ տարբեր երկրներում ու մայրցամաքներում ապրող զանազան ժողովուրդների բարեկեցիկ ու ապահով կյանքով ապրելու շատ բանով իրար նման ու հարազատ ձգտումներն ու ակնկալությունները: Ըստ այդմ և իրար նման են տարբեր ժողովուրդների այդ ձգտումներն ու ակնկալությունները մարմնավորող ու իրականացնող՝ մարդկանց կրակ, լույս ու ջերմություն պարզևող բարի դյուցազներն ու հերոսները (Հունական Պրոմեթեոսը, հայկական Արտավազդն ու Մհերը, վրացական Ամիրանը, իրանական Հրուդենը, սերբական Մարկոն, գերմանական Թոոթը և այլն) և վերջիններիս հակառակորդ՝ մարդկանց վնաս ու կործանում սպառնացող շար ուժերը (զանազան շարքեր, դևեր, վիշապներ, սատանաներ և այլն):

Միջազգային բնույթի հայկական ավանդությունների շարքին է պատկանում նաև զանազան շինվածքների (բերդ, պարիսպ, աշտարակ, կամուրջ և այլն) շառվածքի (պատ, հիմք) մեջ կենդանի վիճակում բաղված գոհի (աղջիկ, կին, տղա և այլն) ավանդությունը, որի տարբերակներին մենք հանդիպում ենք աշխարհի տարբեր վայրերում ապրող ժողովուրդների մոտ: Ահա այդ ավանդություններից մի քանիսը.

Հայկական տարբերակ: Ախայցիսայի բերդը կառուցելիս շարունակ բանդվել են նրա սպառերը: Ոմանք խորհուրդ են տվել վարպետներին փլուզումը կանխելու համար պատի մեջ կենդանի վիճակում մի աղջիկ թաղել իբրև զոհ: Շլանալով խոստացված առատ ոսկուց, մի անգույն պառավ այդ նպատակի համար տալիս է հարազատ քրոջ իր խնամքին մնացած որբ աղջկան: Բերդի պատի մեջ դրված աղջիկը շարելու ընթացքում աղերսագին խնդրում է մորաքրոջը փրկել իրեն վերահաս մա-

¹ Հմմտ. Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հատ. Բ, Երևան, 1941, էջ 276, Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, էջ 106—107:

իր բարեհաջող ավարտին է հասնում Արճեշի շքեղ տաճարի շինարարությունը¹:

Գերմանական տարբերակ: Թյուրինգիայի բնակիչները իրենց կառուցած կիրենշտեյնի ամրոցը հաստատուն և անմատչելի դարձնելու համար, մեծ գումար վճարելով, հարազատ մորից գնում են նրա աղջկան, որպեսզի շարեն ամրոցի պատի մեջ: Երբ բանվորները պատի մեջ դնելով աղջկան, սկսում են շարվածքը, աղջիկը դիմելով մորն ասում է. «Մայրիկ, ես դեռ տեսնում եմ քեզ»: Փամանակ անց նա ասում է՝ «Մայրիկ ես դեռ մի քիչ տեսնում եմ քեզ»: Իսկ երբ դրվում է պատի վերջին քարը, աղջիկն ասում է. «Մայրիկ, ես այլևս չեմ տեսնում քեզ...»²:

Դանիական տարբերակ: Կոպենհագեն քաղաքի պարիսպները կառուցելու ժամանակ շարվածքը շարունակ փուլ է գալիս: Վարպետներին խորհուրդ է տրվում գոհաբերություն անել: Այդ նապաստակով նրանք գրանում են մի փոքրիկ անմեղ աղջիկ, նստեցնում են նրան ուտելիքներով ու խաղալիքներով ծածկված սեղանի մոտ: Եվ երբ աղջիկը սկսում է տարվել ուտելիքներով ու խաղալիքներով, 12 վարպետներ արագ-արագ բարձրացնում են պարիսպի պատերը՝ աղջկան իբրև զոհ՝ կենդանի թաղելով շարվածքի մեջ: Այնուհետև նրանք երաժշտության աղմուկի տակ բարձրացնում են քաղաքի մյուս բոլոր պարիսպները և, որոնք այլևս չեն փլվում և մնում են անխախտ իրենց տեղում³:

Իտալական տարբերակ: Իտալիայի Արատու գետի վրա որմնադիր վարպետները սկսում են կամուրջ կառուցել: Նրանց ցերեկվա շինածը շարունակ քանդվում էր գիշերով: Վարպետներին խորհուրդ են տալիս կամուրջի հիմքում կենդանի-կենդանի թաղել իրեն կանսանցից մեկին ու մեկին, որպեսզի կամուրջն այլևս չքանդվի: Այդպես էլ անում են: Դրանից հետո կամուրջի շինարարությունը հասնում է իր բարեհաջող ավարտին⁴:

¹ Barberot E., Histoire des styles d' Architecture, Paris, 1891, հատ. 2, էջ 268—269: Հմտ. Նրջիկ, Նյութեր Արճեշ քաղաքին, Պուրշեշ, 1942, էջ 52:

² Тэйлор Э., Происхождение культуры, М., 1939, էջ 60:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Նմանօրինակ ավանդություններ ունեն նաև՝ ուսաները¹, շատլանդացիք, անգլիացիները և ուրիշ շատ հին ու նոր ժողովուրդներ²:

Շինվածքների շարվածքի մեջ կենդանի թաղված զոհի վերաբերյալ պանազան ժողովուրդների մոտ պատմվող համապատասխան ավանդությունների մեջ առկա նմանությունների փաստը թե կուլտուր-պատմական և թե մեթոդաբանական տեսակետից մասնագիտական գրականության մեջ ստացել է տարբեր մեկնաբանություններ:

Գիտնականներից մեկն, օրինակ, տվյալ փաստը բացատրել է զարգացող երկրագործության ազդեցության հետևանքով երբեմնի թոշոթրական ցեղերի նստակեցության անցնելու երևույթով, որը, խոշորագույն բեկում հանդիսանալով ժողովուրդների կյանքում, իր անդրադարձումը շեր կարող չունենալ նրանց դիցաբանական հասկացությունների մեջ՝ առաջ բերելով մի շարք հավատալիքներ կապված որևէ ցանկապատի, աշտարակի, պատվարի կամ ամբողջ քաղաքի կառուցման դիցաբանական նշանակության հետ³:

Մի ուրիշը գտնում է, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք ոչ միայն հաճախակի կրկնվող ու փոփոխվող դիցաբանական թեմայի, այլև՝ բանավոր ու գրավոր ավանդությունների մեջ պահպանված արյունալի ու բարբարոսական մի սովորույթ-ծեսի հետ, որը ծագած լինելով վաղնջական ժամանակներում, գոյատևել է նաև հետագա դարերում՝ հասնելով մինչև նոր ժամանակները: Դա մի ծես է, որի նպատակն է եղել զոհաբերության միջոցով հայցել երկրային ոգիների պատարագներ կամ էլ իրեն իսկ զոհի հոգին կերպարանափոխության միջոցով վեր ածել հովանավոր-դեմոնի⁴:

Մի երրորդ գիտնականի կարծիքով բերդերի, կամուրջների, պարիսպների հիմքում կամ պատաշարի մեջ կույս աղջիկներին (ծնողների միևնույն զավակներին) կենդանի-կենդանի թաղելու սովորությունը Ասիայի ու Եվրոպայի բազմաթիվ ժողովուրդների մոտ ոչ այլ ինչ է, բայց եթե ազոտ մի հիշողություն ալեսր հնությունից մնացած մարդկային զոհաբերությունների մասին⁵:

¹ Տե՛ս Драгоманов М., Малорусские вароудные предания и рассказы, Киев, 1876, էջ 246:

² Տե՛ս Тэйлор Э., Первобытная культура, М., 1939, էջ 60—62:

³ Տե՛ս Буслаев Ф., Русская народная поэзия, СПб., 1861, էջ 303:

⁴ Тэйлор Э., Первобытная культура, М., 1939, էջ 61—62:

⁵ Սամուելյան Խ., Հին Հայաստանի կուլտուրան, հատ. 2, Երևան, 1941, էջ 315:

Գրականության մեջ արտահայտվել է նաև այն տեսակետը, ըստ որի բերդերի, կամուրջների, աշտարակների ու այլ շինությունների հիմքի կամ պատերի մեջ կենդանի թաղված մարդկանց մասին տարբեր ժողովուրդների մոտ պատմվող ավանդություններում առկա նմանությունները փոխառության հետևանք են:

Այդ տեսակետի արտահայտությունն է մեզանում այն բացատրությունը, որ տվել է հայ նշանավոր գիտնական-ճարտարապետ Թ. Թորամանյանը՝ Ռուսինիայի Արճեշ քաղաքի եկեղեցին կառուցող Մանոլ ճարտարապետի և Վասպուրականի Աղթամար կղզու ծովային պարիսպների հեղինակ հայազգի Մանվել ճարտարապետի մասին պատմող ավանդությունների մեջ եղած նմանությունը:

«Արդյո՞ք դիպվածական է այս նույն ավանդության գտնվելը իրարմե անհունապես հեռու երկրներու մեջ»,—գրում է Թորամանյանը, և անմիջապես պատասխանում է. «Անշուշտ ոչ: Ամենայն հավանականությամբ Հայաստանի անբնդհատ գաղթականություններու միջոցով այս ավանդությունը հասեր է մինչև Ռուսինիա: Երբևիցե հետադարձ գաղթականության հոսանք չէ եղած, որ պահ մը մտածենք, թե Ռուսինիայեն դեպի Հայաստան եկավ:

Գնդարվեստական ոճերու պատմագիր Barberot, Ռուսինիայի Արճեշի եկեղեցվո մասին խոսած ժամանակ, արդեն ժամանակագրական շփոթություն մը կգտնե եկեղեցվո շինության և ավանդության մեջ մատնանշված իշխանին նկատմամբ:

Եկեղեցին շինվեր է 1513—1521 թվին, Negru Voda անուն իշխանի մը ձեռքով: Այս իշխանն ապրած է 1250-ին, այսինքն եկեղեցվո շինութենեն 268 տարի առաջ: Ուրեմն նախքան եկեղեցվո շինությունը, ավանդությունը շատ կանուխեն գոյություն ունեցեր է Ռուսինիայի, մեջ, որ գլխավոր գիծ մըն է հայոց գաղթականության: Վասպուրականի Սենեքերիմ թագավորի ժամանակակից Վասիլ Բ. կայսրն է, որ հայերու մեծ գաղթականություն մը տարավ Մակեդոնիա, որուն մասին վերև տեսանք Ստեփաննոս Ասողիկի վկայությունը: Կարելի է, որ նույնիսկ այդ Վասպուրականի գաղթականության մեկ հատվածն էր, որ Վասիլ Բ. գաղթեցուց, որոնց մեջ, անշուշտ, կգտնվեին Հայաստանցի արճեշցիներն ալ:

Արդյոք կապ չունի՞ այս ավանդությունը Հայաստանի Արճեշին հետ և Արճեշով ալ շատ մոտիկ Աղթամար կղզվույն մեջ շինված ծովային պարիսպներուն հետ, որ ըստ Թովմա Արծրունվո, գերմարդկային

հրաշքներ էին ճարտարապետ Մանվելի ձեռքով իրագործված: Արդյոք Հայաստանի, մասնավորապես Վասպուրականի մեջ համբավ ու հռչակ ունեցող Մանվելը չէ՞ Ռումանիայի Արճեշի ավանդության պատմած Մանոյր: Ժամանակագրական դեպքերը և ավանդության պատմվածի նմանությունները այնչափ համոզիչ են, որ ես կուզեմ հավատալ, թե վասպուրականցի հրաշագործ Մանվելն է քանի մը դար հետո Ռումանիայի ժողովրդի բերնին մեջ Մանոյրի փոխված: Այս մասին քննությունը հառաջ տանիլ և ավելի լուսաբանել կթողում մասնագետներուն»¹:

Վերևում շարադրված տեսակետներից հավանականն ու բնորոշին, մեր կարծիքով, առաջին երեքն են: Այդ տեսակետները ճիշտ լուսաբանություն տալով խնդրո առարկա ավանդությունների գանազան ազգերի տարբերակ-զուգահեռների մեջ առկա նմանությունների փաստին, ոչ միայն շեն հակասում իրար, այլ քստ էության յուրովի լրացնում են մեկը մյուսին:

Գալով Թորամանյանի առաջ քաշած ուշագրավ վարկածին (չորրորդ տեսակետ), ապա վերջինս, մեր կարծիքով, հավանական ու խելամիտ է միայն իր այն մասով, որ վերաբերում է հայկական ավանդության Արճեշ և Մանվել անունների ուսմինական ավանդության մեջ ներթափանցելու հնարավորությանը (այդ են հաստատում հայերի գաղթի վերաբերյալ բերված կուլտուր-պատմական փաստերը): Նույնը չի կարելի ասել, սակայն հիշյալ վարկածի այն մասի վերաբերյալ, որ վերաբերում է ուսմինական ավանդության հայկականից սերվելուն:

Համաշխարհային ջրհեղեղի, շղթայված գյուցազնի և շինվածքների շարվածքի մեջ կենդանի թաղված գոհի վերոհիշյալ ավանդությունների նման միջազգային բնույթի ստեղծագործություններ են նաև՝ արևի, լուսնի ու հարդագողի, ցորենի, լոշտակի, արջի ու շղջիկի ծագման, անեծքով քար դարձած ժլատ ու շար մարդկանց մասին պատմող և շատ ուրիշ հայկական ավանդություններ²: Վերջիններիս ավելի կամ պակաս մոտիկ զուգահեռները մենք գտնում ենք՝ հնդիկների, չինացիների, հրեաների, հույների, գերմանացիների, ռուսների, լատիշների, վրա-

¹ Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. II., Երևան, 1942, էջ 76—77:

² Տե՛ս «Ավանդապատմի» մեջ № № 1—4, 32, 63, 83, 154 Բ, 162, 164, 177—179, 286 Ա—Գ, 201, 203, 331, 337, 354, 359, 885 ավանդությունները:

ցիների, մենգրելների, շեչենների, օսերի, թաթարների¹ և արևելյան ու արևմտյան բազմաթիվ այլ հին ու նոր ցեղերի, ժողովուրդների ու ազգերի մոտ:

Քերված օրինակ-փաստերը և կուլտուր-պատմական տեսանկյունից նրանց տրված համեմատական լուսաբանությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ քննության առարկա հայկական ավանդությունները, ուրիշ ժողովուրդների նույնատիպ ավանդությունների հետ, արդյունք են մի կողմից մարդկային մտածողության բովանդակությունը որոշող բնա-ֆիզիկական և սոցիալ-տնտեսական կյանքի նման պայմանների, մյուս կողմից՝ մարդուն հատուկ զուգորդական մտածողության ընդհանուր օրենքների: Հանդիսանալով առարկայական իրականության անդրադարձումը, մարդկային մտածողությունը տարբեր երկրներում անցնելով տնտեսական և հասարակական զարգացման հար և նման փուլեր, արտաքին աշխարհի նկատմամբ առաջ է բերում նույնօրինակ վերաբերմունք: Այդ է պատճառն ահա, որ պատմական, հասարակական և գեղարվեստական զարգացման նույն ուղիով անցած մարդկանց ու ժողովուրդների ավանդությունները (և ոչ միայն ավանդությունները) հանդիսանալով նույն այդ մարդկանց ու ժողովուրդների ինֆորուսյն ստեղծագործությունները, նման են իրար և իրենց գաղափարական բովանդակությամբ և թե իրենց մոտիվներով, սյուժեներով, թեմաներով ու կերպարներով, շնայած այն հանգամանքին, որ նրանք հաճախ իրարից բաժանված են աշխարհագրական անանցանելի տարածություններով, ժամանակի առումով բազմաթիվ դարերով, երբեմն նույնիսկ հազարամյակներով: Աշխարհով մեկ տարածված այդ ավանդությունների նմանությունները ունեն հիմնականում տիպաբանական բնույթ: Նրանց բոլորի հիմքը հասարակական գիտակցության զարգացման և իրականության գեղարվեստական ընդհանրացման միևնույն մակարդակն է:

¹ Տե՛ս Դրագսманов М., Малорусские народные предания и рассказы, Киев, 1876, էջ 14, 56 (№№ 10, 39), Миллер В., Осетинские этюды, СПб, 1881, մասն 1, էջ 157, Քիշմիշյան Ա., Բալթերի մեծարանքը, թիֆլիս, 1891, էջ 24, Афанасьев А. И., Народные русские легенды, Казань, 1914, էջ 5, Индийские сказки, пер. Клягиной и Крашениникова, М., 1956, էջ 19—20, Мифологический словарь, Л., 1956, էջ 76: Анцелане А., Латвийские народные предания, Рига, 1952, էջ 68, 77, 80—81, Grimm Br., Kinder und Hausmärchen, մասն 2, №194, Сборник материалов для описания местностей и племен Кавказа, հատ. [2, րամ. 2, էջ 140, հատ. 26, րամ 2, էջ 9, րամ. 3, էջ 246—253:

Եկամուտ ավանդություններ:—Հայկական ավանդությունների մեջ առկա են նաև այնպիսի ստեղծագործություններ, որոնք իրենց ծագումով կապված են հայ ժողովրդի հետ էթնիկական, կրոնական, տնտեսական, մշակութային և ռազմա-քաղաքական շփման մեջ գտնվող ցեղերի ու ազգերի ավանդությունների հետ: Եվ դա բնական ու հասկանալի է:

Ոչ մի ժողովրդի մշակույթ չի զարգանում ու բարգավաճում բացարձակ անկախ ու մեկուսի, առանց ուրիշ ժողովուրդների հետ փոխազդեցության ու կապերի: Պատմական որոշակի փոխհարաբերությունների ու շփման պայմաններում նրա ազգային մշակույթի (հավատալիքներ, առասպելներ, ավանդություններ և այլն) ու լեզվի բազմաթիվ տարրերը մուտք գործելով ավյալ ժողովրդի մեջ և համապատասխան կերպարանափոխության ու ստեղծագործական վերամշակման ենթարկվելով նրա մտաշխարհում, իրենց խորը արմատներն են բռնում այնտեղ:

Հայերը ապրելով Հայկական լեռնաշխարհում՝ Արևելքն ու Արևմուտքն իրար հետ կապող մեծ ճանապարհի վրա, վաղնջական դարերից սկսած մոտիկ հարաբերություններ է ունեցել ինչպես Կովկասի, այնպես էլ Միջագետքի ու Փոքր Ասիայի բազմաթիվ ժողովուրդների հետ (խեթեր, ուրարտացիներ, ասորեստանցիներ, բաբելացիներ, եբրայեցիներ, իրանցիներ և այլն): Այդ հանդամանքի շնորհիվ դարերի ընթացքում հիշյալ ժողովուրդների նյութական և հոգևոր մշակույթի (ճարտարապետություն, քանդակագործություն, խեցեգործություն, բանահյուսություն, դիցաբանություն, գիր, գրականություն և այլն) բազմաթիվ ստեղծագործություններ, այդ թվում նաև նրանց բանավոր ավանդություններն ու ավանդական գրույցները իրենց բովանդակությամբ, գործող անձերով, հերոսներով, սյուժեներով ու մոտիվներով նկատելի ազդեցություն են թողել մեր ժողովրդի վրա: Այդպիսի ավանդություններից են.

Տուրք-անգեղի ավանդությունը (№ 804): Արագիլ թոշունի վերաբերյալ Հայաստանում տարածված հնօրյա հավատալիքների ու ավանդությունների նման¹, այս ավանդությունը ևս խեթական ծագում ունի և հանդիսանում է խեթերի Տարկու, Տարբու կամ Տուրգու անունով բուսականության և պաղաբերության աստծու պաշտամունքի յուրահատուկ մի արձագանքը մեզանում: Փոքր Ասիայում և այլուր շատ տարածված այլ

¹ Գալանցյան Գ., խեթական մի առասպելի մասին, Երևան, 1945:

պաշտամունքը ժամանակին անցել է նաև հարավային Հայաստան՝ իր հետքերը թողնելով Եփրատից մինչև Վանա լիճը ձգվող տարածության վրա:

Վերոհիշյալ հանգամանքը, հենվելով էթնո-կուլտուրական և պատմա-լեզվաբանական համապատասխան տվյալների վրա, հավաստել ու հաստատել են մի քանի հեղինակավոր հայագետ-խեթագետներ: Ահա թե ինչ է գրել այդ առթիվ Ն. Ադոնցը: «Հայտնի է, որ հաթյան (իմա՝ խեթական—Ա. Ղ.) ցեղի բազմաթիվ աստվածների մեջ առանձնապես հռչակված էին երկուսը, իբր ազգային աստվածներ, Տարկու և Տիշուպ, tarqu, tisup. Երկուսն էլ տարածված պաշտամունք էին ամբողջ Առաջավոր Ասիայում: ... Ուշագրություն արժանին այն է մանավանդ, որ հաթյան աստվածության անունը պատահում է Հայաստանի այն մասում, ուր բնկնում է նաև Անգեղ գավառը, հին նայիրի աշխարհում: Ազգային ավանդությունը, կապելով Տորբը Անգեղ աստվածության հետ, մեզ հիմն է տալիս կարծելու, որ Տորբը ոչ այլ ինչ է, եթե ոչ հինավուրց Տարկուն: ... Մեկնության բնավ կարոտ չէ, թե ինչու հեթանոսական հզոր աստվածը քրիստոնեական շրջանում պահպանվել է հրեշավոր պատկերով: Կրոնական մտքի նույնօրինակ բեկման արդյունք է դերանը, որ արիական լուսավոր աստվածության գաղափարից դարձել է շարունակական և խավարի ոգի»¹:

Ադոնցի կարծիքը պաշտպանել և լրացուցիչ փաստերով հաստատել է նաև Աս. Խաչատրյանը²:

Խիկար Իմաստունի ավանդությունները (№ 802): Խիկար Իմաստունին էվիրված ավանդությունների առկայության փաստը հայ իրականության մեջ բացատրվում է այն մոտիկ հարաբերությամբ, որ ունեցել են հայերը մեր թվականությունից դարեր առաջ Ասորեստանի բնակիչ արամեացիների հետ, կրելով նրանց կուլտուրական ուղղեցությունը: Պակաս կարևոր դեր չի խաղացել տվյալ գործում նաև այն հանգամանքը, որ Հայաստանի սահմանակից ասորարևակ գավառները մասամբ մտել են մեր երկրի մեջ, և հետագայում հիշյալ գավառների աստ-

¹ Ադոնց Ն., Տորբ աստված հին հայոց, «Հուշարձան», դրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 393:

² Խաչատրյան Աս., Տորբ Անգեղյա հայ հին մատենագրության և բանասիրության մեջ, «Տեղեկագիր դիտության և արվեստի ինստիտուտի», № 5, Երևան, 1931, էջ 4 և հավ.:

րի բնակչության որոշ մասը հայերի քաղաքական ազդեցությանը ենթարկվելով, խառնվել է վերջիններիս հետ:

Խնդրո առարկա ավանդությունները Հայաստանում տարածվել են «Խիկարի պատմություն» կոչված ասորա-բաբելական հայտնի գրական հուշարձանի ազդեցությամբ և հանդիսանում են նրա բանահյուսական յուրօրինակ արձագանքները: Որ այդ հուշարձանը իրոք լայն ժողովրդականություն է ունեցել Հայաստանում, ցույց են տալիս՝

1. Աշխարհի զանազան գրապահոցներում և առաջին հերթին ուսմանից շատ Երևանի Մեսրոպ Մաշտոցի տնվան Մատենադարանում եղած 14, 17, 18 և 19-րդ դարերի նրա մի քանի տասնյակ հայերեն գրչագիր օրինակները՝ «Խրատք Խիկարայ Իմաստնոյ» և այլ խորագրերով:

2. Նրա բազմաթիվ հայերեն հրատարակությունները լույս տեսած զանազան ժամանակ (1708, 1731, 1792, 1820, 1834, 1857, 1898 թթ.) տարբեր վայրերում (Պոլիս, Թիֆլիս, Լոնդոն և այլն):

3. Նրա հերոսի մեծ համբավը Հայաստանի տարբեր շրջանների հայերի մեջ, ուր խելոք մարդուն բնորոշելու համար հաճախ ասել են՝ «Խիկարի պես խելացի խրատներ կուտա», «Թե հերը Սողոմոն Իմաստունն է, ազեն Խիկարի խելքն ունի» և այլն¹:

Ազեխանդր Մակեդոնացու ավանդությունները (№ 744): Ինչպես շատ արիշ ժողովուրդներ, այնպես էլ հայերը բազմաթիվ ավանդություններ են պատմել Աղեքսանդր Մակեդոնացու մասին: Այդ ավանդությունները մեզանում տարածվել են արևելյան տարբեր ժողովուրդների և մասնավորապես պարսիկների միջոցով, թե այն ժամանակ, երբ Պարսկաստանի մեջ մտնող մյուս երկրների հետ Հայաստանը ևս գտնվում էր Մակեդոնյան իշխանության տակ, և թե հետագա մի շարք դարերում, երբ մեր երկիրը աշխարհադրոսեն ու քաղաքականապես մոտիկ հարաբերության ու կապի մեջ է եղել Պարսկաստանի հետ:

Աղեքսանդրյան ավանդությունների ստեղծմանն ու տարածմանը մեզանում զգալի ազդակ են հանդիսացել նաև անտիկ աշխարհի մի շարք հեղինակների՝ մեծ աշխարհակալի կյանքին ու ուղեգրական սրբաբանքներին նվիրված երկերը: Վերջիններս ժամանակին թարգմանվել և օգտագործվել են միջնադարյան հայ հեղինակների պատմագրական

¹ Ղանալանյան Ա., Հայկական առածների հնագույն գրավոր սկզբնաղբյուրները (տե՛ս «Բաների Մատենադարանի», 1958, № 4, էջ 31—33):

գործերի մեջ, իսկ այնտեղից էլ անցել ու տարածվել են ժողովրդի լայն խավերում: Այս տեսակետից հիշարժան է հատկապես «Աղեքսանդրի պատմություն» այն հայերեն հին թարգմանությունը, որի հեղինակությունը վերագրվում է Կալիսթենես Ուլյունթացուն, և որը մեղանում հայտնի է Սուա Կալիսթենես անունով:

Լողման հեֆիմի ավանդությունները (№ 803): Հայերից բացի, նմանօրինակ ավանդություններ ու ավանդական դրույցներ շատ տարածված են նաև բազմաթիվ ուրիշ արևելյան ազգերի մեջ (արաբներ, պարսիկներ, միջին ասիական ժողովուրդներ, թուրքեր և այլն): Դժվար է որոշակի ասել, թե տվյալ ավանդությունները ո՞րտեղից են մուտք գործել Հայաստան, քանի որ տակավին վերջնականապես պարզված չեն ոչ Լողմանի ազգային պատկանելության, ոչ էլ նրա ապրած ժամանակի հարցերը: Ըստ մի վարկածի՝ Լողմանը կամ Լոկմանը նուրիացի կամ եթովպացի գերի է եղել, որն ապրել է Դավթի ժամանակներում: Կուրանի մեկնաբան Աբու-Սաուդը գտնում է, որ նրա հայրը (Բաուրան) Հորի մոտիկ ազգականն էր: Ըստ մի այլ վարկածի Լողմանը Սողոմոն Իմաստունի մակդիրն է արաբներն: Ոմանց կարծիքով նա դերձակ է եղել, ուրիշները նրան համարել են հյուան, մարգարե կամ բժիշկ: Կան պնդողներ էլ, թե նա առաջին արաբ առակախոսն է և Եզովպոսին վերագրված առակները իբր թե Լողմանի առակներն են՝ թարգմանված հունարենի: Ուրիշները գտնում են, որ Լողմանի առակները կապված են Սինտիպի առակների հետ և ըստ այդմ պետք է դասվեն «թագապիկ սյուժեների» կարգը, և այլն²:

Վերը նշված բոլոր վարկածներից առավել հավանական է համարվում այն վարկածը, որի համաձայն Լողմանն ու նրան վերագրվող բանահյուսական նյութերը (ավանդություն, առակ, տոած և այլն) ծնունդ

¹ Տե՛ս «Պատմություն մեծի աշխարհակալին Աղեքսանդրի Մակեդոնացույ», Վենետիկ, 1842: Տաշյան Հակ., Ուսումնասիրությունք. Սուլյն-Կալիսթենեսայ վարուց Աղեքսանդրի վրեննա, 1892, էջ 173—179: Անադյան Հ., Հայկական մատենագիտություն, հատ. Ա., Երևան, 1959, էջ 566—574:

² Տե՛ս Aemilio Roedigero, Locmani fabulae quae circumferuntur... Halis Saxoniæ, 1830, Ch. Schier, Fables de Loqman surnomme le Sage... Leipzig, 1839, В. М. Будкай и Локман, Индийские басни и сказки (перев. на русский с француз. перевода Галланд), Киев, 1876, Rene Basset, Loqman berbere, Paris, 1890, Jos. Derembourg, Fables de Loqman le sage, Berlin-London, 1890, V. Chauvin, Bibliographie des ouvrages arabes ou relative aux arabes... 1898; С. Н. Той, The Loqman legend, Journal of the American Oriental Society, XIII, 1899.

են արաբական միջավայրի: Այս հիման վրա էլ կարելի է ենթադրել, որ Լողմանի մասին Հայաստանում տարածված ավանդությունները հայերը վերցրել են արաբներից, որոնց հետ նրանք, ինչպես հայտնի է, բաղաբական, տնտեսական, կենցաղային և կուլտուրական բավական սերտ կապերի ու շփման մեջ են եղել 7—10-րդ և հետագա դարերում: Դրա ապացույցներից մեկն էլ արաբների մոտ այնքան տարածված Լոկման անունն է հեքիմ բառի հետ, որը բուն արաբերեն բառ է և նշանակում է բժիշկ: Վերջինս նույն նշանակությամբ հայերին ծանոթ է եղել տակավին միջին դարերից¹:

Լողմանյան ավանդությունների Հայաստանում տարածվելու գործում շի բացառված նաև եթովպացի, հրեա, պարսիկ և մուսուլմանական զանազան ժողովուրդների ազդեցության հնարավորությունը, ժողովուրդները, որոնց հետ զանազան դարաշրջանում նույնպես շփման առիթ են ունեցել հայերը:

Բիրլիական ավանդություններ (№ № 788—796): Սրանց ներթափանցումը հայ իրականության մեջ կատարվել է Մեսրոպ Մաշտոցի կողմից հայերեն նշանագրերի շտեղծումից հետո, երբ քրիստոնեական ուսմունքի տարածման նպատակով մեղանում հայերենի է թարգմանվել Ասավածաշունչը և եկեղեցական հայերի միջոցով սկսել է ամենօրյա համառ ու տեական պրոպագանդան ենթարկվել ժողովրդի մեջ: Այդ ճանապարհով ահա, դարերի ընթացքում մոտիկից ծանոթանալով Ասավածաշնչի բովանդակությանը, Հայաստանի հասարակական լայն խավերը հետզհետե անգիր են անում նրա մեջ տեղ գտած հին երրայեցիների այն ավանդությունները, որոնք հասկանալի ու հարազատ էին իրենց բարոյական հասկացություններին ու ճաշակին, և որոնց մեջ վեր էր հանվում իմաստությունը, հանճարը, ճշմարտությունը, արդարությունը, աշխատանքը, սերը, ազգերի համերաշխությունը, խաղաղությունը, ընտանեկան հավատարմությունը, բարոյականությունը, դատապարտվում էր՝ անիրավությունը, չարիքը, սուտը, կեղծիքը, խարդախությունը, թշնամանքը, անառակությունը, ամբարշտությունը, շահագործումը, հարստահարությունը և այլն:

Հին կտակարանից սերող այդօրինակ ավանդություններից են մեղանում՝ Ադամի և Եվայի, Նոյ նահապետի, Կայենի ու Աբելի, Հայր Աբրահամի, Մովսես մարգարեի, Դավիթ մարգարեի, Սողոմոն Իմաս-

¹ Հմմտ. Март Н. Я., Сборники притч Вараана, т. 1, СПб., 1899, էջ 261.

տունի, Եղիա մարգարեի, Հոր Երանելու և նմանների մասին պատմող ավանդություններն ու ավանդական գրույցները¹:

Ժողովրդական ավանդությունների ուղղակի աղբյուր հանդիսանալուց բացի, «Աստվածաշունչը» դրդում է ավելի հայ ավանդախոսներին բիբլիական ծանոթ նյութերի հիման վրա ստեղծելու իրենց նոր ավանդությունները: Այդպիսի ստեղծագործություններից են մեզանում նույնահասակների, Սողոմոն Իմաստունի, Ուռնայի եղբայրների և այլոց մասին պատմված ավանդական գրույցների մի շարք տարբերակները, որոնք միայն իրենց անունով և հեռվից-հեռու են հիշեցնում հիշյալ կերպարների մասին Աստվածաշնչի մեջ եղած մեզ ծանոթ ավանդություններին:

Բիբլիական համապատասխան նյութերից հար և նման եղանակով օգտվել են նաև մեր միջնադարյան առակագիրները (Վ. Այգեկցի, Մ. Գոշ), որոնք փոխ առնելով Աստվածաշնչից վերջինիս մեջ եղած այս կամ այն առակը, դարձվածքը, մոտիվը, դրանց հիման վրա ստեղծել են իրենց ինքնուրույն գրական երկերը²:

Պարականոն ավանդություններ (№ № 788 Ա, Ը, Թ, 789 Ա, Գ, Դ, Ե, 792 Բ, 793, 794 Գ—Ը, 795 Ա, Բ, 799 Ա—Ե, 801 Գ—Է): Այս անունով ենք կոչում Հայաստանում բավական լայն տարածում ունեցող այն ավանդությունները («Ադամն ու Ալլը», «Նույնահասակի պարտապանը», «Կնոջից խարված Սողոմոն Իմաստունը», «Ուռնայի կտլը» և այլն), որոնք սերում են այսպես կոչված պարականոն կամ արգելված գրքերի մեջ («Ադամգիրք», «Սողոմոն արքայի մասին», «Հիսուսի մանկությունը», «Աստվածածնի պատմությունը», «Եղիա մարգարեի պատմությունը» և այլն) տեղ գտած հին երրայեցիների և արևելյան ուրիշ ժողովուրդների համապատասխան ավանդություններից: Իրենց գործող անձանց մի մասով և բովանդակության առանձին մոտիվներով որոշ շափով հիշեցնելով բիբլիական ավանդություններին, պարականոն ավանդությունները հիմնովին տարբերվում են նրանցից իրենց աշխարհիկ սյուժեներով և հակահրոնական բովանդակությամբ ու սոցիալական միավաճուխյամբ: Այդ է պատճառն ահա, որ նրանք իբրև «հերետիկո-

¹ Տե՛ս Աստուածաշունչ մատենան Հին և Նոր կտակարանաց, Մնն., Բ—Ե, Ե—Ժ, Գ, Դ—Ե, ԻԲ, ԵԼԲ, Բ—Խ, Ա. Թագ., ԺԶ—Լ, Բ. Թագ., Ա—ԻԳ, Գ. Թագ., Ա—ԻԲ, Գ. Թագ., Ա—Գ, Թ, Ժ, Ա. Մնաց., ԻԱ, Յովր, Ա—Գ, ԺԵ, ԼԲ—ԼԷ, ԽԲ:

² Հմմտ. Март Н., Сборники притч Вардана, т. 1, СПб., 1899, էջ 394—395:

սական» նյութեր դուրս են մնացել Աստվածաշնչից և հալածվել են պաշտոնական եկեղեցու կողմից¹:

Հայտնի է, որ պարականոն կամ արգելված այդ գրքերը 7-րդ դարի վերջերից, ասորի, արաբ և հույն հեղինակների միջոցով տարածվել են ողջ արևելքի և բյուզանդական բնդարձակ պետության սահմաններում, այդ թվում նաև Հայաստանում, առանձնապես լավ ընդունելություն գտնելով աղանդավորների շրջանում, իբրև վերջիններիս քարոզած ուսմունքներին հարազատ ու համահունչ գրականություն:

Վկայաբանական և սրբախոսական ավանդություններ (№ № 603, 604, 665, 667, 688, 809—817): Այս շարքին են պատկանում զանազան սրբերի և եկեղեցական գործիչների (Սուրբ Սարգիս, Սուրբ Գևորգ, Գրիգոր Լուսավորիչ, Թադևոս առաքյալ, Հոսիփսիմե, Մարիանե և Վառվառե կույսեր, Հովհան Ոսկեբերան, Պետրոս Գետադարձ, Մծբնեցի Հակոբ հայրապետ և այլն) վերաբերյալ Հայաստանում պատմված ժողովրդական ավանդություններն ու ավանդական գրույցները, որոնց մեջ յուրովի պատկերված են հեթանոսական կրոնի և վերջինիս ներկայացուցիչների դեմ նրանց մղած պայքարն ու ոգորումները՝ հանուն նոր կրոնի: Հիշյալ ավանդությունների համար մեղանում սկզբնաղբյուրի դեղ են կատարել այլազգի ծագում ունեցող մի շարք վկայաբանական, վարքաբանական և սրբախոսական գրքեր, որոնք հին և միջին դարերում մեր հեղինակների կողմից հայերենի թարգմանվելով մուսաբ են գործել մեր եկեղեցական գրքերը («Ճաշոց», «Ճառնախոս», «Այսմավուրք» և այլն) և սրանց միջոցով տարածվել ժողովրդի մեջ²:

¹ Տե՛ս Անկանոն գիրք Հին և Նոր կտակարանաց, Վենետիկ, 1896, էջ 308—313, 317, 333—342, Անկանոն գիրք Նոր կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 91—99, 294—295, 354—355, Անասյան Հ., Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, էջ XXXIX—XLIII: Հայկական պարականոն ավանդությունների մեջ կան և այնպիսիք, որոնց զուգահեռները բացակայում են մեզ հայտնի տպագիր ու ձեռագիր պարականոն գրքերի մեջ: Գրանք ամենայն հավանականությամբ հայերը փոխ են առել հին երբայեցիներից և ասորիներից, որոնց հետ նրանք մտտիկ հարեանության ու շփման մեջ են եղել քրիստոնեությունն ընդունելուց առաջ:

² Տե՛ս Աիակատար վարք և վկայաբանություն սրբոց, ի Հ. Մկրտիչ վարդապետի Ազգերան, Վենետիկ, 1811, հատ. Բ, էջ 3—44: (Սարգիս զորավար), հատ. Գ, էջ 14—58 (Թադևոս առաքյալ), հատ. Զ, էջ 120—131 (Մարիանե կույս), էջ 165—207 (Սուրբ Գևորգ), էջ 465—485 (Վառվառե կույս), հատ. Ը, էջ 356—422 (Հովհան Ոսկեբերան), հատ. Ժ, էջ 5—54 (Սուրբ Հակոբ) և այլն:

Եկամուտ ավանդությունների տեղաչնացումը: Եկամուտ ավանդու-
թյունները բանավոր ձևով անցնելով բերանից-բերան ու սերնդից սերունդ
և դարերի ընթացքում արմատ բռնելով հայկական հողի վրա, ներծծել
են իրենց մեջ մեր ժողովրդի ապրած միջավայրի ու կյանքի բնորոշ
դժերը, ենթարկվել են ստեղծագործական վերամշակման և տեղային
գույն ու երանգ ստանալով ձուլվել են բուն հայկական ավանդություն-
ների հետ: Տեղային ու ազգային է դարձել, ամենից առաջ, այդ ավան-
դությունների ձևը (լեզու, ոճ, պատմելու եղանակ և այլն): Տեղային ու
ազգային է դարձել, այնուհետև, նրանց մեջ վերարտադրված բնաշ-
խարհը (սարեր, ձորեր, քարեր, գետեր, աղբյուրներ, բույսեր, կենդա-
նիներ, դավաններ, քաղաքներ, գյուղեր, բերդեր, ամրոցներ, վանքեր և
այլն): Տեղայնացվել ու ազգայնացվել են հիշյալ ավանդությունների
մեջ հանդես եկող դեպքերի ու դեմքերի (ուղմա-քաղաքական անց ու
դարձեր, պետական, գինվորական, մշակութային, եկեղեցական գոր-
ծիչներ) մի ղզալի մասը: Տեղային ու ազգային նկարագիր է բնորոշել
զգալի շափով և նրանց բնոճանուր մթնոլորտը (գործող անձանց վար-
քըն ու բարքը, կենցաղն ու հավատալիքները, աշխարհայացքն ու հո-
գեբանությունը, ձգտումներն ու ակնկալությունները):

Տեղայնացված եկամուտ ավանդությունների բնորոշ օրինակներ են.

1. Աղեփաճղը Մակեդոնացուն նվիրված ավանդությունների հայկա-
կան տարբերակներից մեկը (№ 587), ուր եկամուտ ծագում ունեցող ավան-
դության հիմնական բովանդակությունը (Արաքս գետի վրա Աղեփաճղի
յողմից կամուրջ կառուցել տալը) կապվել է հայոց թագավորի, ջուղա-
լեցի հայ մեծահարուստների, վարպետ նկարիչների և փորձված ալգե-
պանների անվան ու գործերի հետ:

2. Խիկար Իմաստունին նվիրված ավանդությունների հայկական մի
տարբերակը (№ 802Բ), որի մեջ Խիկարի ուսուցիչն իր աշակերտին աշխա-
տում է սովորեցնել հայերեն այբուբենը:

3. Լոյման հեֆիմին նվիրված ավանդությունների հայկական տարբե-
րակներից մեկը (№ 803Ը), ուր պատմվում է արևելյան համբավավոր
բժշկի ու իր աշակերտի Շիրակի դաշտում հայ հնձվորների հետ ունեցած
հանդիպման մասին, և մի շարք ուրիշ ավանդություններ (տե՛ս № №
676Ա, 725Ա, 801Բ, 813Գ և այլն):

ԱՎԱՆԳԵՊԵՏՈՒՄ

Հարց պիարան քո և պատմեցին քեզ,
և ծերս քո, և ասացին քեզ:

(Ք. սրբանց: 18)

**ՍՏՈՒԴԱԲԱՆԱԿԱՆ-ԲԱՑԱՏՐԱԿԱՆ
ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ**